

Քաղաքացիական իրավունքը դատավարության տեսանկյունից

Սույն ձեռնարկում քննարկվում են քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական մի շարք ինստիտուտներ՝ դատարաններում դրանց կիրառման տեսանկյունից: Փորձ է կատարվել քաղաքացիական ինստիտուտներն ուսումնասիրել ապացուցման ենթակա փաստերի առանձնացման, ապացուցման բեռի բաշխման տեսանկյունից:



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



Քաղաքացիական իրավունքը դատավարության տեսանկյունից

(հոդվածների ժողովածու)

Սույն հրապարակման մեջ տեղ գտած պնդումները և վերլուծությունները բացառապես հեղինակներինն են և չեն ներկայացնում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության կարծիքը կամ քաղաքականությունը: Բացի այդ, սույն հրապարակման որևէ մաս չպետք է ընկալել որպես որոշակի գործերով տրամադրվող իրավական խորհրդատվություն: Հրապարակումը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի առատաձեռն օժանդակության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով (USAID): Նյութի բովանդակության համար պատասխանատու է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության «Իրավունքի գերակայության նախաձեռնություն» ծրագիրը և այն կարող է չհամընկնել ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

Խմբագիր և շարքի հեղինակ՝ Արամ Օրբեյան, ի.գ.թ.

© Արամ Օրբեյան և հեղինակներ, 2013

© ABA ROLI, 2013

Նախարան

Բավականին հաճախ են հանդիպում բանավեճեր քաղաքացիական իրավունքը, և ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը կիրառող մարմինների մասին բանավեճեր: Առաջին հայացքից նշված փաստաթուղթը կարգավորելով քաղաքացիական հարաբերությունները, տարածվելով մարդկային ամենօրյա գործունեության վրա: Սակայն ավելի խոր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը առաջնահերթ կերպով կիրառվում է ՀՀ ընդհանուր իրավասության դատարանների կողմից, քանի որ վեճ չլինելու դեպքում քաղաքացիական օրենսդրության նորմերի կիրառման կարիք չի լինում: Ավելին, տարօրինակ կլիներ, եթե միջանձնային հարաբերություններում քաղաքացիները մշտապես առաջնորդվեին օրենսգրքի դրույթներով (չեմ նշում նաև, որ ՀՀ քաղաքացիների մեծ մասը ծանոթ չի քաղաքացիական օրենսգրքի տեքստին):

ՀՀ-ում առկա քաղաքացիական օրենսդրությանը վերաբերվող հիմնական աղբյուրներում՝ դասագրքերում, հոդվածներում, հրապարակումներում հիմնականում քաղաքացիաիրավական ինստիտուտները ուսումնասիրվում են դատավարությունից դուրս, և ենթարկվում են աբստրակտ վերլուծության:

Սույն հոդվածների ժողովածույում փորձ է արվել մի շարք քաղաքացիաիրավական ինստիտուտներ ուսումնասիրել հենց դատավարության տեսանկյունից: Սույն ձեռնարկը պետք է հիմք ծառայի հետագայում նշված տրամաբանությամբ այլ, առավել համապարփակ ժողովածուների համար, որոնք էլ հետագայում կարող են վերածվել Քաղաքացիական օրենսգրքի համապարփակ մեկնաբանությունների – «փաստաբանի կա դատավորի սեղանի գրքի»

Հոդվածներում արծարծված կարիքները հեղինակների անձնական կարծիքներն են՝ հիմնված հետազոտությունների և ուսումնասիրությունների վրա: Ձեռնարկը խմբագրելիս մեր կողմից կատարվել են միայն որոշակի ոճային և ձևաչափային փոփոխություններ, պարունակական առումով սակայն որևէ փոփոխություններ չեն կատարվել: Վերլուծությունները զուտ գիտական հետազոտություն են, և չեն նախատեսվել որպես իրավական խորհրդատվություն, քանի որ յուրաքանչյուր գործ ունի իր առանձնահատկությունները և ուրույն հատկանիշները:

Այստեղ ավելորդ չեն լինի ՀՀ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը՝ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը անդրադառնալով ՀՀ դատական օրենսգրքի վերը նշված դրույթներին նշել է, որ «...յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, և Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտով տրված իրավական մեկնաբանության՝ համապատասխան գործով կիրառելիության հարցը լուծելիս դատարանները պետք է համադրեն նախադեպային գործի և քննության առարկա գործի էական նշանակություն ունեցող փաստերը: Այսինքն՝ դատարանը նախադեպային որոշմամբ տրված օրենքի մեկնաբանության՝ քննվող գործով կիրառելիության հարցը լուծելիս պետք է նախ առանձնացնի այն փաստական հանգամանքները, որոնք էական նշանակություն են ունեցել նախադեպային որոշման կայացման համար և այնուհետև դրանք համադրի քննվող քաղաքացիական գործի փաստական հանգամանքների հետ՝ որոշելով դրանց նույնական լինել կամ չլինելու հարցը»:

Այսպիսով, սույն ձեռնարկը ընդամենը փորձ է վերհանել առկա դատական պրակտիկան՝ առանձին քաղաքացիաիրավական ինստիտուտների մասով, սակայն ամեն մի դեպքում անհրաժեշտ է մասնագետի մանրակրկիտ ուսումնասիրությունը, և ես անձամբ կհորդորեմ համապատասխան դեպքերում հիմք ընդունելով նաև սույն ձեռնարկի դիրքորոշումները, այնուամենայնիվ ուղղակի ուսումնասիրել համապատասխան պրակտիկան՝ ուսումնասիրելով բուն դատական ակտերը:

Արամ Օրբեյան, ի.գ.թ.

Բովանդակություն

Ձեռքբերման վաղեմություն՝ դատական պրակտիկան և զարգացման միտումները	8
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի՝ ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքը, ընկերությունից դուրս գալու կարգը և իրավակիրառական խնդիրները	24
Կեղծ և շինծու գործարքներից բխող դատական վեճերի քննության առանձնահատկությունները քաղաքացիական դատավարությունում	43
Էլեկտրոնային հեռահաղորդակցության ոլորտում ծառայությունների մատուցման պայմանագրի հետ կապված վեճերի առանձնահատկությունները ՀՀ դատարաններում	63
Վարկային պայմանագրի հասկացությունը և առանձնահատկությունները	69
Գյուտի իրավական պահպանության առանձնահատկությունները	79
Գյուտի արտոնագրառունակության պայմանների բացահայտման առանձնահատկությունները	90
Զրպարտության գործերով քաղաքացիական դատավարության առանձնահատկությունները	104
Արբիտրաժային համաձայնությունը և կիրառելի իրավունքի ընտրությունը ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի և «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի համատեքստում	112
Դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ վերաքննիչ քաղաքացիական դատարանի լիազորության կիրառման իրավաչափության պայմանները	120

Ձեռքբերման վաղեմություն՝ դատական պրակտիկան և զարգացման միտումները

(«Քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի վերլուծություն»)

Գոռ Թորոսյան, ի.գ.թ.

Տարոն Սիմոնյան, ի.գ.թ., փաստաբան

Ձեռքբերման վաղեմությունը սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերից մեկն է: Օրենսգրքը ձեռքբերման վաղեմությանը նվիրել է ընդամենը մեկ հոդված (հոդված 187): Սակայն իրավակիրառ պրակտիկայի զարգացումը ցույց է տալիս, որ 187-րդ հոդվածի իրավակարգավորումն ավելի շատ հարցեր է առաջացնում, քան հոդվածն այդ հարցերին տալիս է պատասխաններ: Այդ պատճառով նշված հոդվածի վերաբերյալ տարբեր մեկնաբանություններ են տրվել ինչպես տեսության մեջ, այնպես էլ պրակտիկայում:

Օրենսգրքի 187-րդ հոդվածը սահմանում է, որ

«1. քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր է, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

2. Տիրապետման վաղեմությունը վկայակոչող անձը կարող է իր տիրապետման ժամկետին միացնել այն ժամանակը, որի ընթացքում այդ գույքին տիրապետել է այն անձը, որի իրավահաջորդն է ինքը:

3. Մինչև ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը գույքը որպես սեփականություն տիրապետող անձն իրավունք ունի պաշտպանել այն երրորդ անձանցից, որոնք գույքի սեփականատերը չեն և օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ հիմքով դրա նկատմամբ չունեն տիրապետման իրավունք:

4. *Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռքբերման վաղեմության ուժով գույքը ձեռք բերած անձի մոտ ծագում է այդ իրավունքի պետական գրանցման պահից:»*

Օրենսգրքի 187-րդ հոդվածին անդրադարձ կատարեց առաջին հերթին ՀՀ Սահմանադրական դատարանը 2006 թվականի նոյեմբերի 21-ի ՍԴՈ-667 որոշմամբ: Սահմանադրական դատարանը նախանշեց օրենսգրքի 187-րդ հոդվածի սահմանադրականության հիմնական դրսևորումները: Մասնավորապես, Սահմանադրական դատարանը նշեց, որ ձեռքբերման վաղեմությունը դասվում է սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակների թվին: Ձեռքբերման վաղեմության հիմքով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման համար պահանջվում է այդ գույքի՝ որպես սեփական ունեցվածքի բարեխիղճ, բացահայտ, անընդմեջ, տևական տիրապետում: Այս նախապայմանները բացառում են ուրիշի գույքը՝ որպես սեփականություն, ձեռք բերելու հնարավորությունը, որին տիրապետողը տիրապետում և օգտագործում է, մասնավորապես, վարձակալության, պահատվության կամ այլ պայմանագրերի հիման վրա, թեկուզև՝ բարեխիղճ, բացահայտ, անընդմեջ և երկարատև, սակայն իր պայմանագրային պարտավորությունների գիտակցմամբ՝ այն համարելով ուրիշի գույք և այն տիրապետելով ոչ որպես սեփական գույք: Այն կոչված է պաշտպանելու գույքի բարեխիղճ տիրապետողի իրավունքները: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187 հոդվածը չի խոչընդոտում սեփականության իրավունքի ճանաչմանն ու պաշտպանությանը: Այն նախատեսում է դատական կարգով գույքի բարեխիղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետողի՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման հնարավորություն:

Մեկ այլ կարևոր հանգամանք, որին անդրադարձավ Սահմանադրական դատարանը, օրենսգրքի 187-րդ հոդվածի համապատասխանությունն է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Սահմանադրական դատարանը հաստատեց, որ ձեռքբերման վաղեմության ինստիտուտի իրավական կարգավորումը համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկային այն առումով, որ այն նախապայմանները, որոնք

սեփականության իրավունքի երաշխիք են հանդիսանում, ճանաչվում և գնահատվում են դատարանի կողմից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշմամբ՝ այն ոլորտներում, որտեղ չարաշահումների պոտենցիալ հնարավորությունը մեծ է կոնկրետ իրավիճակներում, և դա կարող է ունենալ վտանգավոր հետևանքներ ընդհանրապես ժողովրդավարական հասարակության համար, սկզբունքորեն ցանկալի է, որպեսզի հսկողական գործառույթներն իրականացնի դատարանը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ օրենսգրքի 187-րդ հոդվածը համապատասխանում է և՛ ՀՀ Սահմանադրությանը, և՛ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային:

Սակայն իրավակիրառ պրատիկայի զարգացումը դեռ պատասխանելու էր բազմաթիվ այլ հարցերի, որոնք չէին գտել իրենց պատասխանները Սահմանադրական դատարանի որոշմամբ:

Այդ առաքելությունն իր վրա վերցրեց Վճռաբեկ դատարանը: Վճռաբեկ դատարանի որոշումները ձեռքբերման վաղեմության վերաբերյալ երկակի նշանակություն ունեցան օրենսգրքի 187-րդ հոդվածի իրավակիրառ խնդիրների լուծման համար.

1. Վճռաբեկ դատարանն այս հոդվածի շրջանակներում իրոք ապահովեց օրենքի միատեսակ կիրառում, քանի որ Վճռաբեկ դատարանի կողմից մեկնաբանության ստացան հոդվածում ամրագրված այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են բարեխղճությունը, բացահայտությունը, անընդմեջությունը, որպես սեփական գույք տիրապետելը, որոնք Վճռաբեկ դատարանի պրակտիկայում կոչվեցին ձեռքբերման վաղեմության վավերապայմաններ,
2. Վճռաբեկ դատարանի որոշումները հետագայում որոշակիորեն հակառակ ազդեցություն ունեցան օրենսգրքի 187-րդ հոդվածի միատեսակ կիրառության համար, քանի որ կոնկրետ գործերի քննության ժամանակ Վճռաբեկ դատարանի կողմից սահմանված չափանիշների կիրառումը ոչ միշտ էր նույն կերպ իրականացվում:

Նման պայմաններում անհրաժեշտ ենք համարում սույն հոդվածի շրջանակներում կենտրոնանալ Վճռաբեկ դատարանի պրակտիկային և դրա զարգացման գործընթացների վրա, որով կբացահայտվեն որոշակի օրինաչափություններ դատական պրակտիկայի զարգացման գործընթացում:

Ձեռքբերման վաղեմության վավերապայմանները:

Ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուսի կողմից այդ իրավունքի դադարման միջոց:

«Քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես, դրանք են՝

1. *տիրապետումը պետք է լինի բարեխիղճ:* Տիրապետման բարեխիղճությունը գնահատվում է գույքը անձի փաստացի տիրապետմանն անցնելիս: Գույքն անձի փաստացի տիրապետմանը պետք է անցնի առանց որևէ բռնության գործադրման: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի հիման վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն,

2. *փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը,* այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում,

3. *տիրապետումը պետք է լինի 10 տարի և անընդմեջ:* Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի

սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն,

4. տիրապետումը պետք է լինի բացահայտ, այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով:¹ Գույքի տիրապետումը կարող է իրականացվել ոչ միայն այնտեղ բնակվելով, այլ դրա խնամքի, որպես սեփական գույքի տիրապետելու այլ ձևերով:²

Վճռաբեկ դատարանի պրակտիկան այս հարցում բավականին բազմազան է, ուստի կոնկրետ օրինակներն առավել հստակ կդարձնեն վերջինին դիրքորոշումը և հարցերի այն շրջանակը, որոնց դատարանները պետք է ուշադրություն դարձնեն նմանատիպ գործեր քննելիս:

Ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչումը սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնական եղանակներից է: Օրենսդիրն ուղղակիորեն հնարավորություն է տալիս որոշակի պայմանների միաժամանակյա առկայության դեպքում անշարժ գույքի նկատմամբ ձեռք բերել սեփականության իրավունք հաշվի չառնելով դրա նախկին սեփականատիրոջ կամքը:

Միաժամանակ հարկ է նկատի ունենալ, որ ձեռքբերման վաղեմության վերաբերյալ ՀՀ քաղաքացիական և հողային օրենսգրքերի համապատասխան հոդվածները բավականին ընդհանուր ձևակերպումներ ունեն: Ուստի դրանց մեկնաբանության անհրաժեշտությունն անխուսափելի էր: Մասնավորապես, ըստ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման համաձայն՝ յուրաքանչյուր գործով դատարանները պետք է պարզեն բոլոր վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Օրինակ, գործերից մեկով Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով, որ Երևանի Ռաֆֆու փողոցի բնակիչներ Ավետիք և Էմմա Աղամիրյանների, Արաքսյա Հակոբյանի, Վուրդյա Սեյրանյանի, Աղվան Գրիգորյանի և Զիրավարդ Զազյանի 29.11.2006թ. հայտարարության համաձայն՝ 1964թ. Բաբկեն Նիկողոսյանը Սարիբեկ Սարիբեկյանին

¹ Տես թիվ ԵԿԴ/1221/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի ապրիլի 17 և թիվ ԵԱԲԴ/1272/02/08 գործով 2009 թվականի հուլիսի 24-ի որոշումները

² Տես թիվ ԱՎԴ1/0090/02/08 գործով 2009 թվականի հուլիսի 24-ի որոշումը

գյուղից տեղափոխվելու նպատակով Երևանի Րաֆֆու 51 հասցեի հողամասի որոշ հատված հատկացրել է նրան բնակելի տուն կառուցելու և բնակություն հաստատելու համար, իսկ «Շենքերի, շինությունների պահպանում և սպասարկում» ՓԲԸ-ի սեփական տնատիրությունը սպասարկող թիվ 12 տեղամասի 21.11.2006թ. տեղեկանքի համաձայն՝ Մանվել Սիրաբեկյանը 1964 թվականից բնակվում է Երևանի Րաֆֆու 51 հասցեում և Սարիբեկ Սարիբեկյանի կողմից կատարվել է 1994-1997թվականների, 1999 և 2004 թվականների համար Երևանի Րաֆֆու 51 հողի հարկի վճարումները, արձանագրեց, որ գույքի փաստացի տիրապետող՝ Մանվել Սիրաբեկյանը 10 տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ, անընդմեջ և որպես սեփական գույք տիրապետել է վեճի առարկա հողատարածքը, ինչի ուժով դրա նկատմամբ ձեռք է բերել սեփականության իրավունք:

Վճռաբեկ դատարանը տվյալ գործով առանձին անդրադարձավ ձեռքբերման վաղեմության պայմաններին առանձին-առանձին և նշեց, որ Սարիբեկյանի Աղազարյանի կողմից զբաղեցված հողատարածքի՝ 10 տարի *անընդմեջ* տիրապետումը ուղղակիորեն հիմնավորվում է Երևանի Րաֆֆու փողոցի բնակիչների և «Շենքերի, շինությունների պահպանում և սպասարկում» ՓԲԸ-ի սեփական տնատիրության հայտարարությամբ, որոնցում նշվում է Մանվել Սիրաբեկյանի կողմից 1964 թվականից գույքի տիրապետման փաստը, *բացահայտությունը* հիմնավորվում է տիրապետման մասին իրենց իրազեկվածությամբ (հողատարածքի սեփականատիրոջ և նույն փողոցի բնակիչների), այսինքն, տիրապետումը չի եղել հողատարածքի սեփականատիրոջ և այլ անձանցից գաղտնի եղանակով, իսկ *բարեխղճությունը* հիմնավորվում է այն հանգամանքով, որ հողամասի սեփականատեր Բաբկեն Նիկողոսյանը անձամբ է հրավիրել Մանվել Սիրաբեկյանին և հատկացնելով առանձին հողատարածք՝ թույլատրել այդ հողամասի վրա կառուցել բնակելի տուն: Այսինքն՝ հողատարածքի սեփականատիրոջ կողմից Մանվել Սարիբեկյանին տուն կառուցելու նպատակով հողամաս տրամադրելը, վերջինիս բավարար հիմք է տվել ենթադրելու, որ նա այդ հողատարածքը տիրապետելու է որպես սեփական գույք, իսկ Բաբկեն Նիկողոսյանը, թույլատրելով կառուցել տուն և 1991 թվականից սկսած (այն պահից երբ նա դարձել է հողատարածքի սեփականատեր) այն հետ չպահանջելով, փաստացի կատարել է

այնպիսի գործողություններ որոնք վկայում են իր կողմից այդ հողամասից հրաժարվելու մասին:

Ինչ վերաբերում է վեճի առարկա հողատարածքը՝ *որպես սեփական գույք* տիրապետելուն, ապա դա հիմնավորվում է այն հանգամանքով, որ Մանվել Սիրաբեկյանը մասնակցել է գույքի կառավարմանը՝ կառուցել է տուն, հոգ է տարել դրա պահպանման համար՝ վճարելով հողի հարկի գումարները:³

Վճռաբեկ դատարանը ձեռքբերման վաղեմության վավերապայմաններին անդրադառնում է այդպիսի յուրաքանչյուր դեպքում նշելով, որ ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելիս էական նշանակություն ունեն ոչ թե գույքի նկատմամբ այլ անձի իրավունքների վերաբերյալ ապացույցները, այլ դրա նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերողի կողմից տասը տարի և ավելի բարեխղճորեն, անընդմեջ ու բացահայտ օգտագործելու և տիրապետելու հանգամանքները:⁴

Բարեխղճությունը որպես ձեռքբերման վաղեմության վավերապայման

Դատական պրակտիկայում հիմնական խնդիրները կապված են լինում ձեռքբերման վաղեմության վավերապայմաններից մեկի՝ բարեխղճության հետ: Ուստի Վճռաբեկ դատարանի կողմից քննված բողոքներում ձեռքբերման վաղեմության վավերապայմաններից առավել վիճահարույցը բարեխղճությունն է: Մի կողմից դա անձին պետք է հիմք տա ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն: Բացի այդ կարևոր նշանակություն ունի նաև անձի կողմից գույքը որպես սեփականը տիրապետելը:

Վճռաբեկ դատարանն իր մի քանի որոշումներում մերժեց ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի պահանջը՝ հիմք ընդունելով բարեխղճության բացակայությունը:⁵

³ Տես թիվ 3-1435 (ՎԴ) գործով 2007 թվականի հոկտեմբերի 10 –ի որոշումը

⁴ Տես թիվ 3-1229(ՎԴ) գործով 2007 թվականի օգոստոսի 1-ի, թիվ 3-537 (ՎԴ) գործով 2007 թվականի մարտի 30-ի որոշումները

⁵ 3-184 (ՎԴ) 2008 թվականի մարտի 27, 3-433(ՎԴ) 2008 թվականի հուլիսի 25, 3-47 (ՎԴ) 2008 թվականի փետրվարի 29

Ձեռքբերման վաղեմության բարեխղճության հետ սերտորեն կապված է այն հարցը, թե արդյոք սեփականատերը հրաժարվել է իր գույքից, որի նկատմամբ էլ պետք է ծագի այլ անձի սեփականության իրավունքը:

Նախ նշենք, որ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման համաձայն՝ առաջին հերթին պետք է պարզվի՝ արդյոք անձը, որն, ըստ հայցվորի հրաժարվել է իր սեփականությունից, հանդիսացել է դրա սեփականատերը: Այդ հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձավ թիվ 3-84(ՎԴ) գործում և նշեց.

«Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը վճռի հիմքում դնելով 1970 թվականին Ավերիք Մարտիրոսյանի, Վարդիթեր Ավոյանի և Գալուստ Հովհաննիսյանի միջև կնքված պայմանագիրը հաստատված է համարել, որ Գալուստ Հովհաննիսյանը 1970 թվականին գրավոր հրաժարվել է իր սեփականությունից, իսկ հայցվորը շուրջ 37 տարի բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ փրկապետում է այն որպես սեփական գույք:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը վճռի հիմքում դնելով վերոնշյալ պայմանագիրը, պարզաճ գնահատման առարկա չի դարձրել այն և չի պարզել, թե արդյոք պայմանագրի կնքման պահին (1970 թվականին) վեճի առարկա գույքի սեփականատերը հանդիսացել է պայմանագիրը ստորագրած Գալուստ Հովհաննիսյանը:

Այսինքն, Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել և գնահատման առարկա չի դարձրել այն հարցը, թե արդյոք վեճի առարկա գույքը հայցվորի փաստացի փրկապետման անցնելու պահին նա ուներ բավարար հիմքեր ենթադրելու, որ այդ գույքը ձեռք է բերում և այդ պահից սկսած փրկապետելու է որպես սեփականություն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով պայմանագրի կնքման պահին վեճի առարկա գույքը Գալուստ Հովհաննիսյանին սեփականության իրավունքով չպատկանելու դեպքում պայմանագրի կողմ հանդիսացող Ավերիք Մարտիրոսյանը և Վարդիթեր Ավոյանը չէին կարող բավարար հիմքեր ունենալ ենթադրելու, որ այդ գույքը փրկապետելու են որպես սեփականը: Վերոնշյալ հարցադրումը կարևորվում է նաև այն տեսանկյունից, որ նման հանգամանքը կբացառի վեճի առարկա գույքի իրական սեփականատիրոջ կողմից գույքից հրաժարվելու փաստը:»⁶

⁶ 3-84(ՎԴ) 2008 թվականի փետրվարի 1

Տիրազուրկ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմությամբ սեփականության իրավունքի ճանաչում

Հարկ է նկատի ունենալ, որ դատական պրակտիկայում երբեմն տարակարծությունների տեղիք է տալիս այն հարցը, թե ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք կարող է ճանաչվել միայն տիրազուրկ գույքի նկատմամբ, թե դա հնարավոր է նաև սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ: Վճռաբեկ դատարանն իր թիվ 1451(ՎԴ) որոշմամբ հստակ պատասխանեց այդ հարցերին՝ նշելով՝

«ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի պատասխանում նշված այն պատճառաբանությանը, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք կարող է ձեռք բերվել միայն տիրազուրկ գույքի նկատմամբ, ապա այն անհիմն է, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի և 178-րդ հոդվածի 3-րդ մասի համադրումից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման ինստիտուտի կիրառությունը սահմանափակված չէ միայն տիրազուրկ գույքով: Այսինքն, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասը չի կարող մեկնաբանվել որպես ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման ինստիտուտի կիրառությունը սահմանափակող դրույթ: Այն հանգամանքը, որ տիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել ձեռքբերման վաղեմության ուժով, ինքնին չի ենթադրում, որ նույն եղանակով սեփականության իրավունք չի կարող ձեռք բերվել այլ անշարժ գույքի նկատմամբ:

Հիմք ընդունելով վերոնշյալ երկու հոդվածները, Վճռաբեկ դատարանը գտավ, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք կարող է ձեռք բերվել այն գույքի նկատմամբ, որը տիրազուրկ է (օրենքով սահմանված կարգով ճանաչվել է տիրազուրկ) կամ որը տիրազուրկ չէ, բայց դրա սեփականատերը օրենքով սահմանված ժամկետում անտարբեր վերաբերմունք է ցուցաբերել դրա նկատմամբ:⁷

Վերոնշյալ որոշումը բավականին կարևոր էր և տարբեր մեկնաբանությունների առիթ հանդիսացավ: Սակայն կարծում ենք՝ նշված գործով արտահայտված իրավական դիրքորոշումը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի տրամաբանությունից և պետք է

⁷ 1451(ՎԴ) 2007 թվականի հոկտեմբերի 10

մեկնաբանվի հետևյալ կերպ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածը տիրազուրկ է համարում այն գույքը, որը չունի սեփականատեր, որի սեփականատերն անհայտ է, հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից: Այսինքն, եթե նույնիսկ գույքի սեփականատերը հայտնի է, սակայն հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից, այն համարվում է տիրազուրկ: Չնայած վերոնշյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանը նշեց, որ ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունք կարող է ծագել նաև այն գույքի նկատմամբ, որի սեփականատերը օրենքով սահմանված ժամկետում անտարբեր վերաբերմունք է ցուցաբերել դրա նկատմամբ, վերոնշյալ միտքը որոշակի հստակեցման կարիք ունի՝ թերություններից խուսափելու և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի բնորոշման հետ հակասության մեջ չմտնելու առումով: Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշմամբ նկատի է ունեցվում դատական պրակտիկայում հաճախ հանդիպող այն դեպքը, երբ անձն իր գույքից հրաժարվում է հոգուտ ձեռքբերողի: Մինչդեռ երբ անձն ընդհանրապես հրաժարվում է իրեն պատկանող գույքից, ապա այդ գույքը պետք է ճանաչվի տիրազուրկ դրա նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք ճանաչելու համար:

Հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչում

Որոշակի առանձնահատկություններ ունի ձեռքբերման վաղեմության ուժով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագումը: Այս հարցը հիմնականում կապված է ՀՀ հողային օրենսգրքի⁸ 72-րդ հոդվածի և 29.01.1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի կիրառելիության հետ:

Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառելիության առանձնահատկություններին և նշել, որ ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածում նշված տիրապետման վաղեմության ուժով ձեռքբերման նախապատվության իրավունք տվող ժամկետի մեջ պետք է հաշվել այն ողջ ժամանակաշրջանը, որի ընթացքում տվյալ գույքը տիրապետվել է տվյալ անձի կողմից,

⁸ Ընդունվել է 2001 թվականի մայիսի 2-ին, ՀՀՊՏ 2001.06.15/17(149)

այդ թվում՝ մինչև գործող ՀՀ հողային օրենսգրքի ուժի մեջ մտնելն ընկած ժամանակաշրջանը:

Վճռաբեկ դատարանը, նշելով, որ ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառման դեպքում խոսք կարող է գնալ միայն ձեռքբերման վաղեմության նախապատվության իրավունքի մասին, նշեց, որ վեճի առարկա գույքն ավելի քան տասը տարի տիրապետելու հիմքով հայցվորները ձեռք են բերել սեփականության իրավունքով տվյալ հողամասը ձեռք բերելու նախապատվության իրավունք: Օրենքով նախատեսված ժամկետում անշարժ գույքն անընդմեջ, բացահայտ, բարեխիղճ տիրապետման հիմքով անձի մոտ ծագում է տվյալ տիրապետումից բխող իրավունքների ճանաչման պահանջ ներկայացնելու իրավունք ցանկացած անձի՝ այդ թվում նաև տվյալ գույքի սեփականատիրոջ դեմ:⁹

Վճռաբեկ դատարանի մեկնաբանություններով սահմանված հիմնական կանոնները

Ամփոփելով ձեռքբերման վաղեմության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի պրակտիկան, կարող ենք առանձնացնել նաև դատավարական իրավունքի նորմերի խախտման դրսևորումները նմանատիպ գործերի քննության ժամանակ:

Վճռաբեկ դատարանի կողմից կայացված բազմաթիվ որոշումներում վերջինս նշել է այն ապացույցները, որոնք կարող են վկայել տիրապետման վավերապայմանների առկայության կամ բացակայության մասին: Հարկ է նկատի ունենալ մի նրբություն. այդ ապացույցներով պետք է հիմնավորվեն բոլոր վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Դրանցով պայմաններից մեկի կամ մի քանիսի հիմնավորումը հիմք չէ ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման համար:

Սեփականատիրոջ կողմից գույքի նկատմամբ իրավունքից հրաժարվելու ապացույց կարող է հանդիսանալ դրա մասին վկայող գրավոր որևէ փաստաթուղթ: Դրա տարածված դրսևորումը դատական պրակտիկայում նոտարական կարգով չվավերացված առովաճառքի պայմանագիրն է: Այդ մասին կարող է վկայել նաև

⁹ 3-537(ՎԴ) 2007 թվականի մարտի 30: Այդ հանգամանքն ընդգծվել է նաև ԴՆԽ 2005 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 72 պարզաբանող որոշմամբ

սեփականատիրոջ կողմից անձին հրավիրելը, տուն կառուցելու համար նրան հողամաս հատկացնելը (թիվ 3-1435 (ՎԴ)):

Եթե գործում առկա է հավաստի ապացույց, որ անձին գույքը հատկացվել է օգտագործման նպատակով, ապա դրանով հերքվում է անձի կողմից գույքը բարեխիղճ տիրապետելու փաստը: Օրինակ 3-184 (ՎԴ) գործով Երևան քաղաքի Օրջոնիկիձեի շրջանի ժողդատարանի օրինական ուժի մեջ մտած 02.03.1987 թվականի վճռով վեճի առարկա գույքի նկատմամբ ճանաչվել էր Ռիմա Վարդանյանի օգտագործման իրավունքը, որով հերքվեց տիրապետման բարեխիղճությունը:

3-47(ՎԴ) գործով Վճռաբեկ դատարանը մերժեց սեփականության իրավունքի ճանաչման պահանջն այն պատճառաբանությամբ, որ Վեներա Ավետիսյանը վեճի առարկա շենքում բնակվել է գյուղապետի թույլտվությամբ, իսկ դրանից բացի հակառակի մասին վկայող այլ ապացույցներ գործում չկան:

Տիրապետման բարեխիղճությունը կարող է հիմնավորվել նրանով, որ գույքը բաժանվել է կողմերի համաձայնությամբ, իսկ սեփականատերը դրանից հետո իր գույքի օգտագործման սահմանափակումների վերաբերյալ պահանջ չի ներկայացրել (3-1451(ՎԴ)):

Գույքի բացահայտ և անընդմեջ տիրապետումը կարող է հիմնավորվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված փաստաթղթերով, հարևանների բացատրություններով:

Գույքը որպես սեփականը տիրապետելը հաստատող ապացույց կարող է հանդիսանալ գույքի հետ կապված ծախսերը հոգալը, հարկերը վճարելը (3-1435 (ՎԴ)), էներգամատակարարման, ջրամատակարարման առանձին բաժանորդ լինելը: Օրինակ, 3-1229(ՎԴ) գործով էներգամատակարարման, ջրամատակարարման առանձին բաժանորդ լինելը դիտվեց որպես սեփականատիրոջ կողմից սեփականության իրավունքից հրաժարման ապացույց:

Թիվ 3-367(ՎԴ) գործով Վճռաբեկ դատարանը ընդգծեց այն կարևոր մոտեցումը, որը այսօր հաճախ հաշվի չի առնվում նմանատիպ գործերի քննության ժամանակ: Մասնավորապես այդ գործով Վերաքննիչ դատարանը, վճռի հիմքում դրել էր հայցվորի բացատրությունները, Երևանի Այգեստան 11-րդ փողոցի բնակիչների հայտարարությունը

և հաստատված համարել, որ Սարգիս Մենենթյանը Երևանի Այգեստան 11-րդ փողոցի թիվ 231 տան 53,5 քմ մակերեսով հողամասը բարեխղճորեն և անընդմեջ օգտագործում է շուրջ 15 տարի, բացահայտ և անընդմեջ տիրապետում է այն որպես սեփական գույք: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը նշեց, որ գործում բացակայում են բավարար ապացույցներ, որով կարող էր հաստատվել Սարգիս Մենենթյանի կողմից վեճի առարկա գույքի տիրապետման բարեխղճությունը: Գործով հիմնավորված չէ, որ այդ գույքի տիրապետումը հիմնված է այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող էր տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը իր տիրապետմանն անցնելու պահից տիրապետել է որպես սեփականը:

Եթե անձի կողմից տվյալ գույքը 10 տարի անընդմեջ տիրապետելու հանգամանքի վերաբերյալ ներկայացվում են հակասական ապացույցներ (հարևանների հայտարարություններ), ապա նման պայմաններում չի կարող հիմնավոր հարվել այդ վավերապայմանի առկայությունը:¹⁰

Թիվ 3-342(ՎԴ) գործով Վճռաբեկ դատարանը Մկտիչ Համբարձումյանի կողմից հողի հարկի վճարման փաստը չդիտեց որպես սեփականության իրավունքի ճանաչման պահանջը մերժելու հիմք, քանի որ մինչև գույքը Մկտիչ Համբարձումյանին կտակելը այն նոտարական կարգով չվավերացված առուվաճառքի պայմանագրով վաճառվել էր Լենա Աբգարյանին, ուստի դա ժառանգական զանգվածի մեջ չէր մտել:

Վճռաբեկ դատարանն իր հետագա որոշումներում վերահաստատեց վերը նշված իրավական դիրքորոշումները¹¹, հետևաբար կարող ենք նշել, որ Վճռաբեկ դատարանի պրակտիկայում ձեռքբերման վաղեմության վերաբերյալ գրեթե ձևավորվել է:

Վճռաբեկ դատարանի իրավակիրառ պրակտիկայի զարգացման նոր միտումները

Վերևում նշվեց, որ ձեռքբերման վաղեմության հիմնական և դատական պրակտիկայում դժվար ապացուցվող վավերապայմաններից մեկը գույքի բարեխղճ ձեռքբերման փաստն է: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը կարևորում է ոչ միայն գույքի

¹⁰ 3-1195(ՎԴ) 2007 թվականի օգոստոսի 1

¹¹ Տես օրինակ ԵԱՔԴ/0054/02/11 2012 թվականի հոկտեմբերի 19, ԱՎԴ2/0443/02/11 2012 թվականի հոկտեմբերի 19, ԼԴ/1832/02/08 2011 թվականի մարտի 4

բարեխիղճ տիրապետումը, այլև ձեռքբերման բարեխիղճությունը՝ որպես քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի կիրառման վավերապայման: Սակայն պրակտիկայում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ անձի մոտ ձեռքբերման բարեխիղճությունը ձևավորվում է ոչ թե գույքն այդ անձին անցնելու պահից, այլ հետագայում՝ գույքի բարեխիղճ տիրապետման ընթացքում: Նման դեպքերում անձը, գույքը տիրապետելով որպես սեփականը, ստեղծում է նաև ձեռքբերման բարեխիղճության հիմքեր:

Վճռաբեկ դատարանը վերոնշյալ տրամաբանությամբ իր վերջին որոշումներով նորից մեկնաբանեց քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ համարեց անդրադառնալ ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման համար անհրաժեշտ պայմաններից բարեխիղճության պայմանի գնահատման առանձնահատկություններին: Գործով Վճռաբեկ դատարանն արձանագրեց, որ նման իրավահարաբերություններում առավել կարևորվում է ինչպես անշարժ գույքի փաստացի տիրապետողի վերաբերմունքը տիրապետվող գույքի նկատմամբ, այնպես էլ գրանցված սեփականատիրոջ վարքագիծը և վերաբերմունքն այլ անձի կողմից իր սեփականության տիրապետման նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը փաստեց.

«Ըստ էության օրենքով նախատեսված տասը տարվա ժամանակահատվածն այն սահմանափակ ժամանակահատվածն է, որի ընթացքում անշարժ գույքի սեփականատիրոջ գործողությունները կարող են ազդել գույքի փաստացի տիրապետողի կողմից նրա՝ գույքը որպես սեփական տիրապետելու բարեխիղճության վրա, քանի որ այս իրավահարաբերության համար էական է անշարժ գույքի սեփականատիրոջ վերաբերմունքը նման տիրապետման վերաբերյալ, որովհետև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի կիրառման առումով սեփականատիրոջ կողմից գույքի տիրապետման իրավազրոյության իրականացումն ինքնին բացառում է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչում որևէ սուբյեկտի համար: Նման մեկնաբանությունը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 3-րդ կետի բովանդակությունից:

Անշարժ գույքի գրանցված սեփականության իրավունք ունեցող անձի վարքագիծը և վերաբերմունքն առանց օրենքի և պայմանագրի հիման վրա գույքը փաստացի տիրապետող անձի տիրապետման նկատմամբ էական է դառնում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ

հողվածի բովանդակության առումով գնահատական տալու համար, քանի որ հիշատակված հողվածը որպես սեփականությունից հրաժարվելու հիմք կարևորում է ոչ միայն գրավոր փաստաթղթի առկայությունը, այլ նաև սեփականատիրոջ գործողությունները (անգործությունը):

Անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված գործողությունները պետք է իրականացվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածով նախատեսված ժամկետի ընթացքում մինչև գույքի փաստացի տիրապետողի կողմից ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ճանաչման պահանջ ներկայացնելը: Այս առումով պետք է նշել, որ ժառանգման կարգով իրականացված իրավահաջորդության դեպքում գույքի նկատմամբ ժառանգների սեփականության իրավունքի ծագումը ինքնըստինքյան չի վերացնում անշարժ գույքի փաստացի տիրապետողի մոտ առկա տիրապետման բարեխղճությունը»¹²:

Ի վերջո Վճռաբեկ դատարանը եզրահանգեց, որ ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ծագման համար գույքն այլ անձի անցնելու ձևերը, որոնք էլ պայմանավորում են ձեռք բերողի մոտ բարեխղճության առկայությունը կամ բացակայությունը, տարբեր են: Ինչպես կամահայտնության գրավոր կամ բանավոր ձևերը, այնպես էլ անձի գործողությունները և հավասարապես անգործությունը կարող են վկայել տիրապետման բարեխղճության մասին:

Բարեխղճության ծագումը, ինչպես և մյուս պայմանները կարևորվում են գույքի փաստացի տիրապետման անցնելու պահին: Այդուհանդերձ, առանձին դեպքերում բարեխղճությունը ժամանակագրական առումով կարող է չհամընկնել գույքի փաստացի տիրապետման անցնելու պահի հետ: Այլ կերպ՝ գույքը փաստացի տիրապետման անցնելու պահին այն ձեռք բերողի մոտ կարող է բացակայել բարեխղճությունը և ծագել ավելի ուշ: Նման դեպքերում ինքնին չպետք է բացառել ձեռքբերման վաղեմության առկայությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման դեպքերում տասը տարվա ժամկետի հաշվարկի հոսքը սկսվում է ոչ թե գույքի փաստացի տիրապետման անցնելու պահից, այլ տիրապետման ընթացքում բարեխիղճ դառնալու պահից: Վերջինս

¹² Տես ԱՐԱԴ/0084/02/12 2013 թվականի ապրիլի 05: Նմանատիպ դիրքորոշում Վճռաբեկ դատարանը հայտնեց նաև թիվ ԵՇԴ/0987/02/09 գործով 2013 թվականի ապրիլի 05-ի որոշմամբ:

էլ ըստ էության նշանակում է, որ գույքն այդ պահից է անցել անձի տիրապետմանը և անցման պահին անձը եղել է բարեխիղճ:¹³

Չնայած ձեռքբերման վաղեմության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի պրակտիկան գրեթե կայացել է, այնուամենայնիվ, դատական պրակտիկայում բարձրացվում են նորանոր հարցեր, իսկ որոշ հարցերի վերաբերյալ բարձրացվում է Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները զարգացնելու անհրաժեշտություն, ինչը խոսում է այն բանի մասին, որ այս ոլորտում կատարված աշխատանքները և առկա լուծումները դեռևս համալիր և համապարփակ լուծում խնդրին չեն տալիս, քանի որ հենց ինքը՝ խնդիրը, զարգացման սեփական գործընթացն ունի:

¹³ Տես ԱՐԱԴ/0084/02/12 2013 թվականի ապրիլի 05: Նմանատիպ դիրքորոշում Վճռաբեկ դատարանը հայտնեց նաև թիվ ԵՇԴ/0987/02/09 գործով 2013 թվականի ապրիլի 05-ի որոշմամբ:

**Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
մասնակցի՝ ընկերության կառավարմանը մասնակցելու
իրավունքը, ընկերությունից դուրս գալու կարգը և
իրավակիրառական խնդիրները**

(ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 99-րդ և 103-րդ հոդվածներ)

Տարոն Սիմոնյան, ի.գ.թ., փաստաբան
Գոռ Թորոսյան, ի.գ.թ.

Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեության իրականացման ամենատարածված կազմակերպարարական ձևը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններն են, որոնց ստեղծումը, կառավարումը շատ ավելի հեշտ են, քան մյուս առևտրային իրավաբանական անձանց մոտ, և հիմնադիրների (մասնակիցների) նյութական պատասխանատվությունը սահմանափակված է ընկերությունում ներդրված գույքով, ինչը նվազեցնում է ընկերության մասնակիցների ռիսկը:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է համարվում մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները պատասխանատու չեն նրա պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը¹:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավական վիճակը, ինչպես նաև նրա մասնակիցների իրավունքները և պարտականությունները սահմանվում են քաղաքացիական օրենսգրքով ու սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքով²:

¹ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, Հոդված 95, 1:

² ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, Հոդված 95, 3:

Սակայն խնդիրը նրանում է, որ Քաղաքացիական օրենսգիրքը ընկերության մասնակիցների իրավունքների ու պարտականությունների և առավել ևս՝ կառավարման ոլորտում իրավունքների վերաբերյալ դրույթներ քիչ է պարունակում, իսկ առկա դրույթներն էլ ընդհանուր բնույթի կարգավորիչներ են: «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով ևս ինչ-որ չափով կարգավորվում են այս հարաբերությունները, սակայն պրակտիկան ցույց է տալիս, որ առկա գործարարական հարաբերությունների զարգացումը, բարդացումը և համալիրացումը պահանջում են առավել խորը և մանրամասն կարգավորումներ, որոնք առկա օրենսդրական ակտերը չեն պարունակում, ինչն էլ առաջացնում է բազմաթիվ խնդիրներ, եթե գործը հասնում է մասնակիցների միջև վեճերի լուծմանը դատական կարգով:

Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի՝ ընկերության հիմնադիր են համարվում մինչև ընկերության պետական գրանցման պահին ընկերություն հիմնադրելու մասին պայմանագիր կնքած անձինք, իսկ ընկերությունը մեկ անձի կողմից հիմնադրվելու դեպքում՝ ընկերության ստեղծման մասին որոշում կայացրած անձը: Ընկերության մասնակից են համարվում ընկերության պետական գրանցման պահից ընկերության բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձինք: Ընկերության հիմնադիր կամ մասնակից կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք, Հայաստանի Հանրապետությունը և համայնքները:

Օրենսդրության իրավակարգավորման ամբողջ բազան ուղղված է մասնակիցների ընդհանուր, վերացական իրավունքների և պարտականությունների սահմանմանը, իսկ գործնական գործարարական հարաբերություններում լինում են դեպքեր, որոնք պահանջում են հստակ դրույթներ, որոնք բացակայում են:

Կարծում ենք՝ այս ոլորտում սահմանափակ կարգավորումները օրենսդրական ակտերի ընդունման ժամանակ բնական պետք է համարել, քանի որ գործարարական հարաբերությունների զարգացման այդ ժամանակաշրջանում առկա չէր այսօրվա գործարարական հարաբերությունների բազմազանությունը:

Եվ այս խնդրին բախվում են դատարանները, երբ քննում են մասնակիցների միջև առաջացող վեճերը: Այդպիսի մի խնդիր է նաև մասնակիցների իրավունքի կենսագործումը ընկերության կառավարման բնագավառում:

Քաղաքացիական օրենսգրքի 99-րդ հոդվածը սահմանում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կառավարումը, որտեղ սահմանվում են մասնակիցների իրավունքները կառավարման բնագավառում.

«1. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառավարման բարձրագույն մարմինը նրա մասնակիցների ընդհանուր ժողովն է:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում ստեղծվում է գործադիր մարմին (կոլեգիալ և (կամ) միանձնյա), որն ընթացիկ ղեկավարություն է իրականացնում նրա գործունեության նկատմամբ և հաշվետու է նրա մասնակիցների ընդհանուր ժողովին: Ընկերության կառավարման միանձնյա մարմնի կազմում կարող են ընտրվել նաև ընկերությանը չմասնակցող անձինք:

2. Ընկերության կառավարման մարմինների իրավասությունը, ինչպես նաև նրանց որոշումների ընդունման և ընկերության անունից հանդես գալու կարգը սահմանվում են սույն օրենսգրքին, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքին ու ընկերության կանոնադրությանը համապատասխան:

3. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

1) ընկերության կանոնադրությունը և նրա կանոնադրական կապիտալի չափը փոփոխելը.

2) ընկերության գործադիր մարմիններ կազմավորելը և նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը.

3) ընկերության փարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշիռները հաստատելը, նրա շահույթն ու վնասները բաշխելը.

4) ընկերությունը վերակազմակերպելու կամ լուծարելու մասին որոշում ընդունելը.

5) ընկերության վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) ընտրությունը:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքով ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը կարող է վերապահվել նաև այլ հարցերի լուծում:

Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը՝ օրենքով վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել ընկերության գործադիր մարմինների իրավասությանը:

4. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փարեկան ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար ընկերությունն իրավունք ունի ամեն փարի ներգրավել ընկերության կամ նրա մասնակիցների հետ գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչի՝ աուդիտորի (արտաքին աուդիտ)։

Ընկերության փարեկան ֆինանսական հաշվետվության վերստուգումը կարող է կատարվել նաև նրա մասնակիցներից յուրաքանչյուրի պահանջով։ Այս դեպքում վերստուգումը կատարվում է այն պահանջող մասնակցի հաշվին։

Ընկերության գործունեության վերստուգումներ անցկացնելու կարգը սահմանվում է օրենքով և ընկերության կանոնադրությամբ։

5. Ընկերության գործերի վարման արդյունքների մասին տեղեկությունների հրապարակումը (հրապարակային հաշվետվություն) պարտադիր չէ, բացառությամբ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքով նախատեսված դեպքերի։»

Քաղաքացիական օրենսգրքի այս դրույթի կենսագործման ապահովումը անհնար կլիներ առանց «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի կարգավորումների։

Այս բնագավառում մասնակիցների իրավունքերը փորձում է առավել մանրամասն սահմանել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը։ Այսպես՝ օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է.

«Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն՝

ա) սույն օրենքով կամ ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել ընկերության կառավարմանը.

բ) ստանալ տեղեկություններ ընկերության գործունեության վերաբերյալ.

գ) ստանալ ընկերության գործունեությունից ստացվող՝ օրենքով սահմանված շահույթի մասը.

դ) օրենքով սահմանված կարգով իր բաժնեմասը (դրա մասը) օտարել ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց.

ե) անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից, ցանկացած պահի դուրս գալ ընկերությունից.

զ) ընկերության լուծարման դեպքում բաժին ստանալ ընկերության մնացած գույքից։

Ընկերության մասնակիցներն ունեն նաև օրենքով, ընկերության կանոնադրությամբ կամ ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ սահմանված այլ իրավունքներ:»

Ամբողջ խնդիրը նրանում է, որ Քաղաքացիական օրենսգիրքը ընդհանուր կարգավորում է տալիս՝ թողնելով օրենքի կարգավորմանը, իսկ օրենքը, գրեթե նույնը կատարելով, թողնում է կանոնադրության կարգավորմանը: Սակայն հայկական իրականությունում լայն տարածում չունեն հստակ կարգավորումներով կանոնադրություններ:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին ՀՀ օրենքը հոդված 37-ով կարգավորում է ընդհանուր ժողով հրավիրելու կարգը և ժամանակը:

«Հերթական ընդհանուր ժողովն անցկացվում է ոչ պակաս, քան տարին մեկ անգամ: Ընկերության կանոնադրությամբ կարող է սահմանվել հերթական ընդհանուր ժողովի անցկացման այլ պարբերականություն: Հերթական ընդհանուր ժողովը հրավիրում է գործադիր մարմինը:»

Ընկերության կանոնադրությամբ կարող են սահմանվել ընկերության գործունեության տարեկան արդյունքները հաստատող ժողովի անցկացման ժամկետները: Նշված ժողովը պետք է անցկացվի ֆինանսական տարվա ավարտից ոչ շուր, քան 2 ամիս և ոչ ուշ, քան 6 ամիս անց:»

Սակայն հստակ սահմանված չէ իրավական դրույթ մասնակցի իրավունքի կենսագործման համար այն դեպքում, երբ տնօրենը, մյուս մասնակիցների հետ համաձայնեցված ձևով, չի հրավիրում ընդհանուր ժողով:

Օրենքի 39-րդ հոդվածը սահմանում է ընդհանուր ժողովի հրավիրման կարգը, սակայն կրկին որպես ժողովի հրավիրող մարմին չի նշում մասնակցին, այլ օգտագործում է միայն «*ժողով հրավիրող մարմինը կամ անձինք*» արտահայտությունը: Իսկ օրենքի 37-րդ հոդվածը որպես այդպիսի մարմին նշում է միայն գործադիր մարմին՝ «*Հերթական ընդհանուր ժողովը հրավիրում է գործադիր մարմինը:»*:

Այսպիսի պայմաններում Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի առջև խնդիր էր դրվել ապահովել մասնակցի (հայցվորի) իրավունքը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառավարման բնագավառում և պարտադրել ընկերության տնօրենին, ով նույնպես հանդիսանում էր ընկերության մասնակից, գումարել մասնակիցների ամենամյա ընթացիկ ժողով, ներկայացնել հաշվապահական հաշվառումը, տարեկան հաշվետվություն-

ները և որոշել ընկերության քաղաքականությունը կոնկրետ գործունեության բնագավառում³: Այս գործում ընկերության տնօրենը ընկերության հիմնադրումից հետո ոչ մի անգամ ընդհանուր ժողով չէր գումարել, իսկ չորս հավասար բաժնեմասերով մասնակիցներից երեքը, այդ թվում՝ ինքը, ոչ մի անգամ կարիք չեն զգացել ընդհանուր ժողովի գումարման և խոչընդոտել են չորրորդ մասնակցի կառավարման իրավունքի կենսագործմանը: Իսկ դատարանում Ընկերությունը և տնօրենը պնդել են, որ առկա չէ որևէ դրույթ Քաղաքացիական օրենսգրքում, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում, Ընկերության կանոնադրությունում որը կսահմաներ, որ Ընկերության մասնակիցը իրավունք ունի պահանջել գումարել հերթական ընդհանուր ժողով, այլ առկա է միայն դրույթ, որով տնօրենն է համարվում հերթական ընդհանուր ժողով հրավիրող իրավասու մարմինը: Այլ բան է արտահերթ ընդհանուր ժողովի պարագայում, որի հրավիրման իրավունք, Կանոնադրության համաձայն, ուներ նաև մասնակիցը: Իսկ հերթական ընդհանուր ժողով չգումարման և այլ պարտավորություններ չկատարման համար մասնակիցներն իրավունք ունեն հեռացնել տնօրենին պաշտոնից: Սակայն քանի որ նման տնօրեն ունենալը ձեռք է տալիս չորս հավասար բաժնեմաս ունեցող մասնակիցներից երեքին, տնօրենին հեռացնելու մասին խոսք լինել չէր կարող գնալ: Եվ այս փակ շղթայի լուծումը հանձնված էր դատարանին:

Մեկ այլ գործով⁴ փոքր-ինչ նման թեմա քննարկվել է, որով ՀՀ վճռաբեկ դատարանը սահմանել էր.

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 37-րդ և 39-րդ հոդվածների համաձայն՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հերթական ընդհանուր ժողովն անց է կացվում ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, բայց ոչ պակաս, քան փարին մեկ անգամ: Հերթական ընդհանուր ժողովը հրավիրվում է գործադիր մարմնի կողմից:

Ընդհանուր ժողով հրավիրող մարմինը կամ անձինք պարտավոր են ժողովի անցկացման օրվանից ամենաուշը քսան օր առաջ այդ մասին ծանուցել ընկերության մասնակիցներին՝ պարտավորված նամակն ուղարկելով ընկերության մասնակիցների ցանկում նշված հասցեով:

³ ԵԱԴԴ/0975/02/12, 2013թ-ի ապրիլի 09: Վճիռը հոդվածը գրելու ժամանակ դեռևս ուժի մեջ չէր մտել:

⁴ 2007 թվականի հունվարի 26 –ի թիվ 3-12(ՏԴ)

Ծանուցման մեջ պետք է նշված լինեն ընդհանուր ժողովի անցկացման ժամը և տեղը, ինչպես նաև առաջարկվող օրակարգը:

Նշված հոդվածներով օրենսդիրը ամրագրել է տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու և ժողովի (ժողովների) անցկացման տեղի, ժամի և նախատեսվող օրակարգի հարցերի վերաբերյալ ընկերության մասնակցին առնվազն պատվիրված նամակով ծանուցելու ընկերության գործադիր մարմնի պարտականությունը: Այս նորմը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի՝ ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքի իրականացման երաշխիք է հանդիսանում:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի կողմից ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքի բովանդակությունը և իրականացման ձևերը ամրագրված են «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածում, որի համաձայն՝ ընկերության բարձրագույն մարմին է հանդիսանում ընդհանուր ժողովը, որին վերապահված են ընկերության գործունեության հետ կապված բոլոր կարևորագույն որոշումների կայացման բացառիկ իրավասությունները:

Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն ներկա գտնվել ընդհանուր ժողովին, մասնակցել օրակարգի հարցերի քննարկմանը և քվեարկել՝ որոշումներ ընդունելիս: Ընկերության յուրաքանչյուր մասնակից ընդհանուր ժողովում ունի ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասին համապատասխան ձայների քանակ:

Ընկերության հիմնադրման մասին պայմանագրով կամ կանոնադրությամբ կամ ընկերության մարմինների կողմից մասնակիցների սույն կետով սահմանված իրավունքները սահմանափակող դրույթներն անվավեր են, այսինքն՝ այդ իրավունքը բացարձակ է, և որևէ հանգամանք չի կարող այն սահմանափակելու հիմք հանդիսանալ: Իսկ այդ բացարձակ իրավունքի իրականացման հնարավորությունը օրենսդիրը պայմանավորել է ընդհանուր ժողովի աշխատանքներին ընկերության մասնակցի մասնակցությամբ:

Այս որոշմամբ ևս վերջնական պատասխան չէր տրվում, թե մասնակիցը ընդհանուր ժողովին ներկա գտնվելու, օրակարգի հարցերի քննարկման մասնակցելու, որոշումներ ընդունելիս քվեարկելու իրավունքներից զատ արդյո՞ք ունի հերթական ընդհանուր ժողով հրավիրելու իրավունք, եթե դա չի անում տնօրենը, և տնօրենին զբաղեցված պաշտոնից հեռացնելու օբյեկտիվ հնարավորություն չեն տալիս մյուս մասնակիցները:

Սակայն առաջանում է անհասկանալի մի իրավիճակ՝ ինչպես կարող է մասնակիցը կենսագործել ընկերության կառավարմանը մասնակցելու իր իրավունքը, ինչքան էլ, որ, ինչպես նշում է Վճռաբեկ դատարանը,

«սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի կողմից ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքի բովանդակությունը և իրականացման ձևերը ամրագրված են «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածում, որի համաձայն՝ ընկերության բարձրագույն մարմին է հանդիսանում ընդհանուր ժողովը, որին վերապահված են ընկերության գործունեության հետ կապված բոլոր կարևորագույն որոշումների կայացման բացառիկ իրավասությունները»⁵,

Եթե ինքն անգամ իրավունք չունի հրավիրել ընդհանուր ժողով, իսկ դատարանը պահանջում է ցույց տալ կարգավորող որևէ դրույթ, որով կսահմանվեր այդ իրավունքը:

Այնուամենայնիվ, Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը գործին տվել է դրական լուծում, սակայն չի սահմանել և հստակեցրել որևէ հատուկ դրույթ կամ չի կիրառել օրենքի անալոգիա՝ օգտագործելով այդ դրույթ, որից անմիջականապես կբխեր ընկերության տնօրենին հերթական ընդհանուր ժողով հրավիրելուն պարտավորեցնելու առանձին մասնակցի իրավունքը: Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը ԵԱԴԴ/0975/02/12 գործով, հիմնվելով վերոնշյալ դրույթների վրա սահմանել է. «Այս պայմաններում դատարանը գտնում է, որ վերը նշված իրավական նորմերի սահմանված կարգով տնօրենն _____ պարտավոր է հրավիրել Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողով» և պարտավորեցրել է հրավիրել:

Թեև այս որոշումը Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ կետի ուժով չի կարող պարտադիր լինել դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, քանի որ այն ընդհանուր իրավասության դատարանի վճիռ է, սակայն, այնուամենայնիվ, որպես նման խնդիր քննած և ընկերության մասնակցի կառավարմանը մասնակցելու այդ իրավունքը հաստատած առաջին դատական ակտ, դժվար է թերագնահատել:

⁵ 2007 թվականի հունվարի 26 –ի թիվ 3-12(ՏԴ)

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 103-րդ հոդված

Սահմանափակ պատասխանատվության ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են առաջին հերթին **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 103-րդ հոդվածով**, որը նախատեսում է, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցը, անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից, իրավունք ունի ցանկացած ժամանակ դուրս գալ ընկերությունից:

Ընկերությունից դուրս գալու հարաբերությունները բացի քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ նորմից կարգավորվում են նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով:

Մասնավորապես, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ *ընկերության մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ դուրս գալ ընկերությունից՝ անկախ ընկերության կամ նրա մասնակիցների համաձայնությունից: Ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու հետ կապված հաշվարկները կատարվում են նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով:*

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ *ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից նրա բաժնեմասը փոխանցվում է ընկերությանը: Ընկերությունը պարտավոր է ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից՝ 6 ամսվա ընթացքում, մասնակցին վճարել բաժնեմասի (կանոնադրական կապիտալում նրա ավանդի ոչ լրիվ վճարման դեպքում՝ վճարված մասին համապատասխան բաժնեմասի) արժեքը...: Ընդհանուր ժողովի որոշմամբ ընկերությունից դուրս եկող մասնակցին նրա համաձայնությամբ կարող է տրվել նրա բաժնեմասի արժեքին համապատասխան գույք:*

Վերը նշված նորմերի իրավակիրառական պրակտիկան որոշակի հարցեր է առաջացնում ընկերության մասնակցի դուրս գալու իրավական հետևանքների հետ կապված: Մասնավորապես հաճախ պրակտիկայում ընկերության մասնակիցների միջև վեճ առաջանալու դեպքում մասնակիցները դիմում էին ընկերության տնօրենին դուրս գալու

և ընկերության հանդեպ որոշակի այլ պահանջներով: Իր բնույթով տարբեր իրավական հետևանքներ առաջացնող այդ գործողությունը երբեմն դատական վեճերի առիթ է հանդիսանում: Հիմնական խնդիրը կապված էր այն հարցի հետ, թե արդյոք պետք է քննարկվեն և լուծում ստանան ընկերության մասնակցի իրավական կարգավիճակից բխող մյուս հարցերը, եթե անձի ներկայացրած դիմումն արդեն ընկերությունից դուրս գալու կամահայտնություն է պարունակում:

Վճռաբեկ դատարանը վերոնշյալ նորմերի հիման վրա հաստատեց, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցը ցանկացած ժամանակ կարող է դուրս գալ ընկերությունից՝ այդ մասին դիմում ներկայացնելով ընկերությանը: Դիմումի ներկայացման պահից վերջինիս բաժնեմասը փոխանցվում է ընկերությանը:

Վճռաբեկ դատարանը նշեց նաև, որ.

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի և 45-րդ հոդվածներից հետևում է, որ ընդհանուր ժողովի որոշումները կարող են դատական կարգով անվավեր ճանաչվել ընկերության մասնակցի դիմումի հիման վրա, իսկ ընկերության մասնակիցն ընկերության բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձն է: Հետևաբար այն պահից, երբ ընկերության մասնակիցը դիմում է ընկերությունից դուրս գալու համար, նրա բաժնեմասերն անցնում են ընկերությանը, իսկ այդ պահից սկսած վերջինս չի կարող ընկերության ընդհանուր ժողովի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջով դիմել դատարան, քանի որ վերջինս, այդ բաժնեմասերի նկատմամբ արդեն չունենալով սեփականության իրավունք, չի համարվում ընկերության մասնակից: Միաժամանակ, օրենսդիրը պաշտպանում է ընկերությունից դուրս եկող անձի իրավունքը՝ պահանջելու վճարել իր բաժնեմասի արժեքը՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով: Արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացրեց, որ Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով հայցվորների՝ 12.09.2007 թվականին Ընկերությունից դուրս գալու դիմում ներկայացնելու փաստը, միաժամանակ նշել է, որ չի կարող հիմնավորված համարվել հայցվորների՝ Ընկերությունից դուրս գալու հանգամանքը, հետևաբար հայցվորների 12.09.2007 թվականին Ընկերությունից դուրս գալու մասին դիմում ներկայացված լինելու պայմաններում վերջիններս համարվում են Ընկերությունից դուրս եկած և ընդհանուր ժողովի որոշումները վիճարկելու իրավունք չունեն:»⁶

⁶ Տես թիվ ԼԴ/0891/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 01-ի որոշումը

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշումը գուցե բխում է օրենսդրության ընդհանուր տրամաբանությունից, սակայն պրակտիկ տարբեր իրավիճակներում կարող է որոշակի խնդիրներ առաջացնել: Հատկապես այն դեպքերում, երբ ընկերության մասնակցի կողմից ընկերության մարմինների (պրակտիկայում հիմնականում ընդհանուր ժողովի) որոշումների վիճարկումը կապված է լինում ընկերության մասնակցի բաժնեմասի չափի հետ, վերոնշյալ որոշմամբ արտահայտված դիրքորոշումը միանշանակ ընդունելի համարել չի կարելի: Մասնավորապես, Սահմանափակ պատասխանատվության ընկերությունների մասին ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ ընկերության մասնակցի դիմումի հիման վրա ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ՝ այդ մասնակցի կողմից լրացուցիչ ավանդ ներդնելու միջոցով: Այդ հարցով որոշումն ընդունվում է ընկերության մասնակիցների կողմից՝ միաձայն: ... Լրացուցիչ ավանդ ներդնելու դիմում ներկայացրած ընկերության մասնակցի բաժնեմասի անվանական արժեքն ավելանում է նրա լրացուցիչ ավանդի գումարի չափին հավասար կամ պակաս գումարով: Ընդհանուր ժողովը կարող է երրորդ անձի դիմումի հիման վրա, սույն կետի առաջին մասով սահմանված կարգով, որոշում ընդունել ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ, նրան ընկերություն ընդունելու միջոցով, եթե դա արգելված չէ ընկերության կանոնադրությամբ:

Վերոնշյալ կանոնակարգումների հիման վրա ընկերության ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումներն ուղղակիորեն կարող են ազդել մասնակցի բաժնեմասի չափի փոփոխության վրա: Սակայն նման դեպքերում, առաջնորդվելով Վճռաբեկ դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշմամբ, դատարանը պետք է մերժի ընդհանուր ժողովի որոշումը վիճարկելու նախկին մասնակցի հայցը, քանի որ վերջինս այլևս ընկերության մասնակից չէ և որոշումները վիճարկելու իրավունք չունի: ⁷ Սակայն նման մոտեցումը ոչ բոլոր դեպքերում կարելի է կիրառել, քանի որ մասնակցի այն գործողությունները, այդ թվում՝ ընդհանուր ժողովի որոշումների վիճարկումը, որոնք վերաբերում են մինչ վերջինիս դուրս գալը ընդունված որոշումներին, պետք է

⁷ Հարկ է նշել, որ թիվ ԼԴ/0891/02/09 գործով փաստական հանգամանքները նմանատիպ են քննարկվող իրավիճակի հետ:

թույլատրելի համարվեն և միանշանակ բխում են քաղաքացիական օրենսգրքի 103-րդ հոդվածի և Օրենքի 21-րդ և 23-րդ հոդվածների տրամաբանությունից: Այդ հանգամանքը բազմակողմանի քննարկման առարկա դարձնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել օրենսդրի կողմից նման կանոնակարգումների նպատակը: Ընկերությունից դուրս եկող մասնակցի բաժնեմասն օրենքի ուժով ընկերությանը փոխանցվելու նպատակը ընկերության մասնակցին բաժնեմասի արժեքին համապատասխան փոխհատուցում ստանալու հարցերի քննարկման ժամանակ որոշումների ընդունմանը մասնակցելու իրավունքից մեկուսացնելն է, քանի որ դուրս եկող մասնակիցը չի կարող որոշել իրեն հակտացվող փոխհատուցման արժեքը: Սակայն այն դեպքերում, երբ դուրս եկող մասնակցի բաժնեմասի չափի հետ կապված որոշ հարցեր լուծում են ստացել մինչ վերջինիս դուրս գալը, անկախ այն հանգամանքից, որ մասնակիցն ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից այլևս բաժնեմասի նկատմամբ չունի իրավունք, վերջինս պետք է իրավունք ունենա վիճարկել մինչ իր դուրս գալը ծագած իրավահարաբերությունների հետ կապված ընկերության մարմինների որոշումները: Նման մոտեցումը, կարծում ենք, չի խաթարում օրենսգրքի 103-րդ հոդվածի տրամաբանությունը:

Այնուամենայնիվ, իրավակիրառ տեսանկյունից Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշման լույսի ներքո ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 103-րդ հոդվածի մեկնաբանության և կիրառման համար կարծում ենք ընկերության մասնակիցները պետք է իրացնեն ընկերության մասնակցի կարգավիճակից բխող իրենց բոլոր իրավունքները (այդ թվում ընդհանուր ժողովի որոշումները վիճարկելու իրավունքը) մինչ ընկերությունից դուրս գալը:

Տեսական և կիրառական տեսանկյունից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 103-րդ հոդվածին անդրադառնալիս կարևոր է մեկ այլ հարց՝ ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու ընթացակարգի հստակեցումը: Հիմնական պրակտիկ խնդիրը կապված է այն հարցի հետ, թե արդյոք ընկերության մասնակիցը կարող է միանգամից դիմել դատարան՝ ընկերությունից դուրս գալու պահանջով:

Վճռաբեկ դատարանը, զարգացնելով թիվ ԼԴ/0891/02/09 գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը, նշեց.

Ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու իրավունքի իրացման համար որևէ նախապայման չի պահանջվում, և դա կախված է բացարձակապես մասնակցի կամահայտնությունից: Սա նշանակում է, որ մասնակցի (սույն գործով հայցվորի) նշված իրավունքի իրացման հիմքում ընկած չէ այս կամ այն սուբյեկտի (սույն գործով պատասխանողների) պարտականությունը՝ դրսևորելու որոշակի վարքագիծ (գործողություն, անգործություն), որի կատարումն անհրաժեշտ կլինի մասնակցի այդ իրավունքի իրացման համար: Եթե գործում առկա չէ ապացույց այն մասին, որ Ընկերությունից դուրս գալու վերաբերյալ մասնակցի կամքն արտահայտող դիմումը ներկայացվել և Ընկերության կողմից ստացվել է, ուրեմն մասնակցի կողմից չի պահպանվել վեճի լուծման, այն է՝ Ընկերությունից դուրս եկած համարելու հայցապահանջի արտադարարանական կարգը, որպիսի պայմաններում վեճն այդ մասով ենթակա չէ դարարանում քննության:⁸

Վերոնշյալ դիրքորոշմամբ ըստ էության Վճռաբեկ դատարանը պահպանեց և զարգացրեց նախորդ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը: Այսինքն՝ դատական պրակտիկայում օրենսգրքի 103-րդ հոդվածի և Օրենքի 23-րդ հոդվածի կիրառման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ օրենսդիրը ընկերությունից դուրս գալու դիմումը դիտում է որպես միակողմ գործարք, քանի որ դրա համար այլ անձանց՝ այդ թվում ընկերության այլ մասնակիցների և նույնիսկ ընկերության կամահայտնությունը չի պահանջվում: Բացի այդ, ելնելով դատական պրակտիկայի ներկա զարգացումներից, կարող ենք եզրակացնել, որ ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու գործողության հետ օրենքն իրավական հետևանքներ է կապում այն դեպքում, երբ

1. Ներկայացվել է դիմում
2. Այն ներկայացվել է ընկերությանը

Հետևաբար, Օրենքի 23-րդ հոդվածը վեճի լուծման⁹ արտադատական յուրօրինակ կարգ է, որի չպահպանումն առաջացնում է համապատասխան դատավարական հետևանքներ՝ գործի վարույթի կարճման միջոցով:

⁸ Տես թիվ ԵԱԴԴ/0832/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը

⁹ Չնայած Վճռաբեկ դատարանի կողմից նման մեկնաբանությանը, չենք կարծում, որ բոլոր դեպքերում ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու կարելի է դիտարկել որպես մասնակցի և ընկերության միջև վեճ, քանի որ ինքնին այն ընկերության մասնակցի միակողմ

Դատական պրակտիկայում հանդիպում են նաև դեպքեր սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցին հեռացնելու հետ կապված:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը նախատեսում է, որ ընկերության մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով տնօրինում է (են) ընկերության առնվազն 10 տոկոս բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել ընկերության այլ մասնակցի հեռացումն ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը: Ընկերությունից հեռացված մասնակցի բաժնեմասն անցնում է ընկերությանը: Ընկերությունը պարտավոր է մասնակցին վճարել բաժնեմասի արժեքը, որը որոշվում է սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով:

Վերոնշյալ հոդվածի ձևակերպումները կիրառական խնդիրներ են ստեղծում հատկապես դատավարական տեսանկյունից: Ընկերության մասնակցին հեռացնելու գործերի քննության ժամանակ ապացուցման առարկան բավականին բարդ կազմ ունի, քանի որ նյութական իրավունքը բավականին ընդհանուր ձևակերպումներ է տալիս ընկերության մասնակցին հեռացնելու հիմքերի վերաբերյալ: Իր գործողություններով կամ անգործությամբ ընկերության բնականոն գործունեությունը դժվարացնելու կամ անհնարին դարձնելու փաստերի ապացուցումը ոչ միշտ է հնարավոր հայցվորների կողմից:

Վճռաբեկ դատարանի կողմից քննված գործերից մեկով Ընկերության տնօրեն Մայիս Մեիրաբյանը (ով միաժամանակ ընկերության մասնակիցն էր), դիմելով դատարան, պահանջել էր Ընկերության մասնակից Մարիետա Պետրոսյանին հեռացնել Ընկերությունից:

կամահայտնության արդյունք է և վերջինիս իրավունքը, իսկ այդ իրավունքի իրացումը չի կարող դիտվել որպես վեճ ընկերության հետ: Հետևաբար, ընկերության մասնակիցը ընկերությունից դուրս գալու իր իրավունքն իրականացնելիս չի կարող վեճ ունենալ ընկերության հետ: Նման վեճեր կարող են առաջանալ ընկերությունից դուրս եկած մասնակցի փոխհատուցման դեպքում, որն արդեն իրավական այլ խնդիր է: Գուցե այդ հարցն է նկատի ունեցվել Վճռաբեկ դատարանի կողմից թիվ ԵԱԴԴ/0832/02/09 գործով իրավական դիրքորոշում արտահայտելիս:

Վերաքննիչ դատարանը, հայրը բավարարելու մասին դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, հիմք էր ընդունել 07.08.2009 թվականի թիվ 2307392 ստուգման ակտը (որի համաձայն՝ Պայքար Գևորգյանը 01.07.2009 թվականից մինչև 05.08.2009 թվականը Բարաշանյան 50 հասցեում առանց պետական գրացման իրականացրել է ավտոկանգառի կազմակերպման գործունեություն՝ ստանալով միջին օրական 4000 դրամ համախառն եկամուտ: Ակտով առաջադրվել է 80.000 ՀՀ դրամ հարկային պարտավորություն), Պայքար Գևորգյանի, Սահակ Մանուկյանի, Ռոբերտ Սեպերջյանի կողմից տրված հայտարարությունները, 24.08.2009 թվականի էներգավճարի գծով 27.300 ՀՀ դրամի, 31.08.2009 թվականի հողի վարձավճարի 19.400 ՀՀ դրամի, 21.08.2009 թվականի 200.500 ՀՀ դրամի հողի վարձավճարի, 24.08.2009 թվականի հեռախոսավարձի գծով 4.750 ՀՀ դրամի Ընկերության կողմից կատարված վճարումների կտրոնները, Ընկերության տնօրեն Մայիս Մեհրաբյանի կողմից կազմված 05.10.2009 թվականի թիվ 2 արձանագրությունը (որի համաձայն՝ 2003-2009 թվականների ընթացքում Մարիետա Պեպրոսյանն օրենքի խախտմամբ Ընկերության ազատ տարածքը վեր է ածել անօրինական ավտոկայանատեղիի և հաշվետու չլինելով հարկային մարմիններին՝ ստացել է ստվերային լրացուցիչ շահույթ: Ավելին, արդյունքում որևէ ներդրում չկատարելով և անխնա շահագործելով ընկերության գույքն ու տարածքը՝ Մարիետա Պեպրոսյանը փչացրել է այն՝ վերածելով ամբողջ տարածքը ավերակի, որտեղ տիրում է հակասանիտարական վիճակ: Բացի այդ, արձանագրությամբ նշվել է, որ ակվարիումների ապակիները կտրված են, ներսի սալիկները պոկված, վնասված, քանդված և ավերված են դրսի կենդանի ձուկ պահելու 6 ռեզերվուարներից 4-ը՝ իրենց ջրամատակարարման համակարգով, քանդված է նաև ռեզերվուարների վրա կառուցած ծածկը, առևտրի սրահի տանիքն ամբողջովին անմխիթար վիճակում է, իսկ սրահի պատերը ճաքճքված, սրահի լուսավորության համակարգը փչացրած է, հոսանքալարերը՝ կիսաայրված: Միաժամանակ արձանագրությամբ արձանագրվել է, որ վերջին մեկ ամսվա ընթացքում Մայիս Մեհրաբյանի կողմից մարվել են պետությանը պարտք մնացած Ընկերության բոլոր պարտքերը և օրինականացվել է ավտոկանգառի գործունեությունը) և հաստատված համարել, որ Մարիետա Պեպրոսյանը թաքցրել է Ընկերության իրական եկամուտները, ստացել գերշահույթ և անխնա վերաբերվելով Ընկերության գույքին՝ այն փչացրել է: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը հանգել է այն հետևության, որ Մարիետա Պեպրոսյանն իր գործողություններով և անգործությամբ դժվարացրել ու անհնարին է դարձրել ընկերության բնականոն գործունեությունը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը, նշեց.

«սույն գործի լուծման համար էական նշանակություն ունի Մարիեպա Պետրոսյանի գործողությունների կամ անգործության հետևանքով Ընկերության բնականոն գործունեության դժվարեցման կամ անհնարինության փաստի առկայությունը, որի ապացուցման դատավարական բեռը կրում է Ընկերության 50 % բաժնեմասի մասնակից և հայցվոր Մայիս Մեհրաբյանը:

Մինչդեռ սույն գործի փաստերի համաձայն՝ 07.08.2009 թվականի թիվ 2307392 ստուգման ակտով քաղաքացի Պայքար Գևորգյանը 01.07.2009 թվականից մինչև 05.08.2009 թվականը Բարաջանյան 50 հասցեում առանց պետական գրացման իրականացրել է ավտոկանգառի կազմակերպման գործունեություն՝ ստանալով միջին օրական 4.000 ՀՀ դրամ համախառն եկամուտ, 24.08.2009 թվականի վճարման անդորրագրով Ընկերությունը վճարել է 27.300 ՀՀ դրամի էներգավճար, 24.08.2009 թվականի վճարման անդորրագրով՝ 4.750 ՀՀ դրամի հեռախոսավարձ (ցումունքն առ 01.08.2009 թվականը), 21.08.2009 թվականի վճարման անդորրագրով՝ 200.500 ՀՀ դրամի հողի վարձավճարի տույժ, 31.08.2009 թվականի վճարման անդորրագրով՝ 25.100 ՀՀ դրամի հողի վարձավճարի տույժ, 31.08.2009 թվականի վճարման անդորրագրով՝ 19.400 ՀՀ դրամի հողի վարձավճար:

Բացի այդ, սույն գործում առկա հողի վարձավճարի վճարման ենթակա գումարի հաշվարկի վերծանման և հողի վարձավճարի անդորրագրերով Մարիեպա Պետրոսյանը վճարել է հողի վարձավճար 30.06.2003 թվականին, 25.12.2003 թվականին, 18.01.2005 թվականին, 29.04.2005 թվականին, 14.12.2005 թվականին, 22.02.2006 թվականին, 25.04.2006 թվականին, 14.07.2006 թվականին, 08.12.2006 թվականին, 29.01.2007 թվականին, 17.01.2008 թվականին, 25.03.2008 թվականին, 30.05.2008 թվականին, 01.07.2008 թվականին, 30.10.2008 թվականին, 27.11.2008 թվականին, 03.03.2009 թվականին, 25.06.2009 թվականին: Ընդհանուր վճարված գումարից վարձավճարի պարտքը կազմել է 19.280 ՀՀ դրամ, իսկ տույժ՝ 294.802 ՀՀ դրամ, որից 70.000 ՀՀ դրամ վճարվել է Մարիեպա Պետրոսյանի կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության տնօրենի կողմից 24.08.2009 թվականի էներգավճարի և հեռախոսավարձի, 21.08.2009 թվականի և 31.08.2009 թվականի հողի վարձավճարի վճարման անդորրագրերով կատարված վճարումներով չի հաստատվում Ընկերության բնականոն գործունեության դժվարեցումը կամ անհնարինությունը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված 07.08.2009 թվականի թիվ 2307392 ստուգման ակտին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ ակտով քաղաքացի Պայքար Գևորգյանին է առաջադրվել հարկային պարտավորության կատարում:

01.07.2009 թվականից մինչև 05.08.2009 թվականը Բաբաջանյան 50 հասցեում առանց պետական գրացման ավտոկանգառի կազմակերպման գործունեություն իրականացնելու համար:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 07.08.2009 թվականի թիվ 2307392 ստուգման ակտի առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված Պայքար Գևորգյանի, Սահակ Մանուկյանի, Ռոբերտ Սեպերջյանի կողմից տրված հայտարարությունները բավարար չեն հաստատված համարելու, որ Մարիետա Պետրոսյանը թաքցրել է Ընկերության իրական եկամուտները, ստացել գերշահույթ՝ դրանով իսկ դժվարացնելով կամ անհնարին դարձնելով Ընկերության բնականոն գործունեությունը:

Ինչ վերաբերում է Ընկերության տնօրեն Մայիս Մեհրաբյանի կողմից 05.10.2009 թվականին կազմված թիվ 2 արձանագրությանը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն Մայիս Մեհրաբյանի կողմից 05.10.2009 թվականին կազմված թիվ 2 արձանագրությունը բավարար չէ հաստատված համարելու համար դրանց իրական լինելը և այն, որ արձանագրության մեջ արտացոլված տեղեկությունները կատարվել են Մարիետա Պետրոսյանի գործողությունների կամ անգործության հետևանքով: Ավելին, հենց նույն արձանագրությամբ հերքվում են Ընկերության բնականոն գործունեության դժվարացման վերաբերյալ ներկայացված փաստարկների մեծամասնությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ապացուցված չէ Ընկերության մասնակից Մարիետա Պետրոսյանի գործողություններով կամ անգործությամբ Ընկերության բնականոն գործունեությունը դժվարացնելու կամ անհնարին դարձնելու փաստը, ուստի առկա չէ նրան «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի ուժով Ընկերությունից հեռացնելու իրավական հիմքը»:¹⁰

Պրակտիկայում ընկերության մասնակցին հեռացնելու հարցը բարձրացվում է ընկերության մասնակցի կողմից ընկերության կառավարմանը չմասնակցելու դեպքերում: Այսինքն՝ նման դեպքերում ընկերության մասնակցի անգործությունն է դիտարկվում որպես վերջինիս կողմից ընկերության գործունեությանը խոչընդոտելու իրավաբանական փաստ: Այդ խնդիրը սերտորեն կապված է նաև հեռացվող մասնակցին ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին մասնակցելու ծանուցման իրավական խնդրի հետ:

¹⁰ Տես թիվ ԵՄԴ/1174/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի որոշումը

Վճռաբեկ դատարանը գործերից մեկով, որտեղ նույնպես բարձրացվել էր ընկերության մասնակցին հեռացնելու հարցը և որտեղ ՀՀ տնտեսական դատարանը բավարարել էր այն, սահմանեց.

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ ընկերության մասնակիցը, որը գումարային առումով տնտեսում է ընկերության առնվազն 10% բաժնեմասը, իրավունք ունի դատական կարգով պահանջել ընկերության այլ մասնակցի հեռացումն ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը:

Սույն գործի փաստերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանը պարզեց, որ հայցվորը ընկերության ընդհանուր ժողովների անցկացման ժամի և տեղի մասին պատշաճ ծանուցված չի եղել: Հետևաբար հիմնավոր է վճռաբեկ բողոքի այն փաստարկը, որ պատասխանողի՝ անձամբ կամ ներկայացուցչի միջոցով ընկերության ընդհանուր ժողովներին չմասնակցելու պատճառը դրանց վերաբերյալ պատշաճ կերպով ծանուցված չլինելն է հանդիսացել:

Վճռաբեկ բողոքի պատասխանում նշված հայցվորի փաստարկն այն մասին, թե ընկերության գործունեությանը խոչընդոտելու պատճառը պատասխանողի՝ հանրապետությունից բացակայությունն է և վերջինիս փաստացի բնակության վայրը հայտնի չլինելու հանգամանքը, Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում այն պատճառաբանությամբ, որ 'Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին' ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը նախատեսում է մասնակցի պատշաճ ծանուցում (պատվիրված նամակով)՝ մասնակիցների ցանկում նշված հասցեով, ինչը ընկերության կողմից չի կատարվել:

Հայցվորի այն փաստարկը, թե ընկերությունը պատասխանողին մասնակիցների ցուցակում նշված հասցեով չի ծանուցել, քանի որ պատասխանողը, համապիროության կողմից տրված տեղեկանքի և ոստիկանությունից ստացված գործության համաձայն, նշված հասցեում չի բնակվում, Վճռաբեկ դատարանը անհիմն է համարում նաև այն պատճառաբանությամբ, որ ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք: Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն վերադառնալու իրավունք: Այդ իրավունքների իրականացումը չի կարող քաղաքացու այլ իրավունքների խախտման կամ դրանց սահմանափակման հիմք հանդիսանալ: Իսկ քաղաքացու նշված հասցեում ժամանակավորապես չբնակվելու հանգամանքը ընկերության

կողմից մասնակցին ընդհանուր ժողովի անցկացման մասին ծանուցելու օրենքով սահմանված պարտականությունը չկատարելու հիմք չի կարող հանդիսանալ, քանի որ քաղաքացու բացակայելը մշտական բնակության վայրից չի բացառում օրենքով սահմանված կարգով պատվիրված նամակի միջոցով մասնակիցների ցանկում նշված հասցեով ծանուցման դեպքում ընկերության մասնակցի՝ անձամբ կամ ներկայացուցչի միջոցով ընդհանուր ժողովին ներկայանալու և դրա աշխատանքներին մասնակցելու հնարավորությունը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատասխանողի՝ ընկերության ընդհանուր ժողովի անցկացման տեղի և ժամանակի մասին պատվիրված նամակով ծանուցված չլինելու պայմաններում, ընկերության ընդհանուր ժողովին չմասնակցելու և դրանով ընկերության գործունեությանը խոչընդոտելու հիմքով ընկերության մասնակիցների կազմից վերջինիս հեռացումը խախտում է՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով սահմանված, ընկերության մասնակցի՝ ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքը:¹¹

Վերոնշյալ երկու որոշումները ցույց են տալիս, որ կիրառական տեսանկյունից Օրենքի 22-րդ հոդվածը բավականին դժվար է առաջին հերթին դատավարական առումով: Նմանատիպ գործերի քննության ժամանակ հայցվորի համար էապես դժվար է կրել ապացուցման բեռը և հիմնավորել բոլոր այն փաստերի առկայությունը, որոնք կարող են հիմք հանդիսանալ ընկերության մասնակցին հեռացնելու համար: Վճռաբեկ դատարանը նույնպես բավականին զգուշավորությամբ է մոտենում նմանատիպ դեպքերում այդ փաստերը հաստատված լինելու հարցին, և հայցերը հիմնականում մերժվում են դատավարական հիմքով:

¹¹ Տես թիվ 3-12 (ՏԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունվարի 26-ի որոշումը

Կեղծ և շինծու գործարքներից բխող դատական վեճերի քննության առանձնահատկությունները քաղաքացիական դատավարությունում

Վահագն Գրիգորյան, ասպիրանտ,
փաստաբան
Հայկ Սարգսյան, ասպիրանտ.

I. Կեղծ գործարքներից բխող դատական վեճերի քննության առանձնահատկությունները քաղաքացիական դատավարությունում

«Քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

Այսինքն, ցանկացած գործարքի պարտադիր հատկանիշ է հանդիսանում գործարքը կնքող կողմերի մոտ առկա՝ տվյալ գործարքին բնորոշ իրավական հետևանքներ առաջացնելու մտադրությունը:

«Քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **կեղծ գործարքը, այսինքն՝ առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված գործարքը, առոչինչ է:**

Փաստորեն կեղծ գործարքը չի համապատասխանում «Քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածով սահմանված չափանիշներին, այն է՝ բացակայում է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ առաջացնելու, փոփոխելու, դադարեցնելու նպատակը:

Այսպիսով, կեղծ գործարքները գործողություններ են, որոնք կատարվում են գործարքի կողմ չհանդիսացող երրորդ անձանց խաբելու կամ նրանց շահերին վնասելու նպատակով: Դա արվում է տարբեր պատճառներով, օրինակ՝ անվիճելի պարտավորության փաստացի կատարումից խուսափելու համար անձը կարող է կեղծ գործարքներով ուրիշին փոխանցել իրեն պատկանող ողջ գույքային զանգվածը:

Կեղծ գործարքի կնքման դեպքում երկու կողմն էլ գիտակցում են, որ իրենք իրականում գործարք չեն կնքում, հետևաբար երկու կողմն էլ, համենայն դեպս գործարքի կնքման պահին, գործարքը կատարելու կամ դրա կատարումը պահանջելու նպատակ կամ ցանկություն չունեն:

Կեղծ գործարք կնքելիս կողմերը ցանկանում են երրորդ անձանց համար ստեղծել տպավորություն, որ իրենք գտնվում են որոշակի իրավահարաբերությունների մեջ, սակայն իրականում նման իրավահարաբերություններ ստեղծելու կամքը կողմերի մոտ բացակայում է: Կեղծ գործարքի կնքման դեպքում գործարք կնքողների կամքը արտաքինից համապատասխանում է կամահայտնությանը, սակայն իրականում ոչ: Ներքին կամքը ուղղված չէ տվյալ գործարքին բնորոշ իրավական հետևանքների առաջացմանը, իսկ կամահայտնությունը, ի տարբերություն ներքին կամքի, ուղղված է:

Չնայած կեղծ գործարքին տրված պարզ լեզու բնորոշմանը, պրակտիկայում կեղծ գործարքների հետ կապված դատական վեճերը միշտ էլ խնդրահարույց են եղել: Իրականում կնքված գործարքի կեղծ լինելու փաստն ապացուցելը բավականին բարդ է, եթե ոչ գրեթե անհնարին: Այդ պատճառով էլ, եթե ուսումնասիրենք առոչինչ գործարքների հետ կապված վեճերով դատական պրակտիկան, կտեսնենք, որ կեղծ գործարքների հետ կապված վեճերը շատ փոքր թիվ են կազմում:

Կեղծ գործարքները հայտնաբերելու հետ կապված դժվարությունները կայանում են հետևյալում. *կեղծ գործարքն արտաքինից անթերի է, դրա բովանդակությունը համապատասխանում է օրենսդրության պահանջներին, այն կնքվում է օրենքով սահմանված ձևով, գործարքը կնքող սուբյեկտները լրիվ գործունակ են*: Առաջին հայացքից գործարք կնքող սուբյեկտների կամքը ևս ձևավորվել է բնական պայմաններում, իսկ կամահայտնությունը և ներքին կամքը իրար համապատասխանում են: Նման պայմաններում դատարանին անհրաժեշտ են ուղղակի ապացույցներ՝ օրենքով սահմանված ձևով և բովանդակությամբ կնքված գործարքը առոչինչ համարելու համար: Ընդ որում, պրակտիկան ցույց է տալիս, որ դատարանները հաճախ հաշվի չեն առնում գործում առկա անուղղակի ապացույցները (որքան էլ որ դրանք բազմաթիվ լինեն և իրենց համակցության մեջ վկայեն գործարքի կեղծ լինելու մասին):

Օրինակ՝ թիվ ԵԿԴ/0426/02/10 քաղաքացիական գործով Հայցվորը, դիմելով դատարան, պահանջել է հաստատել իր և Պատասխանողի միջև կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրի առոչինչ լինելը (կեղծ լինելու հիմքով) և այդ գործարքի նկատմամբ կիրառել անվավերության հետևանքներ:

Հայցվորը ներկայացրել է մի շարք անձանց կողմից տրված գրավոր բացատրություններ առ այն, որ նվիրատվության պայմանագիրը կնքելիս կողմերը սեփականության իրավունքի փոխանցման նպատակ չեն ունեցել: Պայմանագիրը կնքվել է զուտ այն նպատակով, որ Պատասխանողն ունենա սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, գրավ դնի այդ գույքը, վարկ ստանա, իսկ վարկը մարելուց հետո անշարժ գույքը կրկին վերադարձնի հայցվորին:

Սեփականության իրավունքի «փոխանցումից» հետո Հայցվորը շարունակել է բնակվել և հաշվառված մնալ իր կողմից «վաճառված» բնակարանում: Հայցվորը նաև շարունակել է իր անունից և իր հաշվին վճարել նշված բնակարանի կոմունալ ծախսերը և գույքահարկը: Իսկ պատասխանողը բնակարան «գնելուց» հետո երբևէ այնտեղ փաստացի չի բնակվել:

Այսպիսով, պայմանագրի կնքումից հետո Հայցվորը շարունակել է տիրապետել և օգտագործել բնակարանը, այսինքն՝ շարունակել է իրականացնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված սեփականատիրոջ երեք իրավազորություններից երկուսը:

Հայցվորը նշել է նաև, որ նման պայմանագրի կնքումն իր համար անիրատեսական է եղել (իսկ ՀՀ վճռաբեկ դատարանն իր 3-89 (ՏԴ) քաղաքացիական գործով 01.02.2008թ. կայացված որոշման մեջ գործարքի առոչինչ ճանաչման հիմքում դրել է այդ գործարքի անիրատեսականությունը և դրա կնքման աննպատակահարմարությունը կողմերի համար), քանի որ ինքը չունեի սեփականության իրավունքով իրեն պատկանող այլ անշարժ գույք, որտեղ ինքը կարող էր բնակվել բնակարանի վաճառքից հետո:

Սակայն դատարանը իր 07.04.2011թ. վճռով հայցը մերժել է՝ նշելով, որ գործում բացակայում են բավարար ապացույցներ այն մասին, որ Հայցվորը և Պատասխանողն իրականում սեփականության իրավունքի փոխանցման նպատակ չեն ունեցել¹:

Մի կողմից հայցվորի կողմից բերված փաստարկներից յուրաքանչյուրն առանձին վերցրած ինքնին հայցի բավարարման հիմք չէր կարող հանդիսանալ, սակայն դրանք ամբողջության մեջ գնահատելու դեպքում դատարանն իհարկե կարող էր ձևավորել ներքին համոզմունք՝ գործարքը կեղծ լինելու մասին:

Մյուս կողմից գտնում ենք, որ նման կարգի գործերով այնքան էլ ճիշտ չէ անուղղակի ապացույցներով ղեկավարվելը, քանի որ ի վերջո քննարկման առարկա է հանդիսանում այնպիսի նուրբ հարց, ինչպիսին է գործարքի կողմերի ներքին կամքը, ընդ որում հենց գործարքի կնքման պահին: Այսինքն, դատարանը պետք է պարզի, թե գործարքի կողմերի մոտ ինչպիսի նպատակներ և մտադրություններ են եղել անցյալում: Իսկ ժամանակային ընդհատումը (գործարքի կնքման պահից մինչև գործարքի վիճարկման պահն ընկած ժամանակահատվածը) կարող է բավականին երկար լինել:

Կեղծ գործարքների վերաբերյալ վեճերով ապացուցման միջոցների թույլատրելիության վերաբերյալ թիվ ՀՅԲԴ5/0043/02/08 քաղաքացիական գործով կայացված վճռով ՀՀ հյուսիսային քաղաքացիական դատարանը նշել է, որ *գործարքի կեղծ, ձևական լինելը հիմնավորելու համար հայցվորը կարող է օգտագործել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ցանկացած ապացույց՝ վկաների ցուցմունքներ, գործին մասնակցող անձանց ցուցմունքներ և այլ:*²

Թեև ինչպես արդեն նշեցինք, կեղծ գործարքների վերաբերյալ վեճերը համեմատաբար փոքր թիվ են կազմում, այնուամենայնիվ մենք ուսումնասիրել ենք նմանատիպ գործերով դատական պրակտիկան և կփորձենք բարձրացնել մի քանի հիմնախնդիր, որոնք մեր կարծիքով էական նշանակություն ունեն կեղծ գործարքների վերաբերյալ դատական վեճերի լուծման համար:

¹ Տես թիվ ԵԿԴ/0426/02/10 քաղաքացիական գործով Երևան քաղաքի կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.04.2011թ. վճիռը:

² Տես թիվ ՀՅԲԴ5/0043/02/08 քաղաքացիական գործով ՀՀ հյուսիսային քաղաքացիական դատարանի 08.01.2009թ. վճիռը:

1. Արդյո՞ք գործարքի կեղծ լինելու հարցը որոշելիս դատարանը պետք է հաշվի առնի այնպիսի հանգամանք, ինչպիսին է գործարքի կողմերի՝ երրորդ անձանց հանդեպ ունեցած չկատարված պարտավորությունների առկայությունը: Ի վերջո գաղտնիք չէ, որ կեղծ գործարքի կնքման առաջին և հիմնական շարժառիթը սեփականությունից առերևույթ ազատվելն է՝ պարտավորությունների կատարումից խուսափելու համար:

Օրինակ թիվ ԵԱՔԴ/2506/02/09 քաղաքացիական գործով հայցվորներ Յուրի և Սիլվա Ջարգարյանները պահանջել են անվավեր ճանաչել պատասխանողներ Արշակ Ջարգարյանի և Գայանե Բարսեղյանի միջև կնքված էքսկլատորի առուծախի պայմանագիրը: Հայցվորները նշել են, որ մեկ այլ քաղաքացիական գործով կայացված վճռով դատարանը վճռել է Արշակ Ջարգարյանից հօգուտ Յուրի Ջարգարյանի բռնագանձել 48.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Հայցվորները պնդել են, որ Արշակ Ջարգարյանի և Գայանե Բարսեղյանի միջև կնքված գործարքը կեղծ է եղել և դրա միակ նպատակն է եղել Արշակ Ջարգարյանին ազատել դատարանի վճռով վերջինիս վրա դրված դրամական պարտավորության կատարումից:

Սակայն Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն իր 29.01.2010թ. վճռով հայցը մերժել է:³

Նշված վճռի դեմ հայցվորները բերեցին վերաքննիչ բողոք: Վերաքննիչ դատարանը իր 29.03.2010թ. որոշմամբ բավարարեց վերաքննիչ բողոքը, բեկանեց դատարանի վճիռը և գործն ուղարկեց նոր քննության: *Վերաքննիչ դատարանը իր որոշման մեջ կարևորեց այն հանգամանքը, որ գործում բացակայում է որևէ ապացույց, որ Պատասխանողն ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող որևէ այլ գույք, որով կարող է կատարել հայցվորների նկատմամբ իր ունեցած պարտավորությունը:*

Վերաքննիչ դատարանը գտավ, որ վեճի առարկա հանդիսացող գործարքը ոչ միայն կեղծ գործարք է, այլև՝ պարտավորությունը դիտավորյալ խախտելու համար պատասխանատվությունը վերացնելու մասին նախապես կնքված համաձայնություն,

³ Տես թիվ ԵԱՔԴ/2506/02/09 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.01.2010թ. վճիռը:

որը, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 4-րդ մասի, նույնպես առոչինչ է:⁴

Գործի նոր քննության ընթացքում դատարանն իր 22.09.2010թ. վճռով բավարարեց հայցը՝ նշելով, որ էքսկավատորն օտարվել է հատկապես պարտավորության փաստացի կատարումից խուսափելու նպատակով:⁵ Դատարանի նշված վճիռը բողոքարկվել է վերաքննիչ դատարան՝ այս անգամ արդեն պատասխանողի կողմից: Սակայն ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը իր 02.12.2010թ. որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը:⁶

Վերաքննիչ դատարանի որոշումը պատասխանողի կողմից բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան, որն իր 04.03.2011թ. որոշմամբ բեկանեց և փոփոխեց դատարանի վճիռը և հայցը մերժեց: Պարտավորությունների առկայության հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանը նշեց, որ այդ փաստը բավարար չէ՝ պատասխանողների միջև կնքված գործարքների կեղծ լինելը հաստատված համարելու համար:⁷

Այսինքն վճռաբեկ դատարանն ըստ էության սահմանեց, որ ***երրորդ անձանց հանդեպ ունեցած չկատարված պարտավորությունների առկայությունը չի կարող վճռական լինել՝ պարտապանի կողմից կնքված գույքի օտարման գործարքները կեղծ համարելու համար:***

Մեր կարծիքով նման վեճեր քննելիս դատարանները պետք է ուշադրություն դարձնեն այն հանգամանքներին, որոնք նախորդել կամ հաջորդել են տվյալ գործարքի կնքմանը. գործարքի կեղծ լինելու հարցը պարզելու համար հաճախ անհրաժեշտ է համադրել տվյալ գործարքը մի շարք այլ իրավաբանական փաստերի հետ⁸ (մասնավորապես՝ գործարքի կողմերի միջև նախկինում եղած իրավահարաբերությունները, կող-

⁴ Տես թիվ ԵԱԲԴ/2506/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.03.2010թ. որոշումը:

⁵ Տես թիվ ԵԱԲԴ/2506/02/09 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 22.09.2010թ. վճիռը:

⁶ Տես թիվ ԵԱԲԴ/2506/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.12.2010թ. որոշումը:

⁷ Տես թիվ ԵԱԲԴ/2506/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2011թ. որոշումը:

⁸ Տես Ю.А. Тарасенко, "Вестник Федерального Арбитражного суда Западно-Сибирского округа", N 6, 2004:

մերի միջև նախկինում կնքված պայմանագրերը, կողմերի միջև առկա կապերը՝ ազգակցական, ծառայողական և այլն): Օրինակ թիվ ՀՅՔԴ5/0043/02/08 քաղաքացիական գործով կայացված վճռում դատարանը որպես գործարքի կեղծ լինելը հաստատող հանգամանք, հիմք է ընդունել կողմերի միջև նախկինում ստորագրված պարտավորագիրը, որով կողմերը, որոշակի հանգամանքների վրա հասնելու դեպքում, իրենց վրա նման գործարք կնքելու պարտավորություն էին վերցրել: ⁹

Մեր կարծիքով գործարքի կեղծ լինելը պարզելու համար էական նշանակություն ունի գործարքի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ ունեցած չկատարված պարտավորությունների առկայության փաստը, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, կեղծ գործարքի կնքման հիմնական նպատակներից մեկը գույքային զանգվածից «ազատվելն է», ինչի հետևանքով գույքն «օտարողը» փաստացի ազատվում է նաև իր ունեցած չկատարված պարտավորությունների կատարումից:

2. Արդյո՞ք գործարքի կեղծ լինելու հարցը որոշելիս դատարանը պետք է հաշվի առնի այնպիսի հանգամանք, ինչպիսին է կնքված պայմանագրի պայմանների էական շեղումը համեմատելի հանգամանքներում կնքվող նմանատիպ պայմանագրերի պայմաններից:

Օրինակ հենց վկայակոչված թիվ ԵԱՔԴ/2506/02/09 քաղաքացիական գործով հայցվորը, որպես կնքված առուծախի պայմանագրի կեղծ լինելու հիմնավորում, վկայակոչել է այն փաստարկը, որ պայմանագրի առարկայի շուկայական արժեքը 70.000.000 ՀՀ դրամ է, մինչդեռ պատասխանողն այն վաճառել է 18.000.000 ՀՀ դրամով:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն իր 29.01.2010թ. վճռով հայցը մերժել է և այդ փաստին նշանակություն չի տվել:

Վերաքննիչ դատարանը, իր 29.03.2010թ. որոշմամբ բեկանելով դատարանի վճիռը և գործն ուղարկելով նոր քննության, նույնպես չի կարևորել այդ փաստը և այն չի դրել իր որոշման հիմքում:

⁹ Տես թիվ ՀՅՔԴ5/0043/02/08 քաղաքացիական գործով ՀՀ հյուսիսային քաղաքացիական դատարանի 08.01.2009թ. վճիռը:

Գործի նոր քննության ընթացքում, դատարանը իր 22.09.2010թ. վճռով բավարարելով հայցը, կարևորել է այն հանգամանքը, որ էքսկավատորը վաճառվել է իր շուկայական գնից էականորեն ցածր գնով:

Պատասխանողը, բողոքարկելով վճիռը, վկայակոչել է պայմանագրի ազատության սկզբունքը, համաձայն որի՝ կողմերը ինքնուրույն են որոշում պայմանագրի պայմանները, այդ թվում նաև՝ պայմանագրի գինը: Վերաքննիչ դատարանը 02.12.2010թ. որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը:

Սակայն վճռաբեկ դատարանը, բավարարելով պատասխանողի բերած վճռաբեկ բողոքը, նշեց, որ գործում առկա չէ որևէ ապացույց, որով հաստատվում է այն փաստը, որ գործարքները կնքվել են առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության: Սրանով վճռաբեկ դատարանը փաստորեն սահմանեց, որ կնքված պայմանագրի պայմանների էական շեղումը համեմատելի հանգամանքներում կնքվող նմանատիպ պայմանագրերի պայմաններից ինքնին վճռորոշ չի կարող լինել կնքված գործարքը կեղծ որակելու համար:

Մեկ այլ թիվ ՀՅԲԴ5/0043/02/08 քաղաքացիական գործով հայցվորը ներկայացրել է իր և պատասխանողի միջև կնքված գործարքն անվավեր ճանաչելու պահանջ՝ այն կեղծ լինելու հիմքով: Հյուսիսային քաղաքացիական դատարանը բավարարել է հայցը: Հայցի բավարարման հիմքում դրվել է նաև այն փաստը, որ «վաճառված» անշարժ գույքի շուկայական արժեքը եղել է 17.810.000 ՀՀ դրամ, մինչդեռ այն վաճառվել է 5.000.000 ՀՀ դրամով:

Սույն գործով պատասխանողը բերել է վերաքննիչ բողոք: Վերաքննիչ դատարանը իր 17.04.2009թ. որոշմամբ բողոքը բավարարել է՝ նշելով, որ դատարանը չէր կարող գույքի շուկայական արժեքի հիման վրա գործարքը կեղծ լինելու հետևության հանգել այն պարագայում, երբ կողմերի փոխադարձ համաձայնությամբ կնքված պայմանագրով կողմերը ցանկություն են հայտնել գույքի արժեք սահմանել 5.000.000 ՀՀ դրամը:¹⁰

Վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկվել է հայցվորի կողմից: Վճռաբեկ դատարանը բեկանել է վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել է ՀՀ

¹⁰ Տես թիվ ՀՅԲԴ5/0043/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.04.2009թ. որոշումը:

Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Գործի նոր քննության արդյունքում դատարանը գտավ, որ հայցը ենթակա է բավարարման: Իր նման վճռի հիմքում դատարանը, ի թիվս այլ փաստերի, դրեց նաև ավելի քան 17 միլիոն ՀՀ դրամի արժեք ունեցող տունը հինգ միլիոն ՀՀ դրամով վաճառելու փաստը:¹¹

Դատարանի նշված վճիռը թեև բողոքարկվեց, սակայն վերաքննիչ և վճռաբեկ դատարաններն օրինական ուժի մեջ թողեցին դատարանի վճիռը:

Մեր կարծիքով դատարանի նման մոտեցումը հակասում է պայմանագրի ազատության սկզբունքին: Իրոք, եթե կողմը որոշել է ասենք 100.000.000 ՀՀ դրամ արժողությամբ անշարժ գույքը վաճառել 10.000.000 ՀՀ դրամով, ապա դա դեռ չի նշանակում, որ կնքված գործարքը կեղծ է: Եթե կողմերն իրոք ունենան կեղծ գործարք կնքելու նպատակ, ապա ավելի տրամաբանական է, որ նրանք, կասկածներ չհարուցելու նպատակով, պայմանագրում կսահմանեն ողջամիտ պայմաններ՝ շատ լավ գիտակցելով, որ գործարքը, միևնույն է, չի կատարվելու:

3. Արդյո՞ք գործարքի կեղծ լինելու հարցը որոշելիս դատարանը պետք է հաշվի առնի այնպիսի հանգամանք, ինչպիսին է կնքված պայմանագրից փաստացի առաջացած իրավական հետևանքների առկայությունը:

Մեր կարծիքով դատարաններն իհարկե պետք է ուշադրություն դարձնեն այնպիսի հանգամանքներին, ինչպիսիք են՝ գործարքից ծագող պարտավորությունների փաստացի կատարումը, այդ պարտավորությունների կատարման ժամկետները, կողմերի շահագրգռվածությունը՝ գործարքի կատարման հարցում, մեկ կողմի կողմից գործարքից ծագող պարտավորությունը խախտելու դեպքում մյուս կողմի կատարած գործողությունները՝ իր խախտված իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

Ակնհայտ է, որ օրինակ գործարքի կնքումից հետո կողմերի կողմից կատարվող գործողությունների բացակայությունը՝ գործարքի կատարման ուղղությամբ, կարող է

¹¹ Տես թիվ ՀՅՔԴ5/0043/02/08 քաղաքացիական գործով ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 23.03.2010թ. վճիռը:

վկայել այն մասին, որ կողմերն ի սկզբանե գործարքի կատարման նպատակ չեն էլ ունեցել, ինչն էլ իր հերթին վկայում է գործարքի կեղծ լինելու մասին:

Չնայած դրան, չպետք է մոռանալ, որ կեղծ գործարքը մնում է կեղծ՝ անկախ գործարքից բխող պարտավորությունները փաստացի կատարած լինելու հանգամանքից: Կեղծ է այն գործարքը, որը կնքվել է առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության: Սա նշանակում է, որ համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության առկայությունը կամ բացակայությունը պետք է գնահատվի գործարքի կնքման պահի դրությամբ: Հնարավոր է, որ գործարքը կնքելուց հետո կողմերի մոտ առաջանա համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրությունը, սակայն դա չի կարող կեղծ գործարքի առոչնչության հետևանքների կիրառման հայցի ներկայացման դեպքում հայցի մերժման հիմք լինել:

Ի վերջո չպետք է մոռանալ, որ կեղծ գործարքի անվավերության հետևանքների կիրառման խնդիրն առաջ է գալիս այն ժամանակ, երբ գործարքը կատարվել է: Այսինքն, օրենքը, սահմանելով կեղծ գործարքի անվավերության հետևանքների կիրառման հնարավորություն, ինքնին փաստորեն չի արժևորում գործարքից բխող պարտավորությունների կատարման փաստը՝ գործարքի կեղծ լինելը որոշելու հարցում:

Այժմ ներկայացնենք այս հարցի կապակցությամբ ձևավորված դատական պրակտիկան:

Թիվ ԵԱԲԴ/2506/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, բեկանելով առաջին աստիճանի դատարանի վճիռը, նշել է, որ դատարանը, առուծախի պայմանագրի կեղծ լինելը պարզելու համար պետք է քննարկի այն հարցը, թե արդյոք վիճելի գործարքով գնորդ հանդիսացող անձն իրականում ընդունել է պայմանագրի առարկան: Այսինքն, վերաքննիչ դատարանն արժևորել է գործարքից բխող պարտավորությունների կատարման փաստը՝ գործարքի կեղծ լինելը գնահատելու համար:

Նույն քաղաքացիական գործով առաջին աստիճանի դատարանը իր 22.09.2010թ. վճռով բոլորովին չի արժևորել այդ հանգամանքը: Դատարանը վճռել է որպես կեղծ գործարքի առոչնչության հետևանք պարտավորեցնել վաճառողին վերադարձնել

պայմանագրով ստացված գումարը իսկ գնորդին պարտավորեցրել է վերադարձնել պայմանագրի առարկան:

Այսինքն, դատարանը մի կողմից նշել է, որ գործարքը կնքվել է առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության, իսկ մյուս կողմից ընդունել է, որ գործարքն առաջացրել է իրավական հետևանքներ (վճարվել է պայմանագրի գինը, փոխանցվել է պայմանագրի առարկան):

Նույն գործով 04.03.2011թ. կայացված որոշմամբ վճռաբեկ դատարանը նշեց, որ վիճելի գործարքը կեղծ չի, քանի որ պայմանագրով գնորդը պայմանագրի առարկան հանձնել է վարձակալության: Վճռաբեկ դատարանը նշեց, որ գնորդի կնքած վարձակալության պայմանագիրը վկայում է կողմերի՝ իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության մասին: Այլ կերպ ասած՝ վճռաբեկ դատարանը սահմանեց, որ պայմանագիրը չի կնքվել առանց համապատասխան իրավական հետևանքների առաջացման նպատակի, քանի որ հետագայում փաստացի առաջացրել է իրավական հետևանքներ:

4. Արդյո՞ք կեղծ կարող է համարվել այն գործարքը, որի կողմերը (կողմերից մեկը) գործարքի կնքման պահին գտնվել են մոլորության մեջ, չեն հասկացել, թե ինչ գործարք են կնքում:

Կեղծ է այն գործարքը, որը կնքվել է առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործարքները կարող են լինել միակողմ, երկկողմ և բազմակողմ: Հետևաբար գործարքը կեղծ որակելու համար անհրաժեշտ է, որ գործարքի մասնակից բոլոր սուբյեկտների մոտ բացակայի համապատասխան իրավական հետեւվանքներ առաջացնելու նպատակը: Իսկ այն դեպքերում, երբ գործարքի կողմերից մեկի մոտ այդ նպատակը բացակայում է, իսկ մյուսի մոտ առկա է, ապա այսպիսի դեպքերը կեղծ գործարք չեն կարող համարվել: Կարճ ասած, կեղծ գործարքի կնքման դեպքում գործարքին մասնակցող բոլոր անձինք գործում են համաձայնեցված և հստակ գիտակցում են թե կնքված գործարքի բնույթը, թե այն, որ տվյալ գործարքից ծագող պարտավորությունների կատարում իրենք չեն պահանջելու:

Անդրադառնալով կեղծ գործարքի առաջնությունը սահմանող նորմում առկա որոշ թերությունների՝ նշենք, որ մեր կարծիքով որոշ անհստակություններ է առաջացնում 306-

րդ հողվածի 1-ին մասում առկա «իրավական հետևանքներ» բառակապակցությունը: Կեղծ է այն գործարքը, որը կնքվել է առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության: Եթե ղեկավարվենք նորմի տառացի մեկնաբանությամբ, կստացվի որ մաքուր կեղծ գործարքը խիստ հազվադեպ հանդիպող երևույթ է: Ասվածը բացատրենք անշարժ գույքի կեղծ առուծախի պայմանագրի վրա, որը կնքվում է անվիճելի պարտավորության փաստացի կատարումից խուսափելու նպատակով:

«Քաղաքացիական օրենսգրքի 561-րդ հողվածի համաձայն՝ վաճառողը, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով պարտավորվում է գնորդի սեփականում-թյանը հանձնել անշարժ գույք: «Քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հողվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: «Քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հողվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:

Այսպիսով, անշարժ գույքի առուծախի պայմանագրի իրավական հետևանքը գնորդի մոտ անշարժ գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքի ծագումն է: Իրավական հետևանք է նաև «ԿԱ ԱԳԿ ՊԿ-ում պայմանագրի հիման վրա կատարվող պետական գրանցումը, որի ուժով գնորդը համարվում է անշարժ գույքի սեփականատեր: Իսկ նույն պայմանագրի փաստացի հետևանքը գնորդի կողմից անշարժ գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավազորությունների փաստացի իրականացումն է:

«Քաղաքացիական օրենսգրքի 164-րդ հողվածի համաձայն՝ սեփականատերը կրում է իրեն պատկանող գույքի պահպանման հոգսը: Հետևաբար անշարժ գույքի առուծախի պայմանագրի իրավական հետևանք է նաև գնորդի մոտ գույքի պահպանման հոգսը կրելու պարտականության ծագումը: Իսկ նույն պայմանագրի փաստացի հետևանք է գնորդի կողմից գույքի պահպանման հոգսը կրելը:

Այսպիսով ակնհայտ է, որ որոշ կեղծ գործարքներ կնքվում են որոշակի իրավական հետևանքներ առաջացնելու նպատակով: Օրինակ, մեր կողմից վկայակոչված դեպքում կեղծ առուծախի պայմանագիրը կնքվում է ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ում անշարժ գույքի սեփականատիրոջ փոփոխություն կատարելու համար (ի վերջո, սեփականատիրոջ թեկուզ ձևական փոփոխությունն ինքնին արդեն իրավական հետևանք է)՝ բռնագանձումից խուսափելու նպատակով: Այլ հարց է, որ առաջացող իրավական հետևանքները չեն համապատասխանում կողմերի միջև փաստացի գոյություն ունեցող հարաբերություններին: Կողմերը, առաջացող իրավական հետևանքների միջոցով շղարշում են իրենց միջև իրականում գոյություն ունեցող հարաբերությունները: Նման պայմաններում չի կարելի պնդել, որ կեղծ գործարքները միշտ կնքվում են առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության:

Թիվ ՀՅՔԴ5/0043/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ դատարանը, բողոքը բավարարելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ կողմերի միջև կնքված առուծախի պայմանագիրն առաջացրել է իրավական հետևանքներ, այն է՝ առուվաճառքի պայմանագրի հիման վրա կատարվել է գույքի սեփականատիրոջ փոփոխություն. գնորդը օրենքով սահմանված կարգով կատարել է իր իրավունքների պետական գրանցում:

Վերը նշված խնդիրը լուծելու համար մեր կողմից փորձ է կատարվել մշակել կեղծ գործարքի առավել ամբողջական հասկացություն: Ընդ որում, մեր կողմից քննարկված տարբերակներից առավել նպատակահարմարը /որն այլ նորմերի հետ չի առաջացնում հակասություններ և բախումներ/ հետևյալն է. կեղծ է այն գործարքը, որը կնքվել է առանց արվյալ գործարքին բնորոշ հետևանքներ առաջացնելու մտադրության: Ընդ որում, «հետևանքներ» ասելով՝ պետք է հասկանալ ոչ թե միայն իրավական հետևանքները, այլ՝ գործարքից ծագող իրավական և փաստացի հետևանքների համակցությունը:

II. Շինծու գործարքներից բխող դատական վեճերի քննության առանձնահատկությունները քաղաքացիական դատավարությունում

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքը,**

առոչինչ է: Այդ գործարքի նկատմամբ, հաշվի առնելով դրա էությունը, կիրառվում են այն գործարքին վերաբերող կանոնները, որը կողմերն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս:

Շինծու գործարքը ևս չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածով գործարքների համար սահմանված չափանիշներին, քանի որ այստեղ նույնպես, ինչպես և կեղծ գործարքի դեպքում, բացակայում է տվյալ գործարքից բխող համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու նպատակը:

Այս առումով կեղծ և շինծու գործարքները միմյանցից ոչնչով չեն տարբերվում: Սակայն, ի տարբերություն կեղծ գործարքների, շինծու գործարքները կնքվում են ոչ թե զուտ ձևականորեն, այլ՝ մեկ այլ գործարքի քողարկման նպատակով, որը կողմերը մտադիր են իրականում կնքել կամ արդեն կնքել են:

Այդ պատճառով էլ շինծու գործարքի մասին խոսելիս պետք է տարանջատել երկու գործարք՝ 1. շինծու կամ քողարկող գործարքը, որը կնքվել է իրական գործարքի քողարկման նպատակով, 2. իրականում կնքված գործարքը՝ քողարկված գործարքը:

Առաջին գործարքը միշտ էլ առոչինչ է, իսկ երկրորդ գործարքի վավերության հարցը պետք է գնահատվի՝ ելնելով օրենքով նման գործարքի համար սահմանված կանոններից: Քողարկվող գործարքը կարող է լինել առոչինչ, վիճահարույց կամ վավեր:

Գործարքի շինծու լինելը կարող է ապացուցվել բոլոր թույլատրելի ապացուցման միջոցներով: Այս կապակցությամբ դեռևս ՌԽՖՍՀ գերագույն դատարանի քաղաքացիական գործերով կոլեգիան նշել է, որ շինծու գործարքի կնքումը կարող է հաստատվել բոլոր հնարավոր ապացուցման միջոցներով, այդ թվում նաև վկաների ցուցմունքներով, քանի որ քաղաքացիադատավարական օրենսդրությունն այդ կապակցությամբ չի նախատեսում որևէ սահմանափակում:¹²

Թեև շինծու գործարքների նունականացումն ինքնին այնքան բարդ չէ, որքան կեղծ գործարքներինը, այնուամենայնիվ պրակտիկայում դժվարություններ են առաջանում նաև գործարքի շինծու լինելու ապացուցման գործընթացում:

¹² Տե՛ս *Бюллетень ВС РСФСР, 1991, N 11, էջ 2:*

Հատկանիշները, որոնց հիման վրա կարելի է եզրակացություն անել գործարքի շինծու լինելու մասին, հնարավոր չէ սպառիչ թվարկել կամ ընդհանրացնել: Այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել շինծու գործարքների հետևյալ ընդհանուր բնորոշ գծերը.

Ա. Ցանկացած շինծու գործարքի կարևորագույն հատկանիշն այն է, որ կողմերը, դրա կնքման միջոցով, փորձում են քողարկել իրենց իրական մտադրությունները, այսինքն՝ **քողարկել այն գործարքը, որն իրենք իրականում նկատի են ունեցել:** Հետևաբար, եթե կողմերը գործարք կնքելիս բացեիբաց հայտարարում են իրենց իրական նպատակների մասին, ապա այստեղ շինծու գործարքի մասին խոսք լինել չի կարող, քանի որ այն ոչինչ չի քողարկում:

Բ. Գործարքի շինծու լինելու արտաքին չափանիշներից մեկը կարող է լինել կողմերի կողմից այդ գործարքից ծագող **պարտավորությունների փաստացի չկատարումը:**

Կա կարծիք, որ եթե գործարքից ծագող պարտավորությունները կատարվել են, ապա գործարքը շինծու համարվել չի կարող՝ թեկուզ և այն ի սկզբանե կնքված լինի մեկ այլ գործարքի քողարկման նպատակով և առանց այդ պարտավորությունների կատարման մտադրության:

Գ. Հաճախ շինծու գործարքները կնքվում են **հակաիրավական նպատակներով** օրենսդրական արգելքները և սահմանափակումները շրջանցելու նպատակով:

Ինչպես նշում է Ֆ. Ս. Հեյֆեցը, «կողմերը հաճախ շինծու գործարք են կնքում այնպիսի իրավական հետևանքների հասնելու համար, որոնց հնարավոր կլինեի հասնել քողարկված գործարքի կնքման միջոցով, եթե այն /քողարկված գործարքը/ հնարավոր լինեի ազատորեն կնքել»:¹³

Այդ պատճառով էլ կարծիք գոյություն ունի, որ եթե կողմերի իրական մտադրությունները հակաիրավական չեն, ապա դա խոսում է գործարքը շինծու չլինելու օգտին:

Սակայն այս պնդումը չի կարելի միանշանակ համարել, քանի որ գործնականում հաճախ քողարկվում են գործարքներ, որոնցում հակաիրավական ոչինչ չկա, սակայն

¹³ Տե՛ս Хейфец Ф.С. Недействительность сделок по российскому гражданскому праву. М., 1999, էջ 86:

կողմերն ինչ-ինչ պատճառներով ցանկանում են դրանք թաքցնել երրորդ անձանցից: Որպես ասվածի պրակտիկ օրինակ կարող ենք բերել թիվ ԵԿԴ/3017/02/09 քաղաքացիական գործը, որտեղ հայցվորի և պատասխանողի միջև կնքված գրավի պայմանագիրը քողարկվել էր առուծախի պայմանագրով: Ընդ որում, թե քողարկված գրավի պայմանագրում, թե դրա հիմք հանդիսացող փոխառության պայմանագրում որևէ հակահրավակական բան չկար¹⁴:

Դ. Շինծու գործարքը կնքվում է մեկ այլ գործարքի քողարկման նպատակով, հետևաբար գործարքը շինծու որակելու համար անհրաժեշտ է, որ **գործարքի բոլոր կողմերի մոտ գործարքի կնքման պահին առկա լինի տվյալ գործարքով մեկ այլ գործարք քողարկելու նպատակ:**

Այլ կերպ ասած՝ գործարքը կարող է շինծու որակվել միայն այն դեպքում, երբ *գործարքի բոլոր կողմերը գործել են գիտակցված և փոխհամաձայնեցված, հստակ գիտակցել են իրենց կողմից կնքվող գործարքի շինծու բնույթը, ինչպես նաև հասկացել են, թե դրանով իրականում ինչ գործարք են քողարկում:*

Այս կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ *երկկողմ գործարք կնքողներից միայն մեկ կողմի մոտ խաթարված կամքի առկայության դեպքում, այդ գործարքը չի կարող գնահատվել շինծու, քանի որ նման փաստերի առկայությունը հիմք է տալիս հանգելու հետևության, որ հարցը վերաբերում է խաթնությամբ կնքված գործարքին (վիճահարույց գործարք), որի համար օրենսդիրը սահմանել է անվավեր ճանաչելու այլ հիմքեր և դրանից բխող հետևանքներ:*¹⁵

Ե. Շինծու գործարքի դեպքում **թե քողարկող, թե քողարկված գործարքները պետք է կնքվեն միևնույն պայմանագրի առարկայի նկատմամբ:** Այս հանգամանքն արժևորվել է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից՝ թիվ 3-89 (ՏԴ) գործով 01.02.2008թ. և թիվ 3-623 (ՎԴ) գործով 28.11.2008թ. կայացված որոշումներում:

¹⁴ Տես թիվ ԵԿԴ/3017/02/09 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 10.03.2011թ. վճիռը:

¹⁵ Տես թիվ 3-793 (ՎԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.05.2007թ. որոշումը:

Գործնականում գործարքի շինծու լինելու հարցը յուրաքանչյուր գործով գնահատվում է հաշվի առնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքները:¹⁶ Եթե շահագրգիռ անձը չի կարողանում ապացուցել գործարքի շինծու լինելու փաստը, ապա դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, պետք է ելնի այն կանխավարկածից, որ գործարքի կողմերի ներքին կամքը համապատասխանում է արտահայտված կամահայտնությանը:

Ի տարբերություն կեղծ գործարքների, որոնց նույնականացման հստակ կանոններ դեռևս չկան, շինծու գործարքների վերաբերյալ գրեթե բոլոր դատական գործերով կայացված որոշումներում ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է ապացուցել, որ՝

1. գործարքն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև, կամ

2. այն ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին: Այսինքն՝ շինծու գործարքն առկա է այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկանում են ներկայացնել երրորդ անձանց:¹⁷

Պրակտիկայում հաճախ հայցվորները *շինծու գործարքները շփոթում են կեղծ գործարքների հետ*: Քիչ չեն այն դեպքերը, երբ հայցվորները հայցադիմումում հիմնավորում են գործարքի շինծու լինելը, սակայն նույն գործարքը որակում են որպես կեղծ: Նման մեկնաբանություններից գերծ չեն մնացել նաև դատարանները: Օրինակ, թիվ 3-

¹⁶ Օրինակ թիվ 3-89 (ՏԴ) գործով կայացրած որոշման մեջ վճռաբեկ դատարանը գործարքը շինծու ճանաչելու հիմքում դրել է քողարկող գործարքի անիրատեսանակությունը: Այն հանգամանքը, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որի գործունեության նպատակը շահույթ ստանալն է, իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը հանձնում է անհատույց օգտագործման, վճռաբեկ դատարանը համարել է անիրատեսական և փաստել այդ պայմանագրով մեկ այլ պայմանագրի /հատուցելի պայմանագրի/ քողարկման հանգամանքը:

¹⁷ Տես օրինակ թիվ 3-35 (ՎԴ), թիվ 3-89 (ՏԴ), թիվ 3-161 (ՎԴ), թիվ 3-163 (ՎԴ), թիվ 3-439 (ՎԴ), թիվ 3-425 (ՎԴ), թիվ 3-623 (ՎԴ), թիվ ԵՔԴ/0738/02/08, թիվ ԵՔԴ/0504/02/08, թիվ ՀՅՔԴ5/0043/02/08, թիվ ՀՅՔԴ2/0086/02/09, թիվ ՀՔԴ2/0053/02/08, թիվ ԵԱՔԴ/1624/02/09 և թիվ 3-793 (ՎԴ) քաղաքացիական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի կայացրած որոշումները:

1258 (ՏԴ) գործով կայացված վճռում ՀՀ տնտեսական դատարանը միևնույն գործարքը միաժամանակ որակել է և՛ կեղծ, և՛ շինծու:¹⁸

Շինծու գործարքների վերաբերյալ գործերով դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առավել հաճախ կնքվող շինծու գործարքները հետեվյալներն են՝

1. անշարժ գույքի առուծախի պայմանագիր, որը կնքվում է գրավի պայմանագրի քողարկման նպատակով /որպես փոխառության վերադարձնելիության ապահովման ե-դանակ/: Այսպիսի դեպքերում առուծախի շինծու պայմանագրերի հետ մեկտեղ հաճախ կողմերի միջև կնքվում են պարտավորագրեր, որով «գնորդը» պարտավորվում է չվա-ճառել անշարժ գույքը և փոխառության գումարը ստանալուց հետո այն վերադարձնել «վաճառողին»:¹⁹

2. Առուծախի պայմանագիր, որը կնքվում է երկու անձանց միջև, սակայն գրավոր պայմանագրի կողմերից մեկը գործարքի իրական կողմը չէ: Այսպիսի շինծու գործարքների միջոցով որոշակի սուբյեկտների միջև առկա իրական իրավահարաբերությունները քողարկվում են այլ սուբյեկտների միջև իրականում գոյություն չունեցող, սակայն ի ցույց դրվող իրավահարաբերություններով:

Օրինակ, քաղաքացին մտնում է նախապայմանագրային բանակցությունների մեջ, փաստացի ձեռք է բերում անշարժ գույք, վճարում է դրա արժեքը: Սակայն պայմանագրի ստորագրման պահին առուծախի պայմանագիրը իրական գնորդի փոխարեն ինչ-ինչ պատճառներով ստորագրում է որևէ երրորդ անձ, որի անունով էլ հետագայում կատարվում է սեփականության իրավունքի պետական գրանցումը: Այս դեպքում շինծու գործարքի անվավերության հետևանքն այն է, որ գործարքը կնքված է համարվում վաճառողի և իրական գնորդի միջև /գործարքի իրական կողմերի միջև/:

Թիվ 3-163 (ՎԴ) և թիվ ԵՔԴ/0738/02/08 քաղաքացիական գործերով դատարանը, առուծախի պայմանագրի շինծու լինելը հաստատելիս, հիմնվել է այն

¹⁸ Տես թիվ 3-1258 (ՏԴ) գործով ՀՀ տնտեսական դատարանի 11.05.2007 վճիռը:

¹⁹ Տես թիվ 3-1818 (ՎԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2007թ. որոշումը; թիվ 3-1149 (ՎԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.07.2007թ. որոշումը; թիվ 3-439 (ՎԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.07.2008թ. որոշումը և թիվ ՀՔԴ2/0053/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.02.2010թ. որոշումը:

հանգամանքի վրա, որ պայմանագրի առարկայի դիմաց վճարել է ոչ թե այն անձը, ով պայմանագրով հանդես է եկել որպես գնորդ, այլ՝ որևէ երրորդ անձ, այսինքն՝ գործարքը իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև:²⁰

3. Նվիրատվության պայմանագիր՝ հանդիպական պարտավորություններով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքի կամ իրավունքի հանդիպական հանձնման կամ հանդիպական պարտավորության առկայության դեպքում պայմանագիրը նվիրատվություն չի համարվում: Այդպիսի պայմանագրի նրկատմամբ կիրառվում են շինծու գործարքի համար նախատեսված կանոնները: Ընդ որում, շինծու նվիրատվության պայմանագրերն առավել հաճախ քողարկում են ցմահ ռենտայի հետ կապված գործարքները:²¹

III. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով կեղծ և շինծու գործարքների վերաբերյալ ասվածը՝ գտնում ենք, որ օրենսդրի այն մոտեցումը, որ կեղծ և շինծու գործարքները պետք է առջինն համարվեն, առաջացնում է խնդիրներ: Առջինն գործարքներն անվավեր են անկախ դրանք դատարանի կողմից այդպիսին ճանաչվելուց: Այսինքն, օրենքի տրամաբանությունից հետևում է, որ առջինն գործարքի տարրերում առկա արատն այնքան ակնհայտ պետք է լինի, որ դրա առջընչությունը հաստատելու համար անգամ դատարան դիմելու կարիք չլինի:

Ինչպես կեղծ գործարքները, այնպես էլ շինծու գործարքները դասվում են կամքի արատներով գործարքների թվին, քանի որ կողմերի պատշաճ ձևակերպված և արտահայտված կամահայտնությունը չի համապատասխանում նրանց ներքին կամքին:

²⁰ Տես թիվ 3-163 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.04.2008թ. որոշումը և թիվ ԵՔԴ/0738/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.07.2009թ. որոշումը:

²¹ Տես թիվ 3-425 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.07.2008թ. որոշումը; թիվ ԵՔԴ/0504/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 16.10.2009թ. որոշումը և թիվ ԵԱՔԴ/1624/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.06.2010թ. որոշումը:

Ինչպես հայտնի է, կամքի արատներով գործարքները հիմնականում վիճարկելի են, սակայն կեղծ և շինծու գործարքները օրենսդիրը համարում է առոչինչ, այսինքն՝ այդպիսի գործարքի անվավերությունը կարիք չունի դատական կարգով հաստատվելու:

Սակայն արտահայտված կամահայտնության և ներքին կամքի անհամապատասխանությունը ամենևին էլ ակնհայտ փաստ չէ: Այդ անհամապատասխանությունը հաստատելու համար անհրաժեշտ են բավարար ծանրակշիռ և համոզիչ ապացույցներ:

Գործարքի կեղծ կամ շինծու լինելը հիմնավորելու համար նախ և առաջ անհրաժեշտ է ապացուցել այն փաստերի առկայությունը, որոնք գործարքը դարձնում են կեղծ կամ շինծու: Իսկ այն անձը, ով պետք է հաստատի գործարքի կեղծ կամ շինծու լինելու հանգամանքը, չի կարող անել դա՝ առանց ապացույցներ գնահատելու և փաստական հանգամանքների նկատմամբ իրավունքի նորմեր կիրառելու:

Այսինքն, գործարքի կեղծ կամ շինծու լինելը կարելի է հաստատել միայն արդարադատություն իրականացնելու միջոցով, ինչը դատարանի բացառիկ ֆունկցիան է:

Այսպիսով, կեղծ և շինծու գործարքներն ունեն դատարանի կողմից անվավեր ճանաչվելու կարիք և այդ պատճառով էլ պետք է դասվեն ոչ թե առոչինչ, այլ՝ վիճարկելի գործարքների թվին:

**Էլեկտրոնային հեռահաղորդակցության ոլորտում
ծառայությունների մատուցման պայմանագրի հետ կապված
վեճերի առանձնահատկությունները ՀՀ դատարաններում**
(օրենսդրության և դատական պրակտիկայի վերլուծություն)

Կորյուն Թամրազյանս, փաստաբան

Սույն հոդվածում ներկայացվում է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հիման վրա գումարի բռնագանձման գործերի առանձնահատկությունները, մասնավորապես այն գործերով, երբ ծառայություն մատուցողը դիմում է դատարան մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը Պատվիրատուից բռնագանձելու համար: Առավել մանրամասն ներկայացված են նշված գործերով կողմերի ապացուցման պարպականությունները համաձայն ՀՀ դատական պրակտիկայի, միաժամանակ շեշտ դնելով կապի ոլորտի / էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հետ կապված գործերին:

Այսպես համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի նկատմամբ կիրառվում են կապալի պայմանագրի մասին ընդհանուր դրույթները և կենցաղային կապալի մասին դրույթները այնքանով, որքանով դրանք չեն հակասում ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի մասին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 777-780 հոդվածներին:

Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով ծառայություն մատուցողը պատվիրատուի առաջադրանքով կատարում է որոշակի գործողություններ կամ որոշակի գործունեություն, որի արդյունքը ի տարբերություն կապալի պայմանագրի ըստ էության շոշափելի չէ: Սա իր հերթին դժվարացնում է ծառայությունների մատուցված լինելը ապացուցելու խնդիրը դատական փուլում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ մասերը սահմանում են՝

«Հոդված 48. Ապացուցման պարպականությունը և ապացուցման առարկան

1. Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

2. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

...

6. Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

...»

ՀՀ քաղաքացիական դատավարության 149⁸ հոդվածի համաձայն նախնական դատական փուլում դատարանը գործը դատաքննության նախապատրաստելիս կողմերի հետ քննարկում է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և կողմերի միջև բաշխում է ապացուցման պարտականությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը իր մի շարք որոշումներում անդրադարձել է ապացուցման պարտականության, մասնավորապես վճռաբեկ դատարանը իր 13.02.2009թ.-ի ԵԱՆԴ/0479/02/08 որոշմամբ նշել է, որ

«Վերը նշված հոդվածի (ՀՀ քաղ. դատ. 48-րդ հոդված) վերլուծությունից հետևում է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար, դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում, դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով՝ կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:»: Սրանից հետևում է, որ ծառայություն մատուցողի հիմնական պարտականությունը ծառայությունները մատուցելն է, իսկ պատվիրատուինը՝ դրա դիմաց վճարելը: Հետևաբար ընդհանուր առմամբ ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի բռնագանձման գործերով էական

նշանակություն ունեցող միակ փաստը ըստ էության ծառայությունների մատուցված լինելը, եթե իհարկե չի վիճարկվում ծառայությունների դիմաց վճարում կատարված չլինելու հանգամանքը կամ ծառայությունների մատուցման գրավոր պայմանագրի առկայությունը:

Այժմ անդրադառնանք, թե կողմերից ում վրա դրվում վերը նշված փաստը ապացուցելու պարտականությունը: Այսպես վճռաբեկ դատարանը իր մի շարք որոշումներում անդրադարձել է ծառայության պատշաճ մատուցված լինելու և այն սահմանված կարգով և ժամկետներում կատարված լինելու հանգամանքների ապացուցման բեռին՝ արձանագրելով, որ ծառայության մատուցված լինելու հանգամանքի ապացուցման բեռը ամբողջությամբ կրում է կատարողը, վճռաբեկ դատարանը նաև նշել է, որ *աշխատանքները պատշաճ կատարված լինելու և այն հանձնված լինելու հանգամանքներն ապացուցելը կատարողի պարտականությունն է:*¹

Կատարողի կողմից ծառայությունները մատուցված լինելը հիմնավորելու համար կախված կոնկրետ գործի փաստական հանգամանքներից **որպես ապացույց** կարող են հանդես գալ երկկողմանի ստորագրված հաշիվ-ապրանքագրեր, ծառայությունները ընդունելու վերաբերյալ հանձնման-ընդունման ակտը, կամ որևէ այլ փաստաթուղթ, որով պատվիրատուն ըստ էության ընդունում է մատուցված ծառայությունները:²

Սակայն խնդիրը կտրուկ բարդանում է այն դեպքերում, երբ օբյեկտիվ պատճառներով առկա չեն կամ չեն պահվում երկկողմանի ստորագրված հաշիվ-

¹ Տե՛ս «Յունիպրոտեկտ Սիկյուրիթի» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «ԱՏԳ Սթոուն» ՍՊԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, թիվ ԵՇԴ/0681/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը, ինչպես նաև «Բլիը Սիթի» ՍՊԸ-ի անվճարունակության գործով կառավարիչ Լ. Պետրոսյանի հայցն ընդդեմ Երևանի Արաբկիրի թաղապետարանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, թիվ 3-299/ՏԴ քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը:

² տես «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հայցն ընդդեմ «Լևոն Նալթալյան» ԱԶ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, թիվ ԿԴ2/0002/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 14.10.2011 թվականի որոշումը, որտեղ Վճռաբեկ դատարանը գտել է, որ կատարողին ուղղված պատվիրատուի դիմումը, որով վերջինս ընդունել է, որ կատարողի կողմից մատուցված ծառայությունների արժեքը կազմում է XXX գումար, վերաբերելի ապացույց է

ապրանքագրեր կամ հանձնման ընդունման ակտերը կամ նմանատիպ այլ փաստաթղթեր: Այս խնդիրը ակտուալ է հատկապես կապի / էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի ծառայություններ մատուցող ընկերությունների համար, որտեղ գործարար շրջանառու սովորույթից ելնելով շատ դեպքերում նման փաստաթղթեր չեն ստորագրվում ծառայություններից օգտվող պատվիրատուների հետ, հատկապես սպառողներին մատուցված ծառայությունների դիմաց:

Մի շարք գործերում ծառայություն մատուցողների կողմից, մասնավորապես «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից, սկզբում փորձ է արվել ծառայությունները մատուցված լինելը և պատվիրատուի պարտքի չափը հիմնավորել ծառայություն *մատուցողի կողմից կազմված համապատասխան տեղեկանքներով*: Սակայն նշված գործերով վճռաբեկ դատարանը մերժել է ծառայություն մատուցողի պահանջը նշելով, որ «շրջանառու տեղեկանք»-ը բավարար չէ հայցվող գումարի չափը հիմնավորելու համար: Մասնավորապես՝ վերոնշյալ տեղեկանքում միայն նշված է բաժանորդի կողմից յուրաքանչյուր ամսվա համար ծառայություններից օգտվելու դիմաց վճարվելիք պարտքի չափը, իսկ այդ գումարի գոյացման հիմքը հիմնավորող ապացույց դատարան չի ներկայացվել:³

Այնուհետև իր հետագա մի քանի որոշումներով⁴ վճռաբեկ դատարանը վերահաստատել է վերը նշված որոշմամբ արտահայտած դիրքորոշումը, առ այն, որ «շրջանառու տեղեկանքը» բավարար չէ ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա հայցվող գումարի չափը հիմնավորելու համար: Միաժամանակ 29.07.2011 թվականի թիվ ԱՎԴ1/0009/02/10 որոշմամբ վճռաբեկ դատարանը հետազոտելով փաստեր, մեջբերել է տվյալ գործով ծառայությունների մատուցման պայմանագրի հետևյալ դրույթը՝ «Փաստացի մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա

³ Տե՛ս ըստ հայցի «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ընդդեմ Սվետլանա Շահագիզյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 18.09.2009 թվականի թիվ ԵԿԴ/3065/02/08 որոշումը:

⁴ Տե՛ս ըստ հայցի «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ընդդեմ Հերմինե Սարգսյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 04.03.2011 թվականի թիվ ՍԴ/0900/02/09 որոշումը, ինչպես նաև ըստ հայցի «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ընդդեմ «Էյ Ար-Այ Սի Թի» ՍՊԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 29.07.2011 թվականի թիվ ԱՎԴ1/0009/02/10 որոշումը:

գումարը որոշվում է օպերատորի բիլինգային համակարգի գրանցումների հիման վրա և նշվում է բաժանորդին ներկայացվող ծառայությունների մատուցման հաշվում: Ծառայությունների մատուցման հաշիվը հանդիսանում է բաժանորդին՝ ծառայությունների մատուցման փաստի և ծավալների վերաբերյալ ապացույց:» Հիմք ընդունելով վերոգրյալը և վերլուծելով ծառայությունների մատուցման պայմանագրի պայմանները՝ Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ տվյալ գործով հայցը հիմնավորող *միակ թույլատրելի ապացույցը ծառայություն մատուցողի կողմից պատվիրատուին ներկայացված ծառայությունների մատուցման փաստի և ծավալների վերաբերյալ հաշիվն է*, որը տվյալ գործում բացակայել է:

Այսպիսով վճռաբեկ դատարանը ոչ միայն գտել է, որ «շրջանառու տեղեկանքը» բավարար ապացույց չէ հիմնավորելու պատվիրատուի պարտքը, այլ ըստ էության «հուշել» է, թե որ փաստաթուղթը կարող է համարվել միակ թույլատրելի ապացույց նշված գործերով:

Հետևաբար արդեն հետագա գործերում ծառայություն մատուցողը պատվիրատուի պարտքը հիմնավորելու համար ներկայացնում է նաև ծառայությունների մատուցման հաշիվները, և տրամաբանորեն այդ գործերով ծառայություն մատուցողի հետագա վճռաբեկ բողոքները բավարարվում են: Մասնավորապես Վճռաբեկ դատարանը իր 27.12.2011թ. թիվ ԵԱՆԴ/1043/02/10 որոշմամբ նշել է հետևյալը.

«Նշված պայմանագրի ծառայությունների մատուցման պայմանների 5.1-ին կետի համաձայն՝ վճարումները բաժանորդի կողմից կատարվում են հաշվետու ժամանակաշրջանում իրեն մատուցված ծառայությունների դիմաց՝ համաձայն նույն պայմաններում սահմանված պայմանների, բաժանորդի կողմից ընդունված սակագնային պլանի, օգտագործած ծառայությունների ցանկի և ծավալների, իսկ 5.2-րդ կետի համաձայն՝ փաստացի մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարը որոշվում է Օպերատորի բիլինգային համակարգի գրանցումների հիման վրա և նշվում է բաժանորդին ներկայացվող ծառայությունների մատուցման հաշվում: Ծառայությունների մատուցման հաշիվը բաժանորդին՝ ծառայությունների մատուցման փաստի և ծավալների վերաբերյալ ապացույց է:

Հիմք ընդունելով վերոգրյալը և վերլուծելով կողմերի միջև կնքված պատվեր-դիմումի (պայմանագրի) ծառայությունների մատուցման պայմանները՝ Վճռաբեկ դատարանն արձանա-

գրում է, որ Ընկերության կողմից ներկայացված ծառայությունների մատուցման փաստի և ծավալների վերաբերյալ թիվ 101006885094, թիվ 101008203129, թիվ 101008877099 և թիվ 101009828473 հաշիվները սույն գործով հայցը հիմնավորող թույլատրելի և բավարար ապացույց են:»

Գրեթե նույնական դիրքորոշումը վճռաբեկ դատարանը հայտնել է իր մի շարք այլ որոշումներում⁵: Ընդ որում նշված բոլոր գործերում էական **նշանակություն չի ունեցել պատվիրատուի կողմից ծառայության մատուցման հաշիվները հաստատված / ստորագրված լինելու հանգամանքը:**

Այսպիսով հաշվի առնելով ամբողջ վերոգրյալը և վերլուծելով վճռաբեկ դատարանի վերը նշված պոարկտիկան կարող ենք անել հետևյալ եզրահանգումները՝

1) Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հիման վրա մատուցված ծառայության համար վճարման ենթակա գումարը բռնագանձելու գործերով **էական նշանակություն ունի ծառայության մատուցված լինելու փաստը,**

2) Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հիման վրա մատուցված ծառայության համար վճարման ենթակա գումարը բռնագանձելու գործերով **ծառայության մատուցված լինելը ապացուցելու պարտականությունը որպես կանոն դրվում է ծառայություն մատուցողի վրա,**

3) Կապի / էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի ծառայությունների համար վճարման ենթակա գումարը բռնագանձելու գործերով ծառայության մատուցված լինելը համավորող **թույլատրելի և բավարար ապացույց են ծառայություն մատուցողի կողմից ներկայացված ծառայությունների մատուցման հաշիվները, պայմանով, որ համապատասխան դրույթ առկա է կողմերի միջև ստորագրված ծառայությունների մատուցման պայմանագրում:**

⁵ տես՝ Վճռաբեկ դատարանի 27.12.2011թ. թիվ ԵԱՆԴ/1536/02/10, 29.06.2012թ. թիվ ԼԴ4/0154/02/11, 23.03.2012թ.-ի թիվ ԱՎԴ/0412/02/11, 23.03.2012թ.-ի թիվ ԱՎԴ/0402/02/11, 23.03.2012թ.-ի թիվ ԱՎԴ/0407/02/11 և 23.03.2012թ.-ի թիվ ԱՎԴ/0383/02/11

Վարկային պայմանագրի հասկացությունը և առանձնահատկությունները

Տիգրան Մարկոսյան, փաստաբան, ասպիրանտ

Ժամանակակից իմաստով վարկային պայմանագրի առաջացման նախադրյալ կարելի է համարել դեռևս հռոմեական իրավունքին հայտնի փոխառության պայմանագիրը (mutuum), որը հանդիսացել է ռեալ, միակողմ և անհատույց պայմանագիր:¹ Վարկային պայմանագրի առաջացումը, ըստ էության, պայմանավորված էր այն հանգամանքով, որ փոխառության պայմանագրի միջոցով չէր ապահովվում գույքային շրջանառության մասնակիցների, այդ թվում՝ գործարարների, կողմից անհրաժեշտության դեպքում փոխառություն ստանալու անվերապահ հնարավորությունը, քանի որ ռեալ բնույթ կրող փոխառության պայմանագրի շրջանակներում անհնար էր փոխատուին հարկադրել տրամադրելու փոխառության գումարը: Այդ պատճառով էլ ֆինանսական շուկայում, որտեղ իրականացվում է «փողերի առևտուրը», անհրաժեշտություն էր զգացվում այլ կոնսենսուալ բնույթի պայմանագրի, ինչպիսին հանդիսանում է վարկային պայմանագիրը:²

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 887 հոդվածի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանցից (1-ին կետ): Վերոհիշյալ նորմից հետևում է, որ վարկային պայմանագիրը, ի տարբերություն փոխառության պայմանագրի, կոնսենսուալ, երկկողմանի և հատուցելի պայմանագիր է:³

1 Пухан Иво, Поленак-Акимовская Мирьяна. Римское право (базовый учебник). Перевод с македонского д.ю.н. проф. В. А. Томсинова и Ю. В. Филиппова /Под ред. проф. В. А. Томсинова. – М.: “ЗЕРЦАЛО”, 1999, էջեր 246-247

2 Гражданское право: Учебник в 4 т. Том 4: Обязательственное право / [Витрянский В. В. и др.]; отв. ред. – Е. А. Суханов. 3-е изд., перераб. и доп. – М., “Волтерс Клувер”, 2006, էջ 413

3 Олейник О. М. Основы банковского права: Курс лекций. – М.: “Юристь”, 1997, էջ 321

Այն **կոնսենսուալ** է, որովհետև համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ, որպիսիք են՝ տոկոսները, այլ բանկային ծառայությունների արժեքը, կողմերի գույքային պատասխանատվությունը պայմանագրի խախտման համար, պայմանագրի դադարման (միակողմանի լուծման) կարգը և այլն: Հետևաբար, վարկային պայմանագրի կնքման պահից վարկառուն վարկատուին վարկի տրամադրմանը հարկադրելու իրավունք է ստանում:

Այդուհանդերձ, վարկային պայմանագրի կոնսենսուալ բնույթն ունի որոշակի առանձնահատկություններ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նախատեսվում է պայմանագիրը կատարելուց միակողմանի հրաժարվելու կողմերի իրավունքը: Մասնավորապես, վարկատուն իրավունք ունի լրիվ կամ մասամբ հրաժարվել վարկային պայմանագրով նախատեսված վարկը վարկառուին տրամադրելուց այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, որոնք ակնհայտ վկայում են, որ վարկառուին տրամադրված գումարը ժամկետին չի վերադարձվի: Վարկառուն էլ, իր հերթին, իրավունք ունի լրիվ կամ մասնակի հրաժարվել վարկն ստանալուց՝ այդ մասին մինչև պայմանագրով սահմանված վարկ տրամադրելու ժամկետը ծանուցելով վարկատուին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ վարկային պայմանագրով (889-րդ հոդված):

Բացի այդ, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի համաձայն վարկային պայմանագիրը կրում է կոնսենսուալ բնույթ՝ գործնականում երբեմն կնքվում են պայմանագրեր, որոնք ուժի մեջ են մտնում դրամական միջոցների փոխանցման պահից: Նրանց իրավաբանական էությունը մասնագիտական գրականության մեջ տարբեր մեկնաբանություններ է ստանում: Ենթադրվում է, որ նման պայմանագրերը հանդիսանում են վարկային պայմանագրի առանձին տեսակներ, որոնց կնքումը թեև ուղղակիորեն նախատեսված չէ օրենքով, բայց և արգելված չէ:⁴ Կարծում ենք՝ նման պայմանագրերը վարկային պայմանագրի տեսակ որակելը չի համապատասխանում վարկային պայմանագրի կոնսենսուալ բնույթին, քանի

⁴ Гражданское право: Учебник в 3 т. Т. 2 / Е.Н. Абрамова, Н.Н. Аверченко, К.М. Арсланов [и др.]; под. ред. А.П. Сергеева. – М.: “РГ-Пресс”, 2009, էջեր 586-587

որ դրամական միջոցների փոխանցման պահից կնքված համարվելը բնութագրական է փոխառության պայմանագրին, եթե նույնիսկ փոխատուի կողմում հանդես է գալիս բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը: Ասվածի օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածի համաձայն փոխառություն տրամադրելը հանդիսանում է վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող ֆինանսական գործառնություններից մեկը, իսկ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածը հնարավորություն է տալիս բանկերին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի թույլտվության հիման վրա իրականացնել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում ուղղակիորեն չնախատեսված գործառնություններ, այդ թվում՝ տրամադրել փոխառություններ:

Վարկային պայմանագրի կոնսենսուալ էությունից էլ բխում է նրա **երկկողմանի բնույթը**:⁵ Վարկային պայմանագիրը երկկողմանի է, քանի որ երկու կողմերն էլ ունեն և իրավունքներ, և պարտականություններ: Մասնավորապես, վարկատուն վարկային պայմանագրով ստանձնում է վարկառուին դրամական միջոցներ տրամադրելու պարտականություն, ինչպես նաև ձեռք է բերում իրավունք՝ պահանջելու հետ վերադարձնել այդ դրամական միջոցները պայմանագրով նախատեսված ժամկետը լրանալիս և տոկոսներ վճարել դրանցից: Վարկառուն էլ, իր հերթին, ձեռք է բերում իրավունք՝ պահանջելու իրեն հանձնել պայմանագրով նախատեսված միջոցները և ստանձնում է վարկատուին տոկոսներ վճարելու և պայմանագրի ժամկետը լրանալուց հետո ստացված միջոցները վերադարձնելու պարտականություն:

Վարկային պայմանագիրը հանդիսանում է **հատուցելի պայմանագիր**: Վարկային պայմանագրի հատուցելի բնույթն արտահայտվում է նրանում, որ վարկառուն պարտավոր է վարկի օգտագործման դիմաց վճարել տոկոսներ: Դրամական միջոցները օգտագործելու համար տոկոսները հաշվարկվում են ոչ թե վարկային պայմանագրի կնքման պահից, այլ դրամական միջոցները փաստացի ստանալու պահից: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ տոկոսները վարկի օգտագործման համար վճարվում են դրամական միջոցների ռեալ օգտագործման ժամանակահատվածի

⁵ Гражданское право. Учебник. Часть II / Под ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого. – М.: “ПРОСПЕКТ”, 1999, էջ 435

համար:⁶ Տոկոսները պետք է սահմանվեն վարկային պայմանագրով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդվածի 1-ին կետի պահանջի պահպանմամբ, ընդ որում, ելնելով պայմանագրի պայմանները միակողմանի փոփոխելու անթույլատրելիությունից, ֆինանսական անկայունության և հիպերինֆլացիայի պայմաններում վարկային պայմանագրում պետք է հստակ նախատեսվեն նաև տոկոսների հաշվարկային դրույքի փոփոխման և վարկի դիմաց վճարման պարբերականության վերանայման հիմքերը:⁷ Որպես այդպիսի հիմք կարելի է դիտարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից վերաֆինանսավորման դրույքի բարձրացումը: Վարկային պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում վարկատուն իրավունք է ստանում միակողմանի փոփոխել վարկային պայմանագիրը, ինչը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

Պետք է նշել, որ իրավաբանական գրականության մեջ չկա միասնական մոտեցում այն կապակցությամբ, թե արդյոք վարկային պայմանագիրը կարելի է դիտարկել որպես ինքնուրույն քաղաքացիաիրավական պայմանագիր: Նշված հարցի պարզաբանման նպատակով ընդունված է այն համեմատել փոխառության պայմանագրի հետ: Ուսումնասիրությունների արդյունքում հեղինակների մի մասը (Ռ. Ի. Կարիմովինը, Ե. Ա. Ֆլեյշիցը և այլք) վարկային պայմանագիրը որակում են որպես փոխառության պայմանագրի հատուկ տեսակ, իսկ մյուսները (Ե.Ա. Պավլոդսկին, Ս. Կ. Սոլովինը և այլք) որպես ինքնուրույն քաղաքացիաիրավական պայմանագիր:⁸

Այսպես, ըստ Ռ. Ի. Կարիմովինի.

«Փոխառության և վարկային պայմանագրերը ունեն առնվազն երեք ընդհանուր հատկանիշներ՝ պայմանագրի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը մյուս կողմին, փոխառուի պարտականությունը վերադարձնելու ստացած կապիտալը և կողմերի միջև հարաբերությունների տևական բնույթը: Միննույն ժամանակ, փոխառության պայմանագիրը

⁶ Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации части второй (постатейный). Изд. 5-е испр. и доп. с использованием судебно-арбитражной практики /Рук. авт. кол. и отв. ред. д.ю.н., проф. О. Н. Садилов. – М. “ИНФРА-М”, 2008, էջեր 467-468

⁷ Банковское право: учебник для вузов / Н. Д. Эриашвили. – 5-е изд., перераб. и доп. – М., “ЮНИТИ-ДАНА”, 2007, էջ 202

⁸ Витрянский В. В. Договор займа: общие положения и отдельные виды договора. – М.: “Статут”, 2004, էջ 252

ունի ավելի լայն սուբյեկտային (փոխատուի կողմում կարող են հանդես գալ ոչ միայն վարկային կազմակերպությունները) և առարկայական (փոխառության պայմանագրի առարկա կարող են լինել ոչ միայն դրամական միջոցները) կազմ, ինչպես նաև պարտադիր չէ դրանում վարձատրության վերաբերյալ պայմանի նախատեսումը: Վերոգրյալից հետևում է, որ ռուսական քաղաքացիական իրավունքը վարկային պայմանագիրը դիտարկում է որպես փոխառության պայմանագրի հատուկ տեսակ»:⁹

Իսկ Ե. Ա. Սուխանովը նշում է, որ վարկային պայմանագիրը և՛ սուբյեկտային կազմի, և՛ առարկայի առումով ունի կիրառման ավելի նեղ ոլորտ՝ ի տարբերություն փոխառության պայմանագրի: Այս հիմնավորմամբ նա գալիս է այն եզրակացության, որ վարկային պայմանագիրը հանդիսանում է փոխառության պայմանագրի հատուկ, ինքնուրույն տարատեսակ:¹⁰ Վերոշարադրյալ տեսակետի պաշտպանությամբ է հանդես եկել նաև Ե.Ա. Ֆլեյշիցը: Ըստ նրա վարկային և փոխառության պայմանագրերը ունեն մեկ ընդհանրություն, քանի որ երկուսի դեպքում էլ փոխառուն պարտավոր է վերադարձնել իրեն տրամադրված դրամական միջոցները:¹¹

Քիչ չեն նաև այն տեսակետի կողմնակիցները, ըստ որոնց վարկային պայմանագիրը հանդիսանում է ինքնուրույն քաղաքացիաիրավական պայմանագիր: Այսպես, Ե. Ա. Պավլոդսկին փոխառության և վարկային պայմանագրերի վերաբերյալ գրում է.

«Քաղաքացիական օրենսդրությանը հայտնի են երկու ինքնուրույն պայմանագրեր՝ փոխառության և վարկային: Նշված պայմանագրերի տարբերությունը նախ և առաջ կայանում է նրանում, որ վարկային պայմանագրով վարկատու կարող են լինել բանկերը և այլ վարկային կազմակերպությունները: Ի տարբերություն փոխառության պայմանագրի, վարկային պայմանագրի առարկա կարող են լինել միայն դրամական միջոցները: Ի վերջո, վարկային պայմանագիրը հանդիսանում է կոնսենսուալ պայմանագիր»:¹²

⁹ Брагинский М. И., Витрянский В. В. Договорное право. Книга пятая. В двух томах. Том 1: Договоры о займе, банковском кредите и факторинге. Договоры, направленные на создание коллективных образований. – М.: “Статут”, 2006, էջ 338

¹⁰ Гражданское право: Учебник в 4 т. Том 4: Обязательственное право / [Витрянский В. В. и др.]; отв. ред. – Е. А. Суханов. 3-е изд., перераб. и доп. – М., “Волтерс Клувер”, 2006, էջեր 413-414

¹¹ Ефимова Л. Г. Банковское право. Учебное и практическое пособие. – М.: “БЕК”, 1994, էջ 180

¹² Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации части второй (постатейный). Изд. 5-е испр. и доп. с использованием судебно-арбитражной практики /Рук. авт. кол. и отв. ред. д.ю.н., проф. О. Н. Садиков. – М. “ИНФРА-М”, 2008, էջ 459

Վարկային պայմանագիրը որպես ինքնուրույն քաղաքացիաիրավական պայմանագիր է դիտարկում նաև Ս. Կ. Սոլովինը, ով, մասնավորապես, նշում է.

«Վարկային պայմանագիրը հնարավոր կլիներ որակել որպես փոխառության հատուկ տարատեսակ, եթե դա բխեր օրենքի բովանդակությունից: Չարմանալի է, սակայն օրենսդիրը այդ մասին որևէ նշում չի արել համապատասխան գլուխներում: Բացի այդ, դժվար է պատկերացնել, որ ռեալ պայմանագրի (փոխառության պայմանագիր) տեսակը կարող է լինել կոնսենսուալ պայմանագիր (վարկային պայմանագիր): Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ տարբեր կառուցակարգեր (ռեալ և կոնսենսուալ) ունեցող պայմանագրերը չեն կարող հանդիսանալ մեկը մյուսի տարատեսակ»:¹³

Մեր կարծիքով վարկային պայմանագիրը հանդիսանում է փոխառության պայմանագրի հատուկ տեսակ և հարաբերակցվում է վերջինիս ինչպես տեսակը սեռին: Այս մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ երկու պայմանագրերի դեպքում էլ ծագում է փոխատուի պարտականությունը պայմանագրով նախատեսված ժամկետում վերադարձնելու ստացած դրամական միջոցները: Իսկ տեսակի և սեռի միջև եղած կապերը ենթադրում են, որ տեսակը, ունենալով սեռին վերաբերող բոլոր հատկանիշները, միաժամանակ ունի որոշ առանձնահատուկ գծեր, որոնք էլ թույլ են տալիս նրան առանձնացնել որպես սեռի առանձին տեսակ: Որպես փոխառության պայմանագրի հատուկ տեսակ վարկային պայմանագիրն ունի հետևյալ *չորս առանձնահատկությունները*.

1. վարկային պայմանագիրը, ի տարբերություն փոխառության պայմանագրի, կրում է **կոնսենսուալ բնույթ**,

2. հաջորդ էական առանձնահատկությունը դրսևորվում է վարկային պայմանագրի **սուբյեկտային կազմի առումով**, մասնավորապես, վարկային պայմանագրով որպես վարկատու կարող է հանդես գալ **միայն բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը**: Հետևաբար, այն դեպքում, երբ որոշակի դրամական միջոցներ հանձնելու պարտականություն նախատեսող պայմանագրով որպես վարկատու հանդես է գալիս բանկ կամ այլ վարկային կազմակերպություն չհանդիսացող կազմակերպությունը, ապա նման պայմանագիրը չի կարող որակվել որպես վարկային: Այդ

¹³ Соломин С. К. Банковский кредит. Проблемы теории и практики. Чита, "Юстицинформ", 2009, էջեր 105-106

պայմանագիրը, ըստ էության, հանդիսանում է փոխառության պայմանագիր, որը տվյալ դեպքում կնքված կհամարվի դրամական միջոցների փոխանցման պահից,

3. վարկային պայմանագրի առարկա կարող են լինել **միայն դրամական միջոցները**, բայց ոչ երբեք տեսակային հատկանիշներով որոշվող իրերը՝ ի տարբերություն փոխառության պայմանագրի,

4. վարկային պայմանագիրը **միշտ կրում է հատուցելի բնույթ**, այսինքն՝ վարկառուն ստացած դրամական միջոցները օգտագործելու համար պարտավոր է վճարել համապատասխան գումարի համար հաշվարկած տոկոսներ:¹⁴

Ընդ որում, վերջին երկու հատկանիշները առանձին չեն հանդիսանում վարկային պայմանագրի առանձնացման հիմք, քանի որ դրանք բնութագրական են դրամական միջոցների ցանկացած հատուցելի փոխառության պայմանագրին: Կարելի է ասել, որ դրանք լրացնում են վարկային պայմանագրի ընդհանուր բնութագիրը:

Կարծում ենք՝ այն տեսակետի օգտին, որ վարկային պայմանագիրը հանդիսանում է փոխառության հատուկ տեսակ, խոսում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 2-րդ կետը, որի համաձայն.

«Վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 46 գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով»:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոխառության պայմանագրի մասին բոլոր կանոնները՝ փոխառության պայմանագրի տոկոսների, փոխառուի՝ փոխառության գումարը վերադարձնելու պարտականության, փոխառուի կողմից փոխառության պայմանագրի պայմանները խախտելու հետևանքների, փոխառության նպատակային բնույթի վերաբերյալ, ուղղակիորեն կիրառվում են վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ, քանի որ օրենքից և վարկային պայմանագրի էությունից այլ բան չի բխում:¹⁵

¹⁴ Витрянский В. В. Договор займа: общие положения и отдельные виды договора. – М.: “Статус”, 2004, էջեր 251-252

¹⁵ Ս.Գ. Մեղրյան. Վարկային և հաշվարկային հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորումը, Երևան, 2000, էջեր 25-26

Ուշադրության է արժանի վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ փոխառության պայմանագրի մասին կանոնների կիրառման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանի դիրքորոշումը: Մանսավորապես, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետև՝ նաև ՀՀ վճռաբեկ դատարան), քննելով «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի Եղեգնաձորի մասնաճյուղի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.12.2008թ որոշման դեմ, եկել է հետևյալ եզրահանգման.

«Վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոխառությանը վերաբերող 46 գլխում նախատեսված **կանոնները չեն կիրառվում, եթե կողմերը այլ կանոններ են սահմանել վարկային պայմանագրով, և որոնք չեն հակասում վարկային հարաբերությունները կարգավորող նորմերի պահանջներին:** Ընդ որում օրենսդիրը, ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ և 437-րդ հոդվածներում ամրագրված պայմանագրի ազատության սկզբունքից, կողմերին հնարավորություն է տալիս պայմանները որոշել իրենց հայեցողությամբ, բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկին վերաբերող 47-րդ գլխի իմպերատիվ նորմերով»:¹⁶

Արդյունքում, ՀՀ վճռաբեկ դատարանը, անտեսելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, նշված գործով իրավաչափ է համարել վարկային պայմանագրով նախատեսված ժամկետանց վարկի նկատմամբ սահմանված տարեկան 28% տոկոսադրույքի և ժամկետանց տոկոսագումարների նկատմամբ յուրաքանչյուր օրվա համար սահմանված 0.2% չափով տույժի վերաբերյալ պայմանները:

Մեր կարծիքով, նշված որոշմամբ չի ապահովվում օրենքի ճիշտ մեկնաբանությունը հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն. «Քաղաքացիական իրավական նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «Վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն

¹⁶ Տե՛ս թիվ ԱՎԴ/4/0145/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.17.2009 թ. որոշումը

օրենսգրքի 46 գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45 հոդվածի 10-րդ մասի համաձայն. «Եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:

Եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը...»:

Վերոհիշյալ նորմերի համադրումից հետևում է, որ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոխառությանը վերաբերող 46 գլխում նախատեսված կանոնները չեն կիրառվում միայն այն դեպքում, եթե այլ բան է նախատեսված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 47 գլխի կանոններով և վարկային պայմանագրով: Ընդ որում, այս երկու պայմանների միաժամանակյա առկայությունը պարտադիր է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոխառությանը վերաբերող 46 գլխում նախատեսված կանոնները չկիրառելու համար: Մինչդեռ, ՀՀ վճռաբեկ դատարանը, մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 2-րդ կետը, **փոխառության պայմանագրի վերաբերյալ կանոնների կիրառումը բացառելու համար բավարար է համարել միայն վարկային հարաբերությունները կարգավորող նորմերի պահանջներին չհակասող այլ կանոններ նախատեսող վարկային պայմանագիրը:**

ՀՀ վճռաբեկ դատարանի նման դիրքորոշման պայմաններում, եթե այլ բան նախատեսված չի վարկային պայմանագրով, գործնականում բացառվում է վարկային պայմանագրի՝ որպես փոխառության պայմանագրի հատուկ տեսակի, կարգավորման նպատակով փոխառության պայմանագրի վերաբերյալ կանոնների կիրառումը: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 2-րդ կետի այդպիսի մեկնաբանությունը լայն հնարավորություն է ընձեռում բանկերին և այլ վարկային կազմակերպություններին շրջանցել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ և 881-րդ հոդվածներով նախատեսված սահմանափակումները: Հետևաբար, գտնում ենք, որ ճիշտ

իրավակիրառ պրակտիկա ձևավորելու նպատակով անհրաժեշտ է վարկային պայմանագիրը դիտարկել որպես փոխառության պայմանագրի հատուկ տեսակ, որի կարգավորման նպատակով սուբսիդիար կարգով կիրառման ենթակա են փոխառության պայմանագրի մասին կանոնները՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների պահպանման պայմանով:

Գյուտի իրավական պահպանության առանձնահատկությունները

Սիմոն Ֆարմանյան, փաստաբան, ասպիրանտ

Գյուտի իրավական պահպանության վերաբերյալ օրենսդրությունը Հայաստանի Հանրապետությունում կառուցվածքային ենթակայության տեսանկյունից ունի հետևյալ բովանդակությունը՝ ՀՀ Սահմանադրություն, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենք և այլ իրավական ակտեր: Նման տրամաբանության հիման վրա է մշակված նաև «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի՝ արդյունաբերական սեփականության օբյեկտների մասին օրենսդրությունը սահմանող 3-րդ հոդվածը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում արտոնագրային իրավունքի զարգացումն իրականացվում է հիմնականում Եվրոմիության երկրների կողմից առաջ քաշված և միջազգային հանրության կողմից ընդունված սկզբունքների հիման վրա: Այդ են վկայում համապատասխան իրավական ակտերի հիմքում դրված որոշակի մոտեցումները:

Միջազգային սկզբունքների հիման վրա գյուտի ստեղծման և օգտագործման կապակցությամբ գոյություն ունեն երկու իրարամերժ մոտեցումներ: Զարգացած երկրների կողմից պաշտպանվում է այն դիրքորոշումը, որ միջազգային պայմանագրերի լույսի ներքո գյուտի արտոնագրային պահպանությունը բխում է ողջ հասարակության շահերից, և այն ուղղված է գիտության ու տեխնիկայի զարգացմանը, հեղինակների իրավունքների պաշտպանությանը: Նմանատիպ մոտեցման ազդեցությունն է կրում նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

Մյուս կողմից մի շարք հետազոտողներ գտնում են, որ գյուտի իրավական պահպանության ներկայիս ձևը ստեղծված է օժանդակելու զարգացած երկրներին. գյուտի իրավական պահպանությունը միջազգային պայմանագրերի հիման վրա քննադատվում է, քանի որ այն չի համապատասխանում զարգացող երկրների տնտեսական շահերին. դրա միջոցով որոշ երկրներ իրենց ֆինանսական միջոցների շնորհիվ տնտեսապես թույլ

զարգացած երկրների հաշվին հնարավորություն են ստանում գիտության և տեխնիկայի բնագավառում ձեռք բերել մենաշնորհ¹: Հարկ ենք համարում նշել, որ այս խնդիրը Գավրիլովի կողմից ներկայացվում է որպես սոցիալիստական և կապիտալիստական համակարգերի բախում: Այս տեսակետը որոշակիորեն կրում է ժամանակի ազդեցությունը: Գավրիլովը, լինելով սոցիալիստական ժամանակաշրջանի ուսումնասիրող, առկա խնդիրները փորձել է ներկայացնել սոցիալիստական և կապիտալիստական համակարգերի բախման տեսանկյունից: Սակայն ներկայումս հետսոցիալիստական երկրներում Գավրիլովի և նրան համախոհ գիտնականների կողմից առաջ քաշված հարցադրումը ոչ թե պետք է մեխանիկորեն մոռացության մատնվի, այլ պետք է ուսումնասիրվի ներկա իրավական և տնտեսական համակարգերի լույսի ներքո:

Օրինակ՝ «Արեգակնային էլեկտրաջերմակայան ըստ Հերունու» անվանմամբ գյուտն իրենից մեծ հետաքրքրություն է ներկայացնում միջազգային շուկայում: Եվ եթե գյուտի հեղինակը, մոռանալով իր գիտելիքների ձևավորման համար ներդրում ունեցած հայրենական գիտության ավանդը, օգտվեր միջազգային պայմանագրերում ամրագրված իրավունքներից և իր գույքային իրավունքները փոխանցեր օտարերկրյա անձանց, կստեղծվեր իրավիճակ, որ պետությունը, ի դեմ խորհրդային միության, կատարել է ներդրումներ կրթության և գիտության բնագավառում, սակայն դրա արդյունքը անցնում է օտարերկրյա տնտեսավարող սուբյեկտներին:

Այս երկու դիրքորոշումների բախման արդյունքում բարձրացվում է այն հարցադրումը, թե գյուտի իրավական պահպանության կապակցությամբ տարբեր զարգացման մակարդակ ունեցող երկրներն ինչպիսի մոտեցում պետք է ցուցաբերեն. շարժվել միջազգային պայմանագրերից, ինչպես նաև զարգացած երկրների օրենսդրությունից բխող սկզբունքներից ելնելով, թե որդեգրել հարցի կարգավորման սեփական ձևը՝ կախված երկրի տնտեսական կարգավիճակից:

Նշված խնդրի բացահայտման համար անհրաժեշտ է անդրադառնալ գյուտի իրավական պահպանության պատմական նախադրյալներին, որպեսզի հասկանալի լինի՝ զարգացած երկրների կողմից ընդունված և միջազգային պայմանագրերում ընդգրկված

¹ Ст'ю Судариков С.А. Право Интеллектуальной собственности. М., 2008, էջ 142, ինչպես նաև Гаврилов Э.П. Основные положения патентного права США, М., 1966, էջեր 5-8

սկզբունքները հանդիսանում են օբյեկտիվ իրականությունից բխող, թե հասարակության զարգացած շրջանակների շահերը սպասարկող միջոց:

Արտոնագրային իրավունքի ծագումը կապվում է 1474 թվականին Վենետիկի հանրապետության կողմից ընդունված արտոնագրերի մասին օրենքի հետ²: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ Վենետիկից հետո արտոնագրային իրավունքը շարունակում է զարգանալ այն երկրներում, որոնք առանձնանում էին իրենց զարգացած տնտեսություններով: Մասնավորապես, Վենետիկից հետո գյուտերի իրավական պահպանությանն օրեսդրորեն անդրադարձել են Անգլիան (1674թ.), Ֆրանսիան (1791թ.), ԱՄՆ-ն (1790թ.) և այլ երկրներ, որտեղ զարգանում էր արդյունաբերությունն ու առևտուրը³:

1474 թվականին Վենետիկի հանրապետության կողմից ընդունված արտոնագրերի մասին օրենքով առաջին անգամ խոսվում է արտոնագրային իրավունքի ֆունկցիոնալ նշանակության մասին: Մասնավորապես, դրա նախաբանում նշվում էր, որ հասարակության մեջ առանձնանում են անձինք, ովքեր իրենց վառ երեւակայության շնորհիվ կարողանում են զբաղվել գյուտարարությամբ: Այս օրենքի նպատակն էր հանրապետության ներսում ստեղծված և ստեղծվելիք նորարարությունները պաշտպանել ընդօրինակումներից⁴:

Այս օրենքի ընդունում զուտ բարի կամքի դրսևորում չէր գյուտարարների իրավունքների պաշտպանությանն ուղղված: Իրականում այն իր մեջ պարունակում է խորը տնտեսական հիմքեր: Արտոնագրային իրավունքի զարգացմանը խրախուսելով (մասնավորապես, եթե անձինք Վենետիկում էին օբյեկտիվացնում իրենց մտավոր գործունեության արդյունքները, մենաշնորհ էին ձեռք բերում դրանց օգտագործման կապակցությամբ՝ իրենց մրցակիցների նկատմամբ հայտնվելով բարենպաստ դիրքում)

² Տե՛ս Stephan R. Adams. Information sources in patents. Munich, 2006, էջ 84, ինչպես նաև Камиль Идрис. Интеллектуальная собственность – Мощный инструмент экономического роста. М., 2004, էջ 15

³ Տե՛ս Черный А.А. Защита интеллектуальной собственности, Пенза, 2005, էջ 77, Гаврилов Э.П. Основные положения патентного права СПА, М., 1966, էջ 3, ինչպես նաև Жаанов А.А., Матвеев Г.А. Тенденции к унификации патентного права в зарубежных странах. М., 1974, էջ 3

⁴ Տե՛ս Ove Granstrand. The economics and management of intellectual property: towards intellectual capitalism. Cheltenham, UK, Northampton, MA, USA, 1999, էջ 32:

Վենետիկը նպատակ էր հետապնդում օտարերկրյա ինտելեկտուալ շրջանակների ներհոսք կազմակերպել՝ դրա դիմաց նրանց խոստանալով արտոնագրային իրավունքների պաշտպանություն: Հետագայում այս պարզ տրամաբանության հիման վրա էլ զարգացավ և իր այսօրվա վերաիմաստավորված ձևը ստացավ արտոնագրային իրավունքը (այս կապակցությամբ ԱՄՆ նախագահ հայտնի գյուտարար Աբրահամ Լինկոլնը տիպիկ բնորոշել է արտոնագրային իրավունքը հետևյալ կերպ «Արտոնագրային համակարգն այն միջոցն է, որ հանճարեղ երևակայության խարույկն ապահովում է հետաքրքրասիրություն կոչվող վառելանյութով»):⁵

Սակայն մինչև այժմեական կարգավորման ձևը ստանալը գյուտի իրավական պահպանությունն անցել է որոշակի զարգացման ճանապարհ: Այդ ընթացքում արտոնագրային իրավունքը բացի վերը նշվածից ձեռք է բերել նաև նոր ֆունկցիոնալ նշանակություն:

Այսպիսով, զարգացած երկրները, ընդունելով գյուտի իրավական պահպանությանն ուղղված ակտեր, ստեղծեցին այն պայմանները, որ նոր տեխնոլոգիաները կիրառություն գտնեն հենց այդ երկրներում: Սակայն 19-րդ դարի կեսերին առաջ է գալիս նոր խնդիր: Զարգացած պետությունները, իրենց երկրի ներսում ապահովելով գյուտերի իրավական պահպանությունը և նպաստելով սեփական տնտեսության մեջ նորարարությունների ավելացմանը, չէին կարողանում դուրս գալ միջազգային շուկա:

Մասնավորապես, 1873 թ. բազմաթիվ օտարերկրյա մասնակիցներ հրաժարվեցին մասնակցել Վիենայում կայանալիք գյուտերի միջազգային ցուցահանդեսին, քանի որ վերջիններս մտավախություն ունեին, որ իրենց գաղափարները կվերցվեն և կօգտագործվեն մրցակից երկրների կողմից⁶:

Նշվածով պայմանավորված էլ սկիզբ դրվեց մտավոր սեփականության օբյեկտների՝ այդ թվում նաև գյուտի միջազգային իրավական պաշտպանությանը: Մասնավորապես, 1883 թ. մարտի 20-ին Փարիզում ստորագրվեց «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» կոնվենցիան: Այս կոնվենցիայի նպատակն այն է, որ

⁵ Տե՛ս Дахно И.И. Патентование и лицензирование. Киев, 2004, 139-140 էջեր:

⁶ Տե՛ս Камилль Идрис. Интеллектуальная собственность – Мощный инструмент экономического роста., М., 2004, էջ 18

անդամ յուրաքանչյուր երկիր կոնվենցիայի մյուս անդամ երկրների համապատասխան անձանց նկատմամբ ազգային մոտեցում ցուցաբերի: Որպես նշվածի դրսևորում է հանդիսանում «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 4 հոդվածը, որի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերին համապատասխան կամ փոխադարձության սկզբունքով օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք օգտվում են ՀՀ օրենքով նախատեսված իրավունքներից և կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին և իրավաբանական անձանց համահավասար:*

Գյուտի միջազգային իրավական պաշտպանությունը Փարիզյան կոնվենցիայում իրացվեց չորս հիմնական միջոցներով⁷, որոնք մինչև այսօր էլ կիրառելի են հայտի ներկայացման առաջնության լույսի ներքո.

ա) Միջազգային հանրային իրավունքի նորմերի միջոցով: Օրինակ՝ կոնվենցիայի 12 հոդվածով Միության (Փարիզյան կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ երկրները, որոնց նկատմամբ կիրառվում է քննարկվող կոնվենցիան, ստեղծում են արդյունաբերական սեփականության Միություն) անդամ երկրներին պարտավորեցվում է ստեղծել հատուկ ծառայություն պաշտոնական պարբերական տեղեկագրեր հրատարակելու համար:

բ) Միության անդամ երկրներին արդյունաբերական սեփականության պահպանությանը վերաբերող օրենքներ ընդունելուն պարտավորեցնող կամ իրավունք վերապահող նորմերի միջոցով: Օրինակ՝ Փարիզյան կոնվենցիայի 5 BIS հոդվածի երկրորդ մասով Միության երկրներին իրավունք է վերապահվում նախատեսել գյուտերի նկատմամբ արտոնագրերի վերականգնում, որոնք իրենց ուժը կորցրել են տուրքի չվճարման հետևանքով, կամ նույն կոնվենցիայի 11 հոդվածով Միության անդամ երկրները պարտավորեցվում են օրենքներ ընդունել գյուտերի ժամանակավոր պահպանության կապակցությամբ:

գ) Մասնավոր անձանց արդյունաբերական սեփականության հետ կապված իրավունքները և պարտականությունները համապատասխան ազգային օրենսդրության

⁷ St'u Боденхаузен Г. Парижская конвенция по охране промышленной собственности. Комментарий, М., 1977, էջեր 17-25

կարգավորմանն ուղղված նորմերի միջոցով: Մասնավորապես, Փարիզյան կոնվենցիայի 2 հոդվածի համաձայն Միության յուրաքանչյուր երկրի քաղաքացի Միության բոլոր այլ երկրներում օգտվում է նույնպիսի առավելություններից, որոնք տրամադրվում են սեփական քաղաքացիներին:

դ) Մասնավոր անձանց համապատասխան իրավունքների և պարտականությունների անմիջական կարգավորմանն ուղղված նյութական իրավունքի նորմերի միջոցով: Օրինակ՝ նմանատիպ նորմ է նախատեսում Փարիզյան կոնվենցիայի 1-ին հոդվածը, որը սահմանում է արդյունաբերական սեփականության հասկացությունը:

Փարիզյան կոնվենցիայի սկզբունքների հիման վրա հետագայում Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում ընդունվեց «Մտավոր սեփականության իրավունքների առևտրին առնչվող հայեցակետերի մասին» Մարաքեշի համաձայնագիրը⁸: TRIPS համաձայնագրի հիմնական նպատակը կայանում է Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ երկրներում ստեղծել մտավոր սեփականության վերաբերյալ այն նվազագույն պայմանները, որոնք բխում են Փարիզյան կոնվենցիայից և ընդունելի են ԱՀԿ-ի համար⁹: Այլ կերպ՝ TRIPS համաձայնագրի նպատակային նշանակությունը կայանում է նրանում, որ սրա միջոցով հող է նախապատրաստվում Փարիզյան կոնվենցիայի նորմերը ազգային օրենսդրության մեջ լավագույնս իմպլեմենտացնելու համար:

Այսպիսով, Վենետիկի հանրապետության կողմից արտոնագրերի մասին օրենքի ընդունումով սկսվում և Փարիզյան կոնվենցիայի ընդունմամբ ավարտվում է գյուտի իրավական պաշտպանության հիմնական նշանակության ձևավորումը: Պատմական այս փուլը թույլ է տալիս նշել, որ արտոնագրային իրավունքը որպես այդպիսին ունի մեկ հիմնարար նպատակ. գիտության և տեխնիկայի զարգացման համար ստեղծել արդյունավետ՝ տնտեսապես հիմնավորված, իրավական կառուցակարգեր համապատասխան երկրների շրջանակներում (խոսքը գնում է այն երկրների մասին, որոնք Փարիզյան կոնվենցիայով ստեղծված Միության անդամ են): Այդ կառուցակարգերի հիմնաքարն է

8 այսուհետ՝ նաև TRIPS համաձայնագիր:

9 Sŕu Catherine Colston. Principles of intellectual property law (Principles of law series) – Law and legislation – Great Britain 1999, էջ 11:

հանդիսանում գյուտի իրավատիրոջը տրված արտոնագիրը, որով իրավատերը մենաշնորհ է ձեռք բերում գյուտի օգտագործման կապակցությամբ:

Նշվածից հետևում է՝ գյուտի իրավական պահպանության կապակցությամբ զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրները պետք է ցուցաբերեն այն մոտեցումը, որ արտոնագրային իրավունքի նպատակը գիտության և տեխնիկայի զարգացումն է գյուտարարների իրավունքների պաշտպանության համատեքստում: Այսինքն, անկախ ունեցած զարգացման մակարդակից պետությունները խնդրի լուծմանը պետք է մոտենան այն տեսանկյունից, որ արտոնագրային իրավունքի նպատակն է գիտության և տեխնիկայի զարգացումը:

Այլ կերպ՝ գյուտի իրավական պահպանության վերաբերյալ վերևում նշված տեսակետների բախումը պետք է փնտրել ոչ թե տարբեր երկրներում արտոնագրային իրավունքի ունեցած նպատակների հակասության, այլ այդ նպատակներին ուղղված միջոցների հակասությունների մեջ:

Տվյալ պարագայում խոսքը գնում է հետևյալ հիմնական հակասության մասին: Զարգացած երկրները արտոնագրային իրավունքի զարգացման որպես հիմնական միջոց ներկայացնում են գյուտարարների իրավունքների առավելագույն պաշտպանությունը, որի արդյունքում «Արեգակնային էլեկտրաջերմակայան ըստ Հերունու» անվանմամբ գյուտի օրինակով զարգացող երկրներում կրթության և գիտության բնագավառի ֆինանսավորումը կարող է դառնալ ոչ հեռանկարային: Այլ կերպ՝ գիտության և տեխնիկայի զարգացումը նման մոտեցման արդյունքում կարող է կենտրոնանալ որոշակի խումբ պետություններում՝ մոռացության մատնելով այն գիտական ներուժը, որ ունեն զարգացող երկրները:

Մյուս կողմից գյուտարարների իրավունքների ոչ ընդգծված պաշտպանությունը արտոնագրային իրավունքի զարգացման որպես հիմնական միջոց դարձնելը կարող է հանգեցնել այն խնդրին, որն առկա էր 1873 թ. Վիենայում կայացած գյուտերի միջազգային ցուցահանդեսում:

Հետևաբար Հայաստանի Հանրապետությունը և մնացած բոլոր պետությունները համապատասխան օրենսդրության ձևավորման ժամանակ պետք է ելնեն գյուտարարների իրավունքների պաշտպանության և սեփական երկրում կրթության և գիտության

զարգացման համաչափության սկզբունքից, որը, օրինակ, օտարերկրյա գրականության մեջ վերաիմաստավորված ձևով ներկայացվում է բժշկության ոլորտում կատարված գյուտերի օբյեկտիվ անհրաժեշտության և դրանց հեղինակների իրավունքների պաշտպանության տեսանկյունից՝ շեշտը դնելով արդարության և մտավոր սեփականության փոխազդեցության վրա¹⁰:

Օրինակ՝ հարցի մի փոքր այլ կերպ նմանատիպ կարգավորում է նախատեսվում նաև պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող գյուտերի իրավական պահպանության ժամանակ, երբ հակակշիռների օգնությամբ փորձ է կատարվում առավելագույնս պահպանել հանրային և մասնավոր շահերը:

Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում նաև օտարերկրյա փորձը: Մասնավորապես, Չինաստանում և Հնդկաստանում երկար տարիներ իրավական պահպանություն չէր տրվում քիմիական միջոցներով ստացված խմիչքներին, ուտելիքին, դեղերին և այլն՝ կապված այդ երկրներում նշված ապրանքների արտադրության թերզարգացվածությամբ: Եվ միայն արտադրության նշված ոլորտների զարգացմամբ պայմանավորված արտոնագրաունակ համարվեցին նաև վերը նշված բնագավառներում կատարված գյուտերը¹¹: Այլ կերպ՝ վերը նշված երկրները պայմանավորված ազգային կամ հանրային շահով օտարերկրյա ներդրողներին չընձեռեցին արտոնագրից բխող մենաշնորհով, որպեսզի ազգային շուկայում գերիշխող դիրք գրավեն հայրենական արտադրողները:

Արտոնագրային իրավունքի՝ այդ թվում նաև գյուտի իրավական պահպանության զարգացման երկրորդ պատմական փուլը հանդիսանում է Փարիզյան կոնվենցիայի ընդունումից հետո ընկած ժամանակահատվածը, երբ գյուտի իրավական պահպանությունը ստացավ որակական նոր իմաստ: Այս ժամանակահատվածում տնտեսագետներն իրավաբանների առջև դրեցին երկրորդ խնդիրը. ստեղծել առավելագույնս քիչ ծախսատար իրավական կառուցակարգեր մտավոր սեփականության օբյեկտների՝ այդ թվում նաև գյուտի իրավական պահպանության համար:

¹⁰ Տե՛ս Axel Gosseries, Alain Marciano, Alain Strowel. Intellectual property and theories of justice. Great Britain, 2008, 240-242 էջեր:

¹¹ Տե՛ս Еременко В.И., «О применении теории эквивалентов в рамках Евразийской патентной системы». «Изобретательство» №10, 2011, էջեր 5-6

Նման կառուցակարգեր մշակելու համար իրավագետների առջև խնդիր դրվեց նոր մոտեցումներ ցուցաբերել պետական տուրքերի, թարգմանությունների, հավատարմատարների հոնորարների, փորձաքննությունների և այլ ծախսատար գործողությունների կապակցությամբ¹²:

Որպես նշվածի արդյունք հանդիսանում է 1970 թ. հունիսի 19-ին Վաշինգտոնում ստորագրված «Արտոնագրային կոոպերացիայի մասին» պայմանագիրը: Այս պայմանագրի տրամաբանությունը կայանում է նրանում, որ սրանով հեշտացվում է տարբեր երկրներում միևնույն գյուտի համար հայտերի ներկայացման ընթացակարգը¹³: Այլ կերպ հնարավորություն է տրվում պայմանագրի անդամ երկրներից մեկում հայտ լրացնելու միջոցով գյուտի համար իրավական պահպանություն ստանալ բազմաթիվ այլ մասնակից երկրներում¹⁴:

Բացի նշվածից քննարկվող պայմանագրի առավելությունը կայանում է նրանում, որ սրա միջոցով ներկայացված հայտերի հիման վրա արդյունավետորեն է ձևավորվում տեխնիկայի մակարդակի վերաբերյալ տեղեկատվական բազան, և որակապես համապատասխան չափանիշների չբավարարող երկրները սրա միջոցով կարողանում են իրականացնել ներկայացված հայտերի ուսումնասիրությունը¹⁵:

Գյուտի իրավական պահպանության կապակցությամբ այս տեսանկյունից արդյունավետ ձև է հանդիսանում մտավոր սեփականության որոշ օբյեկտների իրավական պահպանության տրամադրումը տարածաշրջանային պայմանագրերի միջոցով:

Գյուտի իրավական պահպանության համար տրված արտոնագիրը ապահովում է արտոնագիր տվող երկրի շրջանակներում անձանց իրավունքների պաշտպանությունը: Այս կապակցությամբ բացառություն են կազմում տարածաշրջանային մակարդակով կնքված միջազգային պայմանագրերը, որոնք գյուտին իրավական պահպանություն են

¹² St'u Камиль Идрис. Интеллектуальная собственность – Мощный инструмент экономического роста. М., 2004, էջեր 330-343.

¹³ St'u PCT FAQs. Frequently Asked Questions. Protecting your Inventions Abroad. Frequently Asked Questions About the Patent Cooperation Treaty (PCT). WIPO. March 2012, էջ 5

¹⁴ St'u Intellectual property: a reference handbook / Aaron Schwabach p. cm. — (Contemporary world issues). 2007, էջ 107:

¹⁵ St'u Сергеев А.П. Право интеллектуальной собственности в Российской Федерации. М., 2000, էջ 559:

տրամադրում մի քանի երկրներում մեկ արտոնագրի միջոցով¹⁶: Որպես օրինակ կարող են հանդիսանալ Եվրոպական արտոնագրերի մասին 1975 թ. Լյուքսեմբուրգի կոնվենցիան, 1994 թ. սեպտեմբերի 9-ին Մոսկվայում ստորագրված Եվրասիական արտոնագրային կոնվենցիան և այլն: Տարածաշրջանային մակարդակով արդյունաբերական սեփականության իրավական պահպանությունն էլ իր հերթին որդեգրեց զարգացման հետևյալ ուղղությունները.

1. Տարածաշրջանային մակարդակով արդյունաբերական սեփականության իրավական պահպանության մասնակից անդամների քանակական ավելացում,

2. Տարածաշրջանային մակարդակով արդյունաբերական սեփականության իրավական պահպանության օբյեկտների քանակական ավելացում¹⁷:

Այսպիսով գյուտի իրավական պահպանությունն իրականացվում է ներպետական և միջազգային եղանակներով: Ըստ էության գյուտի ներպետական իրավական պահպանությունը հանդիսանում է այն ելակետը, որի վրա հետագայում ձևավորվում է միջազգային իրավական պահպանության շրջանակները: Այս սկզբունքը, ինչպես տեսանք, ձևավորվեց Վենետիկի հանրապետության ժամանակաշրջանում, երբ գյուտին սկզբնապես արտոնագրի միջոցով իրավական պահպանություն տրվեց ներպետական եղանակով, իսկ այնուհետև խնդիր առաջացավ միջազգային իրավական պահպանության կապակցությամբ: Սակայն հարկ է նշել նաև, որ գյուտի ներպետական և միջազգային իրավական պահպանությունն իրենց վերջնական նպատակով նույնանում են. երկու եղանակների վերջնական նպատակն էլ գյուտին իրավական պահպանություն տրամադրելն է: Դրանց հիմնական տարբերությունը, կապված նաև ծախսատարության նվազեցման հետ, իրավական պահպանության տրամադրման ընթացակարգի մեջ է¹⁸:

Այսպիսով, նշվածի արդյունքում, ինչպես նաև TRIPS համաձայնագրի 7 և 8 հոդվածների լույսի ներքո կարող ենք եզրահանգել, որ գյուտի իրավական պահպանու-

¹⁶ Տե՛ս Судариков С. А. Право интеллектуальной собственности. М., 2008, էջ 142, ինչպես նաև Говрилов Э.П. Основные положения патентного права США. М., 1966, էջ 185

¹⁷ Տե՛ս Еременко В.И., «О применении теории эквивалентов в рамках Евразийской патентной системы». «Изобретательство» №10, 2011, էջ 10:

¹⁸ Տե՛ս WIPO. THE INTERNATIONAL PATENT SYSTEM>> YEARLY REVIEW. Developments and Performance in 2010. 4-5 էջեր:

թյան էությունը արդյունավետության տեսանկյունից պետք է դիտարկել հետևյալ ուղղություններով.

ա/ Այն պետք է ուղղված լինի հեղինակների իրավունքների պաշտպանությանը.

բ/ Գյուտի իրավական պահպանությունը պետք է ուղղված լինի գիտության և տեխնիկայի զարգացմանը.

գ/ Գյուտի իրավական պահպանությունը պետք է լինի մատչելի և հնարավորինս քիչ ծախսատար.

դ/ Գյուտի իրավական պահպանության ժամանակ պետք է պահպանվի հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությունը:

Գյուտի արտոնագրաունակության պայմանների բացահայտման առանձնահատկությունները

Սիմոն Ֆարմանյան, փաստաբան, ասպիրանտ

TRIPS համաձայնագրի 27 հոդվածը, «Արտոնագրային համագործակցության մասին» պայմանագրի¹ 33 հոդվածը, «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածը և այլ իրավական ակտեր գյուտի արտոնագրաունակության համար սահմանում են երեք պայմանների միաժամանակյա առկայություն: Որպեսզի գյուտը համարվի արտոնագրաունակ, պետք է

1. լինի նոր,
2. ունենա գյուտարական մակարդակ,
3. արդյունաբերորեն լինի կիրառելի:

Ընդ որում այս պայմանների միաժամանակյա առկայությունը պետք է դիտարկել որոշակի ժամանակահատվածի մեջ: Օրինակ՝ հեռուստատեսությունը կարող է համարվել արտոնագրաունակ գյուտ միայն 1890 թ., իսկ 1990 թ.՝ ոչ: Սրանից ելնելով սահմանվել է գյուտի առաջնության դրույթը:

Նորույթ: Նորույթի արտոնագրաունակության պայման լինելու հիմնավորումն այն է, որ գյուտն արտոնագրային իրավունքով պահպանելն ընձեռում է մենաշնորհ գյուտի օգտագործման կապակցությամբ: Հարցը նրանում է, որ իրավատերերին տրված մենաշնորհը պետք է լինի համաչափ մյուս տնտեսական և իրավական սկզբունքներին:

Գրականության մեջ նշվում է՝ մենաշնորհը, որը տրվում է գոյություն ունեցող գյուտերի համար՝ քաղաքացիական շրջանառության մասնակիցներից վերցնելով և տրամադրելով մեկ հոգու, չի կարող համարվել օրինաչափ, քանի որ սահմանափակվում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների ունեցած և իրացվող իրավունքները: Մյուս կողմից մենաշնորհները, որոնք տրվում են քաղաքացիական շրջանառության

¹ Ընդունվել է 1970 թ. հունիսի 19-ին Վաշինգտոնում: Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1991 թվականի դեկտեմբերի 25-ից: Այսուհետ՝ նաև «PCT» կամ «Վաշինգտոնյան պայմանագիր»:

մասնակիցներին անհայտ ու նոր գյուտերի օգտագործման կապակցությամբ, տրամաբանական և հիմնավորված են, քանի որ դրանով խթան է ստեղծվում նոր տեխնոլոգիական բացահայտումներ կատարելու համար: Նշվածը հաճախ ներկայացվում է դրական և բացասական մենաշնորհներ անվանմամբ: Այսինքն, նորույթով պայմանավորված մենաշնորհները համարվում են դրական, իսկ մնացածը՝ բացասական:²

Գյուտի նորույթին անդրադարձել են ինչպես միջազգային պայմանագրերը, այնպես էլ ներպետական օրենսդրությունը: «Արտոնագրային համագործակցության մասին» պայմանագրի 33 հոդվածի համաձայն՝ գյուտը նոր է, եթե չի կանխատեսվում տեխնիկայի նախկինում գոյություն ունեցող մակարդակով: «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածը սահմանում է, որ գյուտը նոր է, եթե այն տեխնիկայի մակարդակի առանձին մաս չէ:

Այնուհետև բացահայտվում է՝ որն է տեխնիկայի մակարդակը՝ նշելով, որ տեխնիկայի մակարդակը ներառում է մինչև տվյալ գյուտի առաջնության թվականն աշխարհում բանավոր կամ գրավոր բացահայտման, կամ ցանկացած այլ միջոցով հանրամատչելի դարձած տեխնիկայի տվյալ բնագավառի լուծումների (առանձին մասերի) վերաբերյալ ցանկացած տեղեկություն: Հանրամատչելի են համարվում տեղեկատվության աղբյուրների մեջ բերված տեղեկությունները, որոնց բովանդակությանը ցանկացած անձ կարող է ծանոթանալ անմիջականորեն կամ դրա մասին ծանուցվել օրինական ճանապարհով: Ընդ որում, բաց օգտագործմամբ հանրամատչելի դարձած լուծումները ներառվում են տեխնիկայի մակարդակում, եթե այդպիսի օգտագործումն իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում:

Օրենսդիրը հանրամատչելի տեղեկատվությունը բաժանել է երկու տեսակի՝

ա/ տեղեկությունները, որոնց բովանդակությանը ցանկացած անձ կարող է ծանոթանալ անմիջականորեն,

բ/ տեղեկությունները, որոնց մասին ցանկացած անձ կարող է ծանուցվել օրինական ճանապարհով:

² Տե՛ս *Catherine Colston*. Principles of intellectual property law (Principles of law series) – Law and legislation – Great Britain, 1999, էջ 86:

Նշված երկու հասկացությունների հիմքում դրված է սկզբունքը, որ անձը տեղեկատվությանը ծանոթանալու իրավունք և համապատասխան իրավունքն իրացնելու հնարավորություն պետք է ունենա: Սա կարևորվում է նրանով, որ որևէ իրավական ակտով վերջնականապես չի բացահայտվում տեղեկատվության աղբյուր հասկացությունը: Տեղեկատվության աղբյուրը արտոնագրային իրավունքի շրջանակներում բացահայտելիս պետք է նախ պարզաբանվեն հետևյալ հարցադրումները.

ա/ արդյո՞ք անձն ունեցել է իրավունք անմիջականորեն ծանոթանալու համապատասխան տեղեկատվության աղբյուրում ներկայացված տեղեկությանը,

բ/ արդյո՞ք անձն ունեցել է իրական հնարավորություն անմիջականորեն ծանոթանալու համապատասխան տեղեկատվության աղբյուրում ներկայացված տեղեկությանը:³

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը տեխնիկայի մակարդակը բացահայտում է տեղական և համաշխարհային տեխնիկայի մակարդակների վերաբերյալ առկա տեսական մոտեցումների⁴ միասնությամբ: Այլ կերպ՝ տեխնիկայի մակարդակը բաց օգտագործման դեպքում հանրամատչելի է համարվում տեղական մակարդակով, իսկ մնացած մասով համաշխարհային մակարդակով: Սա պայմանավորված է նրանով, որ եթե բաց օգտագործումը հանրամատչելի համարվեր համաշխարհային մակարդակով, ապա այդ իրավանորմը իրացվելիության առումով խնդիրներ կունենար տեղեկատվական բազայի բացակայության պատճառով:

Այսպիսով, նորույթի մասով իրավահարաբերությունների նշված կանոնակարգումը ենթադրում է երեք սկզբունքների առկայություն.

³ Հարցին նման լուծում տալ բխում է նաև միջազգային պրակտիկայից: Տե՛ս Austria. Supreme Patent and Trademark Chamber of 28 April 2010 (OBp 2/09) (http://archive.epo.org/epo/pubs/oj012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրությամբ), Belgium. Brussels Court of First Instance of 19 December 2008 – Lefebvre v Bogaert, France. Court of Cassation of 7 October 2008 (07-17518) – SMCA v SAT(http://archive.epo.org/epo/pubs/oj012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրությամբ), Netherlands. The Hague Court of Appeal (Gerechtshof te 's Gravenhage) of 13 July 2010 – Clyde Bergemann v Magaldi(http://archive.epo.org/epo/pubs/oj012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրությամբ):

⁴ Տե՛ս **Жаанов А. А, Матвеев Г. А.** Тенденции к унификации патентного права в зарубежных странах. Издательство стандартов. Москва. 1974, էջ 97:

1. *հանրամատչելի աղբյուրներում պետք է առկա չլինի նմանատիպ գյուտի վերաբերյալ տեղեկություն, ընդ որում ցանկացած աննշան ստեղծագործական բնույթ⁵ ունեցող փարբերություն հայտարկվող և հայտնաբերված տեխնիկական լուծումների մեջ պետք է մեկնաբանվի հոգուր հայտարկվող գյուտի նորույթի,⁶*

2. *տեխնիկայի տվյալ բնագավառի լուծումը պետք է փնտրվի աշխարհում հայտնի դարձած տեխնիկայի տվյալ բնագավառի լուծումների շրջանակներում, ընդ որում նշված շրջանակների մեջ որպես բացառություն չեն ընդգրկվում Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բաց օգտագործմամբ հանրամատչելի դարձած լուծումները,*

3. *նորույթի բացահայտման համար կարող են հաշվի առնվել միայն այն տեղեկությունները, որոնք հայտնի են դարձել մինչև գյուտի առաջնության թվականը:⁷*

Որպես բացառություն «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածը նախատեսում է, որ գյուտի էության բացահայտումը հաշվի չի առնվում, եթե դա տեղի է ունեցել գյուտի հայտը ներկայացնելուն նախորդող, իսկ ավելի վաղ առաջնություն պահանջելու դեպքում՝ այդ առաջնության թվականին նախորդող տասներկու ամսվա ընթացքում՝ հեղինակի (հայտատուի) կամ գյուտի էության մասին նրանից ուղղակիորեն կամ անուղղակի տեղեկություն ստացած անձի կողմից (**այդ հանգամանքը պետք է ապացուցի հայտատուն**):

Նշված իրավանորմի առկայությունը պայմանավորված է նրանով, որ սրանով ստեղծվում են իրավական մեխանիզմներ ապագա իրավատիրոջ համար գյուտի արդյունավետության, առևտրային նշանակության և այլ հատկությունների բացահայտման համար, քանի որ ըստ էության գյուտի արտոնագրման նպատակը պետք է կայանա այդ

⁵ St' u Italy. Florence District Court of 29 December 2005 (17178/2005) – Barbieri v Bacci (http://archive.epo.org/epo/pubs/oj012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրությամբ):

⁶ St' u France. Paris District Court of 13 October 2006 (04/07666) – Asahi v General Electric (http://archive.epo.org/epo/pubs/oj012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրությամբ):

⁷ St' u *Мегзс П. Б., Сергеев А. П.* Интеллектуальная собственность. – Москва, 2000, էջ 111:

բացահայտումներից կամ այլ կերպ գյուտի տնտեսական նշանակությունից առավել օգտվելու հնարավորությունը:⁸

Այսպիսով, գյուտի նորության բացահայտումն իրենից ներկայացնում է որոշակի քայլերի ամբողջություն: Մասնավորապես, գյուտի նորության բացահայտման համար պարզաբանվում են նշված հարցադրումները.

ա/ *ո՞րն է տեխնիկայի մակարդակը,*

բ/ *ո՞րոնք են պահպանության ենթակա գյուտի բնորոշող գծերը,*

գ/ *ինչպիսի՞ արդյունք է տվել առաջնության թվականի դրությամբ պահպանության ենթակա գյուտը բնորոշող գծերի համեմատությունը այլ գյուտերի հետ:⁹*

Տեխնիկայի մակարդակը որոշելու համար իրականացվում է տեխնիկայի բնագավառի բացահայտումը: Որոշվում է՝ գյուտը տեխնիկայի որ բնագավառին է վերաբերում, այնուհետև տվյալ բնագավառում փնտրվում է հայտարկվող գյուտին ամենամոտ գյուտը: Այլ կերպ՝ բացահայտվում է՝ հայտում նշված տեխնիկական խնդրին որևէ լուծում արդյունաբերության մեջ տրվել է, իսկ եթե տրվել է, ապա ինչպես: Նշվածի արդյունքում էլ բացահայտվում է տեխնիկայի մակարդակը:

Տեխնիկայի մակարդակը բացահայտելիս հաշվի են առնվում բոլոր տեղեկությունները, որոնք կարող էին հասանելի լինել հանրությանը անկախ նրանից այդ տեղեկատվությանը որևէ անձ անձամբ ծանոթացել է, թե ոչ¹⁰: Հետաքրքրություն է ներկայացնում հարցը, թե տեխնիկայի մակարդակը բացահայտելիս պե՞տք է հաշվի առնվեն գաղտնիք հանդիսացող և հանրությանը հայտնի չդարձված տեղեկությունները:¹¹

Մեր կարծիքով նման իրավիճակներում պետք է վերջիններս հաշվի առնվեն տեխնիկայի մակարդակը բացահայտելիս, քանի որ այստեղ գործում է գյուտի օբյեկտի-

⁸ Տե՛ս **А. П. Сергеев**. Право интеллектуальной собственности в Российской Федерации. Учебник. Издание второе, переработанное и дополненное. Москва 2000, 421-422 էջեր:

⁹ Տե՛ս *Catherine Colston*. Principles of intellectual property law (Principles of law series) – Law and legislation – Great Britain, 1999, էջ 87:

¹⁰ Տե՛ս Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T 877/90 (http://www.epo.org/law-practice/legal-texts/html/caselaw/2010/e/cir_i_c_1_8_8_c.htm, 2013 թ. հունվարի 4-ի դրությամբ), ինչպես նաև T381/87 (<http://www.epo.org/law-practice/case-law-appeals/recent/t090834eu1.html>, 2013 թ. հունվարի 4-ի դրությամբ) ակտերը:

¹¹ Տե՛ս *Catherine Seville*. EU Intellectual Property Law and Policy, 2009, էջ 108:

վորեն նորոյթ լինելու սկզբունքը: Ավելին, երբ դեռևս չիրապարակված հայտերը ևս հաշվի են առնվում տեխնիկայի մակարդակը բացահայտելիս, ապա նման մոտեցում պետք է ցուցաբերվի նաև մնացած գաղտնիք հանդիսացող և տեխնիկայի մակարդակը կանխորոշող տեղեկատվության նկատմամբ:

Այնուհետև պահպանության ենթակա գյուտը բնորոշող գծերը բացահայտելու համար բացահայտվում է, թե որ հատկանիշը կամ դրանց խումբն է բավարար գյուտի շնորհիվ ստացվող տեխնիկական արդյունքին հասնելու համար: Այդ հատկանիշներն էլ հանդիսանում են հայտարկվող գյուտի բնորոշող գծերը: Այս առումով եվրոպական փորձը հուշում է, որ համապատասխան հատկանիշները պետք է բացահայտվեն տվյալ բնագավառի մասնագետի տեսանկյունից:¹² Այնպիսի մասնագետի տեսանկյունից, որն ի վիճակի է բացահայտել հայտի համապատասխան փաստաթղթերը և վեր հանել խնդրի լուծումն ապահովող գյուտի հատկանիշները:¹³

Նորոյթի բացահայտման վերջին փուլում պարզվում է՝ արդյոք հայտարկվող գյուտի վերը նշված հատկանիշները որևէ բանով տարբերվում են տեխնիկայի մակարդակում առկա նմանակ գյուտերից, կամ գոյություն ունեն արդյոք այդ հատկանիշներին նման հատկանիշներ տեխնիկայի մակարդակում: Այս տրամաբանական գործընթացի արդյունքում էլ բացահայտվում է գյուտի նորոյթը: Ընդ որում գյուտի նորոյթի բացահայտման ժամանակ բավարար է նույնիսկ գյուտի բնորոշ գծերի յուրաքանչյուր չնչին տարբերությունը նմանակ գյուտերի հատկանիշներից:

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ գյուտի հատկանիշներից նորոյթը օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունեցող, նորանոր տեխնոլոգիական բացահայտումներ կատարելուն խթանող երևույթ է: Գյուտի նորոյթը բացահայտելիս յուրաքանչյուր դեպքում նշանակետ պետք է ընդունվեն, թե հայտարկվող գյուտով ինչպիսի խթան է ստեղծվում տեխնոլոգիական նորարարությունների համար, և քննարկվող մտավոր

¹² Տե՛ս *Graham Dutfield, Uma Suthersanen*. Global Intellectual property law, Great Britain, 2008, էջ 120:

¹³ Տե՛ս Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T7/86 (<http://www.epo.org/law-practice/case-law-appeals/recent/t860007ex1.html>, 2012 թ. դեկտեմբերի 12-ի դրությամբ), T 77/87 (<http://www.epo.org/law-practice/case-law-appeals/recent/t870077ex1.html>, 2012 դեկտեմբերի 12-ի դրությամբ) և այլ ակտեր:

գործունեության հատկանիշները, որոնք ապահովում են խնդրի լուծումը, ինչպիսի առանձնահատկություններ ունեն:

Գյուտարարական մակարդակ: Պետությունը ճանաչում և պաշտպանում է այն գյուտերը, որոնք էական ներդրում ունեն գիտության և տեխնոլոգիայի առաջընթացի մեջ: Ոչ բոլոր նորարարական լուծումներն են, որ կարող են ներդրում ունենալ գիտության և տեխնոլոգիայի զարգացման մեջ:

Այլ կերպ՝ գիտության և տեխնոլոգիայի առաջընթացը գյուտի հատկանիշներից ապահովում է գյուտարարական մակարդակը, իսկ հետո նաև նորույթը: Այս երկու հատկանիշներն իրարից տարբերվող երևույթներ են, սակայն գործնականում միմյանց փոխլրացնում և կլանում են: Ասվածը, որպեսզի ավելի պարզ լինի, նշենք հիմնարար սկզբունքը, որը գոյություն ունի նրանց միջև. «Եթե գյուտը նոր չէ, ապա այն բխում է տեխնիկայի մակարդակից և ակնհայտ է. Այսինքն՝ չունի գյուտարարական մակարդակ»:¹⁴

Օրենսդիրը, գյուտարարական մակարդակ ասելով, հասկանում է այն իրավիճակը, երբ տվյալ բնագավառի մասնագետի համար գյուտն ակնհայտորեն չի բխում տեխնիկայի մակարդակից («Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 13, առաջին մաս): Գյուտարարական մակարդակի էության վերաբերյալ նման տրամաբանություն է դրված նաև PCT 33 հոդվածում:

Այսպիսով, տեխնիկայի մակարդակը բացի նորույթից ելակետային տվյալ է նաև գյուտարարական մակարդակի համար, որը ենթադրում է գյուտի նորույթի և գյուտարարական մակարդակի նմանությունը: Նորույթի բացահայտման ժամանակ տեխնիկայի մակարդակի ուսումնասիրությունը կատարվում է այն նկատառումից ելնելով, որ պետք է գտնել հայտարկվող գյուտի հատկանիշներին նույնական հատկանիշներ:

Գյուտարարական մակարդակը բացահայտելիս տեխնիկայի մակարդակն ուսումնասիրվում է տեխնիկական լուծումների միաժամանակյա և առանձին-առանձին փնտրման միջոցով, որոնք իրենց հատկանիշներով մոտ կամ նման են հայտարկվող գյուտին: Այլ կերպ՝ գյուտարարական մակարդակին բնորոշ է այն հատկանիշը, որ տեխ-

¹⁴ Տե՛ս **М. В. Пантелеев**. Роль Специалиста в патентной экспертизе. Патентный поверенный. № 2, март-апрель, 2009, էջ 25:

նիկայի մակարդակին պետք է հայտնի չլինի և չպետք է բխի տեխնիկայի մակարդակից հայտարկվող գյուտի բնորոշ հատկանիշները:

Գյուտարարական մակարդակի էության բացահայտման համար կարևոր է «տվյալ բնագավառի մասնագետ» և «տեխնիկայի մակարդակից ակնհայտորեն չբխել» եզրույթների բացահայտումը:

Հայտարկվող գյուտի գյուտարարական մակարդակը բացահայտելու համար որպես կանոն բացահայտվում են հետևյալ հարցադրումները.

ա/ *գյուտի որ հատկանիշն է դրսևորում դրա գյուտարարական մակարդակը.* գյուտարարական մակարդակը բացահայտող գյուտի հատկանիշը որոշվում է հայտի բովանդակությունից: Հիմք է ընդունվում գյուտի հավակնությունը՝ ի դեմս դրա անկախ կետի, որից էլ հենց բխում է գյուտարարական մակարդակը: Այլ կերպ՝ գյուտարարական մակարդակի բացահայտման կապակցությամբ վեր են հանվում գյուտի տեխնիկական բնութագրիչները, որոնք էլ ապահովում են գյուտարարական մակարդակը:¹⁵

բ/ *Մինչև տվյալ գյուտի առաջնության թվականը տեխնիկայի տվյալ բնագավառի մասնագետի մասնագիտական (ոչ երևակայական) տեսանկյունից ինչպիսին է եղել տեխնիկայի մակարդակը հայտարկվող գյուտի կապակցությամբ, քննարկվող հարցի պարզաբանումն իրականացվում է նաև արտոնագրային որոնման միջոցով:* Այլ կերպ՝ նշված հարցադրմանը պատասխանելու արդյունքում հանվում է տեխնիկայի մակարդակի փաստացի վիճակը գյուտի առաջնության թվականի դրությամբ

գ/ բ կետում նշված հարցադրման պատասխանից հետո դրա լույսի ներքո բացահայտել, թե ինչպիսի տարբերություններ են առկա հայտարկվող գյուտի և հայտնաբերված տեխնիկական լուծումների միջև:

դ/ հայտնաբերված տարբերություններին հասնելն արդյոք ակնհայտ է եղել տվյալ բնագավառի մասնագետի համար:

Գյուտարարական մակարդակը տեխնիկական խնդրի և դրա լուծման միջև գտնվող միջակայքն է, այն քայլը, որ կատարվում է տեխնիկական խնդրից մինչև դրա

¹⁵ St'u Case Law of the Boards of Appeal of the European Patent Office. Sixth edition. Austria, 2010, էջ 188:

լուծումը:¹⁶ Գյուտարարական մակարդակը բացահայտելիս ուսումնասիրության առարկա է դառնում խնդրի և դրա լուծման միջև առկա միջակայքը: Հաշվի է առնվում գործնական կյանքում տվյալ բնագավառի մասնագետի և նշված միջակայքի հարաբերակցության հավանականությունը:

Տվյալ բնագավառի մասնագետը համապատասխան որակավորում ունեցող՝ այսինքն տվյալ բնագավառում առնվազն միջին մասնագիտական գիտելիքներ ունեցող անձն է, ով աչքի չի ընկնում տվյալ բնագավառում գյուտարարության հատկանիշներով, սակայն լիարժեք պատկերացում ունի քննարկվող բնագավառի մասին:¹⁷ Ասվածը չի նշանակում, որ գյուտարարական մակարդակի բացահայտումը միայն պետք է կատարվի գյուտարարությամբ չբաղվող տվյալ բնագավառի մասնագետի կողմից: Ընդհակառակը ստեղծագործական ունակություններով օժտված անձը առավել լավ կարող է պատկերացնել, թե տեխնիկական լուծման որ հատկանիշն է ստեղծագործական աշխատանքի արդյունքը, որն ունի գյուտարարական մակարդակ:

Ցանկացած դեպքում հարցը պետք է դիտարկվի ստեղծագործական գործունեության միջակայքի վրա հիմքը դնելով: Այսինքն՝ տվյալ բնագավառի մասնագետ ասելիս պետք է մասնագետի դիտարկել նրա ստեղծագործական ունակության միջինության տեսանկյունից. տվյալ բնագավառի մասնագետը նա է, ով զուրկ է գյուտարարական ունակությունից:

Տվյալ բնագավառի մասնագետ եզրույթի ներքո հանդես են գալիս նաև որոշակի անձանց խումբ, երբ հայտարկվող գյուտն իր բարդությամբ ենթադրում է, որ դրան կարելի հասնել որոշակի խումբ մարդկանց միասնությամբ.¹⁸ այդ պատճառով տեսության մեջ տվյալ բնագավառի մասնագետը իրավացիորեն համարվում է իրավաբանական

¹⁶ Տե՛ս Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T26/81 ակտը (<http://www.epo.org/law-practice/case-law-appeals/recent/t810026ex1.html>, 2012 թ. նոյեմբերի 8-ի դրությամբ):

¹⁷ Տե՛ս **М. В. Пантелеев**. Роль Специалиста в патентной экспертизе. Патентный поверенный. № 2, март-апрель, 2009, էջ 2:

¹⁸ Տե՛ս Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T 39/93 ակտը (<http://www.epo.org/law-practice/case-law-appeals/recent/t930039ex1.html>, 2012 թ. նոյեմբերի 8-ի դրությամբ):

Ֆիկցիա,¹⁹ քանի որ տվյալ բնագավառի մասնագետի չափանիշներին համապատասխանող անձ գտնելը գրեթե բացառվում է:²⁰ Իսկ եթե հայտարկվող գյուտն ունի ինչպես տեխնիկական բնութագրիչներ այնպես էլ ոչ տեխնիկական, ապա այս դեպքում տվյալ բնագավառի մասնագետի անհրաժեշտությունը կարևորվում է գյուտի տեխնիկական բնութագրիչների մասով:²¹ Այսինքն՝ կարևորվում է տեխնիկական հատկանիշների վերաբերյալ գիտելիքների առկայությունը:

Այսպիսով, ընդհանրացնելով վերը նշվածը կարող ենք ասել, որ տվյալ բնագավառի մասնագետն այն անձն է, ով տրամաբանության շնորհիվ է խնդրի հարցադրումից հասնում դրա լուծմանը, իսկ գյուտարարի դեպքում նույն գործունեությունն իրականացվում է երևակայության միջոցով: Քննարկվող դեպքի համար դեռևս էյնշտեյնի կողմից դիպուկ նշվել է, որ տրամաբանության շնորհիվ A կետից հասնում ենք B կետը, իսկ երևակայության շնորհիվ՝ ամենուր: Հենց այս առանձնահատկությունն էլ ընկած է տվյալ բնագավառի մասնագետի և գյուտարարի տարանջատման հիմքում:

Ինչպես նշեցինք տեխնիկայի մակարդակը պարզելուց հետո բացահայտվում է հայտարկվող գյուտի և նմանակ գյուտերի տարբերությունը՝ այս անգամ ելնելով գյուտարարական մակարդակը բնորոշող հատկանիշից: Արդյունքում բացահայտվում է՝ ինչքանով է ակնհայտ հայտարկվող գյուտի և դրան նմանակ գյուտի տարբերությունը: Այս ամենի արդյունքում է բացահայտվում է հայտարկվող գյուտի գյուտարարական մակարդակը, ինչը հաճախ կրում է նաև սուբյեկտիվ բնույթ, քանի որ տեխնոլոգիայի անընդհատ զարգացման պայմաններում ոչ ակնհայտության վերաբերյալ տեսակետները մարդկային ընկալման տեսանկյունից ենթարկվում են փոփոխության:

Այսպիսով, որպես ընդհանուր կանոն տեխնիկական լուծումը համարվում է գյուտարարական մակարդակ ունեցող, եթե տեխնիկայի առկա մակարդակի պայմաններում տվյալ բնագավառի մասնագետը երբևէ չէր գնա խնդրի լուծման այն ուղիով, որով գնացել է հայտարկվող գյուտի հեղինակը: Այսինքն՝ տվյալ պարագայում որպես կանոն

¹⁹ Տե՛ս <http://eapo.org/rus/ea/about/comment.html>, 2013 թ. հունվարի 6-ի դրությամբ:

²⁰ Տե՛ս *David Pressman*. Patent It Yourself, 12th Edition, U.S.A., 2006, էջ 113:

²¹ Տե՛ս Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T 641/00 ակտը (<http://www.epo.org/law-practice/case-law-appeals/recent/t000641ex1.html>, 2013 թ, հունվարի 8-ի դրությամբ):

գյուտարարական մակարդակ ունեցող գյուտը տվյալ բնագավառի մասնագետի կողմից պետք է լինի անկանխատեսելի՝ նույնիսկ առաջին հայացքից անհավանական:

Բացի վերը նշված հատկանիշներից գյուտարարական մակարդակի բացահայտման համար պրակտիկայում էական նշանակություն են ունենում նաև հետևյալ լրացուցիչ բացահայտումները, որոնք ևս կարող են լրացուցիչ ազդեցություն ունենալ փորձաքննությունն իրականացնող անձի ներքին համոզմունքի վրա գյուտարարական մակարդակը բացահայտելիս.²²

- *հայտարկվող գյուտի առևտրային արժեքը,*
- *խնդրի լուծման բարդությունը և դրա վրա թափված ջանքերն ու ծախսերը,*
- *այնպիսի խնդրի լուծումը, որպիսին երկար ժամանակ առկա է եղել հասարակական կյանքում,*
- *տեխնիկայի տվյալ բնագավառում խնդրի լուծման հետ կապված կայունության ապահովումը,*
- *գյուտի նոր և անսպասելի լինելը,*
- *հայտարկվող գյուտի ընդօրինակումների առկայությունը կամ դրա հնարավորությունը շուկայում:*

Այսպիսով, արված ուսումնասիրություններից ակնհայտ է, որ գյուտարարական մակարդակի բացահայտման վերաբերյալ օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները միանշանակ չեն: Տեխնիկական լուծման ակնհայտության վերաբերյալ անհստակությունն առկա է ոչ միայն ՀՀ օրենսդրության, այլև մի շարք միջազգային իրավական ակտերի, ինչպես նաև օտարերկրյա օրենսդրությունների մեջ: Հնարավոր չէ օրենքով կամ այլ իրավական ակտով սահմանել բացարձակ որոշակիություն գյուտարարական մակարդակի բացահայտման համար, քանի որ դա կհանգեցնի բացարձակ կոշտության, և օրենքը չի կարող հարմարվել փոփոխվող հանգամանքներին. այն հանգամանքների մասին է խոսքը գնում, որոնք ունեն գնահատողական բնույթ կախված

²² Տե՛ս Graham v. John Deere, 1966 ակտը (http://cyber.law.harvard.edu/ilaw/BMP/graham_v_john_deere.html, 2012 թ. հոկտեմբերի 15-ի դրությամբ):

մարդու ընկալումների բնույթից որոշակի ժամանակահատվածում.²³ այսինքն՝ արդյոք տվյալ տեխնիկական լուծումը ակնհայտորեն բխում է տեխնիկայի մակարդակից, թե հանդիսանում է հիմնավորապես մարդու վառ երևակայության, մտքի թռիչքի արդյունք, չափազանց փոփոխական կատեգորիա է, քանի որ կապված է մարդու ընկալումների շրջանակների բացահայտման հետ, որոնք կրում են սուբյեկտիվ բնույթ: Այդ պատճառով էլ ինչպես ներպետական օրենսդրություններով, այնպես էլ միջազգային իրավական ակտերով, գյուտարարական մակարդակը ձևակերպվել է այնպիսի հասկացությունների միջոցով, որոնք քիչ թե շատ անորոշ են և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիրն է:

Արդյունաբերորեն կիրառելիություն: Գյուտն արդյունաբերորեն կիրառելի է, եթե կարող է օգտագործվել արդյունաբերության, գյուղատնտեսության, առողջապահության և այլ ոլորտներում («Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 14 հոդվ.): Նմանատիպ կանոնակարգում է նախատեսում նաև PCT 33 հոդվածը:

Արդյունաբերորեն կիրառելի եզրույթն ամբողջապես չի բացահայտում այն բովանդակությունը, որը դրան տրվում է օրենքով: Իրականում արդյունաբերորեն կիրառելիություն եզրույթը Փարիզյան կոնվենցիայի 1 հոդվածի լույսի ներքո ենթարկվում է լայն մեկնաբանության, որն իր մեջ ընդգրկում է գործնական գործունեության ցանկացած բնագավառ՝ հաշվի առնելով գյուտերին իրավական պահպանություն տրամադրելու կապակցությամբ նախատեսված բացառությունները:

Ի տարբերություն գյուտի նորույթին և գյուտարարական մակարդակին՝ արդյունաբերորեն կիրառելիությունն անմիջական կապի մեջ չի գտնվում գյուտի առաջնության և տեխնիկայի մակարդակի հետ: Ասվածը չի նշանակում, որ արդյունաբերորեն կիրառելիությունը որևէ կապի մեջ չի գտնվում գյուտի նշված հատկանիշների հետ: Եթե նորույթի և գյուտարարական մակարդակի ժամանակ հաշվի է առնվում տեխնիկայի մակարդակի սահմանից դուրս ընկած տարածությունը, որում արտահայտվում է տվյալ գյուտի

²³ St 'u Netherlands. The Hague District Court (Rb. te 's-Gravenhage) of 9 December 2009 – Intervet v Meria (http://archive.epo.org/epo/pubs/oj012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրությամբ):

նորոյթը և գյուտարարական մակարդակը, ապա արդյունաբերորեն կիրառելիության ժամանակ համապատասխան չափանիշը ստուգվում է տվյալ տեխնիկայի մակարդակի շրջանակներում և ոչ թե դրա սահմաններից դուրս:

Որևէ իրավական ակտով չի բացահայտվում հանգամանքը, թե արդյունաբերորեն կիրառելիությունը որ պահի համար պետք է բացահայտվի: Սա կարելի է ոչ թե օրենսդրի բացթողումը համարել, այլ ընդհակառակը նպատակաուղղված անորոշության սահմանում: Ի տարբերություն գյուտի նորոյթին և գյուտարարական մակարդակին, որոնք կարող են և պետք է սահմանվեն որոշակի ժամանակահատվածի համար, գյուտի արդյունաբերորեն կիրառելիությունը հնարավոր է, որ առկա լինի միայն հետագայում²⁴: Եթե նորոյթի և գյուտարարական մակարդակի անմիջական առկայությունը անհրաժեշտ է, գյուտի արդյունաբերորեն կիրառելիությունը հնարավոր է ծագի հետագայում, ինչը տրամաբանական և ուղիղ համեմատական է գյուտի նորոյթի ու գյուտարարական մակարդակի հետ:

Սակայն արդյունաբերորեն կիրառելիությունը որոշելը կարող է որոշակի անորոշությունների հանգեցնել. այլ կերպ հնարավոր չլինի հաստատապես որոշել հայտարկվող գյուտի հետագայում արդյունաբերորեն կիրառելի լինելու հատկանիշը:

Արդյունաբերորեն կիրառելիությունը պետք է դիտարկվի մինչև գյուտի առաջնության թվականը և դրա նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո՝ հիմքում դնելով փորձաքննության իրականացման ժամանակ դրա արդյունաբերորեն կիրառելի լինելու հնարավորությունը:²⁵

Արդյունաբերորեն կիրառելիության բացահայտումը որոշ դեպքերում կրում է սուբյեկտիվ բնույթ: Սա վերաբերում է այն դեպքերին, երբ գյուտը կատարվում է անձի կողմից, ով ի սկզբանե շահագրգռվածություն չի ունեցել որոշակի ընկերությունների կամ այլ անձանց տնտեսական կամ այլ խնդիրները լուծելու. հետևաբար նմանատիպ գյուտերը հայտարկման պահին որպես կանոն չեն ունենում պրակտիկ կիրառություններ:

²⁴ Ст'у Гражданское право: учеб.: в 3 т. Т 3 / *Е. Н. Абрамова, Н. Н. Аверченко, Ю. В. Байгушева* (и др.); под ред. *А. П. Сергеева*. – М., 2009, 244-245 էջեր:

²⁵ Ст'у United Kingdom. Supreme Court of 2 November 2011 – Human Genome Sciences Inc v Eli Lilly [2011] UKSC 51 (http://archive.epo.org/epo/pubs/oj012/02_12/12_speO.pdf, 2012 թ. մայիսի 20):

Նմանատիպ իրավիճակ ծագում է նաև հովանոցային գյուտերի կատարման ժամանակ, երբ գյուտերի արտոնագրումը նպատակ է հետապնդում մենաշնորհի ստեղծել իրականում ոչ թե տվյալ գյուտի օգտագործման, այլ որոշակի բնագավառներում հետագա ուսումնասիրությունների և դրանց արդյունքում կատարված բացահայտումների օգտագործման նկատմամբ:²⁶

Այսպիսով, այն դեպքերում, երբ գյուտը ստացած չի լինում կիրառում արդյունաբերության մեջ չափազանց մեծ է դրա արդյունաբերորեն կիրառելիության հատկանիշի վերաբերյալ սուբյեկտիվիզմի դրսևորումը:

²⁶ Տե՛ս **Судариков С. А.** Право интеллектуальной собственности : учеб. — Москва, 2008, 160-161 էջեր:

Զրպարտության գործերով քաղաքացիական դատավարության առանձնահատկությունները

Գևորգ Հակոբյան, ասպիրանտ,
փաստաբանների դպրոցի ունկնդիր

Հայաստանում քաղաքացիական դատավարությունը մրցակցային է¹, ինչը նշանակում է, որ նրա ընթացքը և արդյունքը մեծապես կախված են դատավարության կողմերի վարքից՝ չնայած, որ գործի ելքը ամեն դեպքում որոշում է դատարանը:

Ապացուցման բեռի տեսանկյունից ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում մրցակցությունը դրսևորվում է փաստերի վկայակոչմամբ և դրանց ապացուցմամբ: Յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:² Չվկայակոչված փաստերը գործից դուրս են մնում և չեն կարող ազդել գործի ելքի վրա: Էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:³ Ընդ որում սա սովորաբար կատարվում է նախնական դատական նիստում⁴, որովհետև դատաքննության անցնելու ժամանակ իրականացվում է արդեն իսկ որոշված ապացույցների հետազոտում, թեև որոշ դեպքերում թույլատրվում է նաև ապացույցներ ներկայացնել դատաքննության փուլում:⁵ Յուրաքանչյուր տալուց խուսափելը կարող է գնահատվել ի վնաս խուսափողի, ապացույցներ ոչնչացումը կամ դրանց ուսումնասիրության համար խոչընդոտներ ստեղծելը հանգեցնում է դա անող կողմի վրա հակառակն ապացուցելու բեռի սահմանման:⁶ Իսկ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը,

¹ Տես ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 6. «Քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա»:

² Նույնում հոդված 48, կետ 1

³ Նույնում, կետ 2

⁴ Նույնում, հոդված 149.8

⁵ Նույնում, հոդված 48, կետ 8

⁶ Նույնում, կետ 7

ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:⁷

Սրանք ապացուցման ընդհանուր կանոններն են:

Սկսած 2010 թվականի հուլիսի 3-ից⁸ զրպարտությունը մասնավոր բնույթի իրավահարաբերություն է, որտեղ ֆիզիկական կամ իրավաբանական անձը հանդես է գալիս դատարանում իր պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի պաշտպանությամբ այն արատավորող անձի դեմ:

Զրպարտության գործերով քաղաքացիական դատավարությունում ապացուցման բեռի բաշխումը՝ նյութական իավունքում որոշակի կարգավորմամբ պայմանավորված, ունի առանձնահատկություններ: Սույն աշխատանքում ցույց կտրվի, որ զրպարտության գործերով ապացուցման բեռի բաշխումը թեև ընդհանուր առմամբ համահունչ է քաղաքացիադատավարական կարգավորումներին և սկզբունքներին, բայց որոշ հարցերում տարբերվում է, և հետևաբար կիրառելիս անհրաժեշտ առավել ուշադրություն դարձնել դրանց վրա:

Համաձայն ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1087.1 հոդվածի 3 մասի՝

«Սույն օրենսգրքի իմաստով՝ զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:»

1087.1 հոդվածի 3 մասը մատնացույց է անում պարզման ենթակա հանգամանքները և դրանցից բխող ապացույցների ցանկը: Դրանք են՝

1. արդյո՞ք ներկայացված են փաստացի տվյալներ,

⁷ Նույնում, կետ 6

⁸ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքը լրացվել է 1087.1 հոդվածով «ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2010 թվականի մայիսի 18-ի ՀՕ-97-Ն օրենքով, ՀՀՊՏ 2010.06.23/28(762) Հոդ.712, որն ուժի մեջ է մտել 2010 թվականի հուլիսի 3-ից: Հոդվածն այնուհետև փոփոխությունների չի ենթարկվել:

2. արդյո՞ք դրանք իրավունքի պաշտպանություն հայցող անձի վերաբերյալ են,
3. արդյո՞ք դրանք ներկայացվել են հրապարակային,
4. արդյո՞ք դրանք չեն համապատասխանում իրականությանը,
5. արդյո՞ք դրանք արատավորում են իրավունքի պաշտպանություն հայցող անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 4 մասում սահմանված է, որ «Զրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը: Այն փոխանցվում է հայցվորին, եթե ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր, մինչդեռ հայցվորը փրկապետում է անհրաժեշտ ապացույցներին:

Ինչպես կարելի է տեսնել 1087.1 հոդվածի 4 մասը ապացուցման բեռ է դնում պատասխանողի վրա փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության մասով: Ընդ որում նորմի տեքստային ձևակերպումը հնարավորություն չի ընձեռում հասկանալ, թե զրպարտության վերաբերյալ գործերով, որ փաստական հանգամանքներին է վերաբերում այս կանոնը, արդյոք դա վերաբերում է թվարկված բոլոր հինգ հանգամանքները ներառող փաստական հանգամանքներին, թե միայն դրանցից որոշակիին: Այս համատեքստում ՀՀ Սահմանադրական դատարանը, վկայակոչելով ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի կողմից 2011թ. հուլիսի 11-29-ին ժնկում ընդունված թիվ 34 ընդհանուր մեկնաբանությունը, «ARTICLE 19» կազմակերպության կողմից մշակված մոտեցումները և այլ փաստաթղթեր, նշել է, որ զրպարտության վերաբերյալ գործերով պատասխանողը պետք է կրի միայն իր հրապարակած փաստերի ճշմարտացիության ապացուցման պարտականությունը:⁹ Սրան համահունչ ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է, որ այս փաստական

⁹ Տես ՀՀ Սահմանադրական դատարանի ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածին, 27-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին և 43-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2011թ. նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշումը, մաս 5 [ՍԴՈ]

հանգամանքները վերաբերում են փաստացի տվյալներին, որոնք վեճի առարկա գրապարտությունն են կազմում¹⁰:

Այսպիսով վճռաբեկ դատարանը ապացուցման բեռի բաշխման կարգավորումը մեկնաբանել է հետևյալ կերպ՝

«գրապարտության վերաբերյալ գործերի քննության ընթացքում գործում է այն կանխավարկածը, որ փաստերի՝ իրականությանը համապատասխանելու ապացուցման բեռը կրում է պատասխանողը: Այս ընդհանուր կանոնից բացառություն է հանդիսանում միայն այն դեպքը, երբ ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր: Այս պարագայում ապացուցման պարտականությունը կրում է հայցվորը, սակայն միայն այն դեպքում, երբ պատասխանողը կհիմնավորի իրենից պահանջվող գործողությունների և ջանքերի ոչ ողջամիտ լինելը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հայցվորը փիրապետում է անհրաժեշտ ապացույցներին: Եթե նույնիսկ պատասխանողից պահանջվող գործողությունները կամ ջանքերը ոչ ողջամիտ են, սակայն անհրաժեշտ ապացույցներին հայցվորը չի փիրապետում, ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը:»¹¹

Արտահայտության և նրա բովանդակության (որ կոնկրետ անձը հայտնել է կոնկրետ բովանդակությամբ արտահայտություն) փաստի ապացուցման բեռը կրում է հայցվորը. սա հենց հայցի հիմքն է, իսկ հայցի հիմքում ընկած փաստական հանգամանքների ապացուցման բեռը հայցվորինը լինելը քաղաքացիական դատավարության համատեքստում իրավաչափ է: Հայցվորը նաև պետք է ապացուցի, որ խնդրո առարկա արտահայտությունը հենց իրեն է վերաբերում: Դա կարելի է իրականացնել, օրինակ, պատասխանողի խոսքում որոշակիացնող բառերի և արտահայտությունների միջոցով: Օրինակ, երբ անձը նշել է վայր, պատկանելություն, բայց անունը չի նշել կամ կիսատ է նշել, կամ այնպես է կառուցել իր արտահայտությունը, որ հնարավոր է հասկանալ, որ դա կոնկրետ անձի վերաբերյալ է, այս հանգամանքը կարելի է համարել ապացուցված: Հանրահայտ և նույնականացվող ածականների, կեղծանունների կամ կոչումների նշումը

¹⁰ Տես ՀՀ Վճռաբեկ դատարանի Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2293/02/10 մասին 2012 թվականի ապրիլի 27-ի որոշումը, «Պատասխանատվությունից ազատվելը» ենթաբաժինը [ԵԿԴ]

¹¹ Տես ԵԿԴ, նույնում

պատասխանողի խոսքում նույնպես փաստացի տվյալի հայցվորին վերաբերվելու մասին ապացույց է:

Այն հարցը, թե արդյոք արտահայտությունը փաստացի տվյալներ է (statement of fact), թե գնահատողական դատողություն (statement of opinion), ապացույցի հարց չէ, այլ ապացույցի գնահատման հարց է, սակայն սա նույնպես արտացոլվում է ապացուցման հարցի վրա: Գնահատողական դատողությունների դեպքում հնարավոր չէ ապացուցել այդ դատողությունների իրական լինելը, փաստացի տվյալների դեպքում դա հնարավոր է¹²: Եթե արվածը գնահատողական դատողություն է, ապա զրպարտությունն անհնարին է, այս դեպքում առավելագույնը հնարավոր է, որ արտահայտությունն իր բնույթով լինի վիրավորանք: Եթե արվածը գնահատողական դատողություն է, ապա պատասխանողը նաև չունի իր հայտնած տվյալների ապացուցման բեռ: Վճռաբեկ դատարանը նշել է, որ **փաստացի տվյալը չպետք է լինի վերացական**¹³:

Արատավորման համատեքստում *հայցվորը պետք է ապացուցի, որ պատասխանողի խոսքում իր վերաբերյալ հայտնված տեղեկությունները գործող օրենսդրության պահանջների խախտման, անարդարացի վարքագծի դրսևորման, անձնական, հասարակական կամ քաղաքական կյանքում էթիկայի պահանջներին հակասող վարքագծի դրսևորման, տնտեսական կամ ձեռնարկատիրական գործունեության ժամանակ անբարեխղճության, գործարար շրջանառության սովորույթների խախտման և այլ ոչ իրական փաստացի տվյալներ է պարունակել*¹⁴: Վճռաբեկ դատարանի թվարկած ցանկը մատնացույց է անում, թե ինչն է արատավորող: Եթե պատասխանողը կեղծ բայց ոչ արատավորող փաստացի տվյալներ է հայտնել հայցվորի մասին, ապա գործը ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածից դուրս է, հայցվորը չի կարող պահանջել պատվի, արժանապատվության կամ համբավի պաշտպանություն, և հայցն ըստ էության պետք է մերժվի¹⁵:

¹² Տես օրինակ NOVAYA GAZETA AND BORODYANSKIY v. RUSSIA, no. 14087/08, §30, ECHR 2013, տես նաև ԵԿԴ գործում և ՍԴՈ որոշումը

¹³ Տես ԵԿԴ, «Վիրավորանքը և զրպարտությունը» բաժնում

¹⁴ Նույնում

¹⁵ Այս համատեքստում համբավը կարող է պաշտպանության կարիք ունենալ նաև եթե հայտնված կեղծ փաստացի տվյալները իրենց բնույթով արատավորող չեն: Ուստի միայն արատավորման հետ զրպարտությունը կապելը հավանաբար կշռադատված մոտեցում չէ և օրենքի բաց է:

Արատավորումը նաև ենթադրում է նպատակի՝ արատավորելու դիտավորության առկայություն:

«Արտահայտություն կատարողն ի սկզբանե պետք է հեղուկանի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ, այսինքն՝ պետք է իր կատարած արտահայտությամբ անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստացնելու դիտավորություն ունենա: Մասնավորապես՝ նման նպատակի առկայության մասին կարող է վկայել այնպիսի իրավիճակը, երբ անձը ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները չի ձեռնարկել տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար կամ էլ գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ ստույգ փաստերի վրա հիմնված չլինելու մասին: Այս փաստի ապացուցման բեռը նույնպես կրում է հայցվորը»:¹⁶

Թեև առաջին հայացքից հայցվորի գործողությունները կամ անգործությունը ապացուցելը Վճռաբեկ դատարանի մտքի համատեքստում թվում է դժվար, սակայն դա այդքան էլ այդպես չէ: Օրինակ, այն հանգամանքը, որ պատասխանողը ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները չի ձեռնարկել տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար կամ էլ գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ ստույգ փաստերի վրա հիմնված չլինելու մասին կարող է ապացուցվել համեմատելով այդ անձի արտահայտությունը այն աղբյուրում զետեղված տեղեկատվության հետ, որին հղում անելով փորձում է պաշտպանվել պատասխանողը: Եթե դրանք տարբերվում են, ապա փաստը կարելի է համարել ապացուցված:

Մյուս կողմից, հնարավոր է ապացուցման բեռի շրջում, եթե օրինակ հայցվորը պատասխանողին հարցեր է տալիս փաստեր պարզելու համատեքստում և մատնանշելով կոնկրետ վերաբերելի և թույլատրելի ապացույցների հնարավոր ցանկ, որոնցով պատասխանողը կարող էր ստուգել իր հայտնած փաստացի տվյալների իրական կամ ոչ իրական լինելը, փորձում է պարզել, թե դրանցից որով է պատասխանողն առաջնորդվել, իսկ վերջինս խուսափում է կոնկրետ աղբյուր վկայակոչելուց:

¹⁶ Նույնում

Պատասխանողի արտահայտությունը պետք է **կատարված լինի հրապարակա- նորեն**: Այն թե որն է համարվում հրապարակային, Վճռաբեկ դատարանի իր մեկնաբա- նության հիմքում դրած լուծումը տեխնիկական է:

Հրապարակային կարող են համարվել առնվազն մեկ երրորդ¹⁷ անձի ներկայությամբ կատարված արտահայտությունները և ներկայացված փաստերը¹⁸:

Վճռաբեկ դատարանը նաև նշել է, որ արտահայտությունների ներկայացումը հասցեատիրոջը չի կարող համարվել հրապարակային, եթե դրանք ներկայացնող անձը բավականաչափ միջոցներ է ձեռնարկել դրանց գաղտնիությունն ապահովելու ուղղու- թյամբ, որպեսզի դրանք հասանելի չդառնան այլ անձանց¹⁹: Չնայած այս մեկնաբանու- թյան համատեքստում Վճռաբեկ դատարանը չի նշել, թե ով է կրում ապացուցման բեռը, սակայն մրցակցության համատեքստում *կարող ենք ենթադրել, որ դա պատասխանողի ապացուցման բեռն է, որովհետև նրա պաշտպանությանն է ծառայում*:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 5 և 6 մասերում սահմանված են այն դեպքերը, երբ զրպարտությունը համապատասխանաբար բացառվում է կամ ազատվում պատասխանատվությունից²⁰:

¹⁷ Վճռաբեկ դատարանն ի նկատի ունի ոչ թե 1/3 մարդ, այլ մեկ այլ երրորդ անձ:

¹⁸ Նույնում

¹⁹ Նույնում

²⁰ «5. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն, եթե՝

1) դրանք տեղ են գտել մինչդատական կամ դատական վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտությունում կամ ներկայացրած ապացույցներում.

2) դա տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները.

3) այն բխում է զրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթից:

6. Անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպես նաև այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ

Լինելով պատասխանողի պաշտպանության միջոց, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 5 և 6 մասերում նշված կանոնների համատեքստում փաստերի ապացուցման բեռը հավանաբար **պետք է կրի պատասխանողը**: Սրա վերաբերյալ դատական պրակտիկա կամ հստակ մեկնաբանություն բացակայում է: Մյուս կողմից, սակայն, Վճռաբեկ դատարանը զրպարտության կանոնի համատեքստում մատնանշել է, որ փաստացի տվյալների պարզմանն ուղղված գործողությունների առկայության կամ բացակայության փաստը կրում է հայցվորը: Բարեխղճության մասով, հաշվի առնելով, որ դա առնչվում է արատավորելու դիտավորության հանգամանքի հետ, կարծես թե նույնպես հայցվորի վրա դրվող ապացուցման բեռի ծավալում է ներառվում:

Զրպարտության գործերով ապացուցման բեռի բաշխման համատեքստում կարևոր է պարզել, թե պատասխանողը **որ իրավական միջոցի համատեքստում է փորձում կառուցել իր պաշտպանությունը, որպեսզի ապացուցման բեռի բաշխումը համապատասխանորեն իրականացվի**. Նա պնդում է, որ իր հայտնած փաստացի տվյալները իրական են, այսինքն՝ պաշտպանվում է զրպարտության ընդհանուր կանոնի ներքո՝ մասեր 3-4, թե անկախ ճիշտ կամ սխալ լինելուց պաշտպանվում է 5 մասի լույսի ներքո, թե անկախ ճիշտ կամ սխալ լինելուց պաշտպանվում է 6 մասի լույսի ներքո:

Այսպիսով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի համատեքստում ապացուցման բեռի բաշխման հարցը մեկնաբանվել և կոնկրետացվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից: Սակայն դեռևս կան որոշ անորոշություններ կամ բացեր, որոնք հետագա իրավակիրառ պրակտիկայի ընթացքում դեռևս և կոնկրետացման կարիք ունեն:

Արբիտրաժային համաձայնությունը և կիրառելի իրավունքի ընտրությունը ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի և «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի համատեքստում

Մուշեղ Մանուկյան, ի.գ.թ., փաստաբան

Արբիտրաժային համաձայնության վերաբերյալ առնվազն կարող է առաջանալ երեք կողմերի խնդիր. երբ կողմերի միջև առկա է արբիտրաժային համաձայնություն *ո՞ր կողմից նորմերի հիման վրա արբիտրաժային տրիբունալը պետք է որոշի կիրառելի նյութաիրավական իրավունքը*, երկրորդ՝ *ո՞ր իրավունքն է կիրառվում հենց արբիտրաժային համաձայնության նկատմամբ*, և երրորդ՝ *ո՞ր իրավունքը պետք է կիրառվի վեճի էության կամ բուն հարաբերության նկատմամբ*:

ՀՀ օրենսդրության առումով նշված հարցերն առաջացնում են խնդիրներ, քանի որ ներկայիս օրենսդրական կարգավորումը չի ապահովում ոչ լիարժեք լուծումներ: Ներկայումս, երբ արբիտրաժային դատավարությունն առավել մեծ թափերով զարգանում է, այդպիսի ոչ կայուն կողմերի-իրավական կարգավորումը կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ մեր երկրում ոլորտի զարգացման համար: Սույն աշխատանքի շրջանակներում կփորձենք ի հայտ բերել արբիտրաժի ոլորտում *lex voluntatis*-ին վերաբերող ՀՀ օրենսդրության առավել խնդրահարույց դրույթները և կփորձենք տալ դրանց լուծման որոշակի մեթոդներ:

Անդրադառնանք այն հարցին, թե որ կողմից նորմերի հիման վրա արբիտրաժային տրիբունալը պետք է որոշի կիրառելի նյութաիրավական նորմերը:

Օտարերկրյա տարրի մասնակցությամբ քաղաքացիական հարաբերությունները գլխավորապես կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ բաժնի դրույթներով: Ճիշտ է իր հերթին այդպիսի հարաբերություններն ամբողջությամբ և համապատասխան ձևով չեն կարգավորված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կողմից (օրինակ՝ իրավաբանական փաստի առկայությունը չի նախատեսվում 1253-րդ հոդվածում), սակայն սույն աշխատանքում մենք չենք անդրադառնա այդ հարցերին: ՀՀ

Քաղաքացիական օրենսգրքի 1253-րդ հոդվածը սահմանում է, որ օտարերկրյա տարրի մասնակցությամբ իրավական հարաբերությունների նկատմամբ դատարանի կողմից կիրառվելիք իրավունքն որոշվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ՀՀ այլ օրենքների, ՀՀ միջազգային պայմանագրերի և ՀՀ կողմից ճանաչված միջազգային սովորույթների հիման վրա: Չանդրադառնալով այդպիսի ձևակերպման այլ թերություններին՝ նշենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածում նշվում է, որ «դատարան» հասկացության տակ ներառվում է դատարանը, տնտեսական դատարանը կամ արբիտրաժային տրիբունալը:

Հատկանշական է, սակայն, այն, որ վերջին դեպքում կիրառվելիք իրավունքի ընտրության խնդիրը կարող է այլ լինել, քան ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 12-րդ բաժնով սահմանված դեպքերում, քանի որ միջազգային արբիտրաժային պրակտիկայում ընդունված է, որ հենց արբիտրաժային դատարանն է ընտրում այն կիրառելի կոլիզիոն նորմերը, որոնց համաձայն էլ պետք է որոշի կիրառելի նյութաիրավական նորմերը:

Այն կոլիզիոն նորմերի ընտրության որոշումը, համաձայն որոնց՝ պետք է որոշվի կիրառվելիք իրավունքը, կարող է որոշվել մի քանի սկզբունքների հիման վրա: Այսպես, արբիտրաժային տրիբունալը կարող է առաջնորդվել այն պետության/վայրի կոլիզիոն իրավունքով, որտեղ տեղի է ունենում արբիտրաժը, կարող է կիրառել կողմերի կողմից ընտրված իրավունքը՝ հաշվի չառնելով որոշակի կոլիզիոն նորմերի համակարգ, կարող է կիրառել միջազգային առևտրային սովորույթային նորմերը կամ այնպիսի իրավական գործիքներ, ինչպիսիք են ՈՒՆԻԴՐՈՒԱ-այի սկզբունքները և այլ: Այս խնդրից ելնելով ՌԴ Քաղաքացիական օրենսգրքը սահմանում է, որ միջազգային առևտրային արբիտրաժի կողմից կիրառվելիք իրավունքի որոշման առանձնահատկությունները սահմանվում են ՌԴ «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» օրենքով, որը իր հերթին սահմանում է, որ արբիտրաժային տրիբունալը որոշում է վեճը՝ համաձայն կողմերի կողմից ընտրված իրավունքի, իսկ դրա բացակայության դեպքում արբիտրաժային տրիբունալը կիրառում է իրավունքը՝ որոշված համապատասխան այն կոլիզիոն նորմերի, որոնք ինքը կհամարի կիրառելի:

Իհարկե, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը (ուժի մեջ է 2007 թ.-ի փետրվարի 10-ից) նույնպես նախատեսում է, որ արբիտրաժային տրիբունալը վեճերը լուծելիս կիրառում է կողմերի համաձայնությամբ ընտրված իրավունքը, իսկ դրա բացակայության դեպքում՝ կիրառվում է այն իրավունքը, որը որոշված է արբիտրաժային տրիբունալի կողմից կիրառելի համարվող կոլիզիոն նորմերով (հոդված 28): Ակնհայտ է, որ սույն օրենքի և ՀՀ Քաղ. օր.-ի միջև գոյություն ունեն որոշակի անհամապատասխանություն՝ կապված կիրառվելիք իրավունքի որոշման իրավական հիմքերի հետ:

Այսպես, ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է, որ կիրառվելիք իրավունքը որոշվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ՀՀ այլ օրենքների, ՀՀ միջազգային պայմանագրերի և ՀՀ կողմից ճանաչված միջազգային սովորույթների հիման վրա, իսկ նշված օրենքը թույլ է տալիս դատարանին (տվյալ դեպքում արբիտրաժային տրիբունալին) որոշել կիրառվելիք իրավունքն իր կողմից կիրառելի համարվող կոլիզիոն նորմերի հիման վրա, այսինքն՝ պարտադիր չէ, որ այդպիսի կոլիզիոն նորմերը լինեն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում ամրագրված կոլիզիոն նորմերը: Փաստորեն այս դեպքում արբիտրաժային տրիբունալը որոշում է կիրառվելիք իրավունքը՝ «անտեսելով» ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի դրույթները (կոլիզիոն նորմերը), որը, պետք է ընդունել, որ բխում է միջազգային արբիտրաժային պրակտիկայից:

Ակնհայտ է, որ նման հակասությունները օրենքի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի միջև օբյեկտիվորեն լուծվում են հոգուտ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, այսինքն՝ փաստացի արբիտրաժային տրիբունալը, որը գտնում է ՀՀ-ի տարածքում, բոլոր դեպքերում պետք է հիմնվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ՀՀ այլ օրենքների, ՀՀ միջազգային պայմանագրերի և ՀՀ կողմից ճանաչված միջազգային սովորույթների վրա: Այս իրադրությունից ելքը, թերևս, կարելի է փնտրել հետևյալ ձևով. արբիտրաժային տրիբունալը, ինչպես նշվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ՀՀ այլ օրենքների (տվյալ դեպքում՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի), ՀՀ միջազգային պայմանագրերի և ՀՀ կողմից ճանաչված միջազգային սովորույթների հիման վրա կկիրառի «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի

դրույթները, ինչպես նաև գործարար շրջանառության սովորույթները, համաձայն որոնց՝ արբիտրաժային տրիբունալը ինքը կարող է ընտրել այն կոլիգիոն նորմերի համակարգը, որի միջոցով կորոշի կիրառվելիք իրավունքը: Այսպիսով, կարելի է առաջնորդվել այն մոտեցմամբ, որ, կիրառելով «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը, որտեղ սահմանվում է ցանկացած կոլիգիոն նորմեր ընտրելու տրիբունալի հնարավորություն, տրիբունալը արդեն իսկ հիմնվում է ՀՀ օրենքների վրա: Սակայն այս դեպքում ևս հարց է առաջանում, ի՞նչ իրավական հիմքերի վրա արբիտրաժային տրիբունալը չի կիրառում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում տեղ գտած կոլիգիոն նորմերը, եթե ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը անմիջականորեն նշում է, որ կիրառվելիք իրավունքը որոշվում է այդ թվում նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հիման վրա, որը իր հերթին բացառություն չի նախատեսում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի կիրառելի կոլիգիոն նորմերի չկիրառման համար: Հասկանալի է, որ այս իրադրության, թերևս, առավել ընդունելի կոլիգիոն-իրավական լուծումը կլիներ այն, որ համապատասխան փոփոխություն կատարվեն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում և նախատեսվեր, որ միջազգային առևտրային արբիտրաժի կողմից կիրառվելիք իրավունքի որոշման առանձնահատկությունները սահմանվում են համապատասխան օրենքով: Իհարկե, այլ խնդիր է, թե որ օրենքով այդպիսի առանձնահատկությունները պետք է սահմանվեն՝ «Առևտրային արբիտրաժի մասին» գործող օրենքով, թե միջազգային առևտրային արբիտրաժի մասին առանձին օրենքով:

Անդրադառնանք այն հարցին, **թե ո՞ր իրավունքն է կիրառվում արբիտրաժային համաձայնության նկատմամբ:** Պետք է նշել, որ միջազգային արբիտրաժային պրակտիկայում արդեն ամրապնդվել է այն կոնցեպցիան, որ արբիտրաժային համաձայնությունը, անգամ եթե այն ներառված է հիմնական պայմանագրում, հանդիսանում է անկախ և առանձին պայմանագիր և շատ դեպքերում այդ կապակցությամբ նշվում է, որ արբիտրաժային համաձայնությունը ղեկավարվում է ոչ թե կոնկրետ ներպետական օրենսդրությամբ, այլ միջազգային առևտրային սովորույթներով և կողմերի համաձայնությամբ՝ իհարկե պահպանելով միջազգային հանրային կարգի կանոնները: Հասկանալի է, որ եթե կիրառելի իրավունքի համաձայն պայմանագիրը համարվում է

անվավեր, ապա չի ենթադրվում, որ արբիտրաժային համաձայնությունը ևս կհամարվի անվավեր: Այդ մասին նաև նշվում է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածում. «պայմանագրի ուժը կորցրած լինելու վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի որոշումը չի հանգեցնում արբիտրաժային վերապահման անվավերության»:

Պրակտիկայում քիչ են հանդիպում դեպքեր, երբ կողմերը ընտրում են մեկ կիրառելի իրավունք բուն պայմանագրի նկատմամբ, իսկ մեկ այլ՝ արբիտրաժային համաձայնության: Եթե կողմերը իրենց համաձայնությամբ սահմանել են, որ պայմանագրի և դրանից ծագող բոլոր հարցերի նկատմամբ կիրառվում է X պետության իրավունքը, ապա ըստ էության պետք է ենթադրվի, որ արբիտրաժային համաձայնության նկատմամբ ևս պետք է կիրառել այդ իրավունքը, սակայն, ինչպես արդեն նշեցինք, նման պրակտիկայից գոյություն ունեն որոշակի բացառություններ, որոնք պայմանավորված են արբիտրաժային համաձայնության՝ որպես յուրահատուկ պայմանագրի առանձնահատկություններով: Սույն մոտեցումը նաև կիրառված է 1958 թ.-ի Նյու-Յորքի կոնվենցիայի 5-րդ հոդվածի առաջին մասի *ա) կետում, որը սահմանում է, որ արբիտրաժային որոշումը կարող է անվավեր ճանաչվել, երբ կողմերը, համաձայն նրանց նկատմամբ կիրառելի իրավունքի, որևէ ձևով անգործունակ են եղել, կամ արբիտրաժային համաձայնությունն անվավեր է ըստ այն իրավունքի, որին կողմերը ենթարկել են այդ համաձայնությունը, իսկ այդպիսի ցուցումի բացակայության դեպքում, ըստ այն երկրի իրավունքի, որտեղ կայացվել է արբիտրաժային որոշումը:*

Ինչպես նշվեց, արբիտրաժային համաձայնություն մյուս խնդիրը **կապված է հենց դրանով որոշված կիրառելի իրավունքի ընտրությանը:** Lex voluntaris-ը նախատեսված է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում, որի 28-րդ հոդվածում նշվում է, որ արբիտրաժային տրիբունալը վեճերը լուծելիս կիրառում է կողմերի համաձայնությամբ ընտրված իրավունքի նորմերը: Սույն հոդվածի իմաստով կարևորագույն հարց է երևան գալիս՝ կապված կողմերի՝ կիրառելի իրավունքի վերաբերյալ ընտրության ազատության հետ:

Այսպես, քանի որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը չի հստակեցնում ու չի էլ սահմանափակվում նրանով, որ տվյալ օրենքի գործողությունը տարածվում է

միայն միջազգային արբիտրաժի վրա, ուստի օրենքը կիրառվում է նաև ներպետական արբիտրաժի, այսինքն՝ երկու հայաստանյան կողմերի միջև արբիտրաժի նկատմամբ: Հետևաբար, հարց է առաջանում, թե *արդյո՞ք երկու հայկական կողմերը, որոնք, օգտվելով օրենքով սահմանված իրենց լիազորությունից, հանձնել են իրենց վեճերը (օրինակ՝ պայմանագրային վեճը) արբիտրաժային տրիբունալի իրավասությանը, կարող են ընտրել այլ կիրառելի իրավունքը, քան ՀՀ իրավունքը, եթե իրենց միջև իրավահարաբերություններում առկա չէ որևէ օտարերկրյա տարր:*

Բնական է, որ եթե առկա են երկու հայկական կողմեր, սակայն նրանց իրավահարաբերությունը ներառում է որևէ օտարերկրյա տարր՝ իրավաբանական փաստը կամ իրավունքների օբյեկտը գտնվում է ՀՀ սահմաններից դուրս, ապա միջազգային մասնավոր իրավունքն ենթակա է կիրառման: Այդպիսի կիրառման հետևանքով արբիտրաժային տրիբունալի որոշման հիման վրա կարող են գործի դրվել ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 12-րդ բաժնի նորմերը, իսկ մասնավորապես՝ 1284 հոդվածի դրույթները, որոնց ուժով կողմերը ազատ են ընտրել իրենց հարաբերությունների նկատմամբ կիրառելի իրավունքը: Որոշ իրավաբաններ գտնում են նաև, որ արբիտրաժային դատավարության առանձնահատկությունից ելնելով՝ կողմերը պետք է հնարավորություն ունեն ընտրել իրենց հարաբերությունների նկատմամբ կիրառվող ցանկացած օտարերկրյա իրավունք, անգամ եթե կողմերը ներկայացնում են միայն ՀՀ-ն, իսկ նրանց իրավահարաբերություններում առկա չէ որևէ օտարերկրյա տարր: Մենք չենք կիսում նման կարծիքները: Չի կարելի գտնել որևէ լուրջ իրավական հիմնավորում, որը կստիպի անտեսել ՀՀ օրենսդրությունը և փոխարենը կիրառել օտարերկրյա իրավունքը, անգամ եթե կողմերը համաձայնել են: Նման մոտեցումը կհակասի ՀՀ հանրային կարգին:

Պետք է միշտ հաշվի առնել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում տեղ գտած *lex voluntaris*-ը վերաբերում է օտարերկրյա տարրի մասնակցությամբ իրավահարաբերություններին, այլ ոչ բացառապես ՀՀ կողմերի: Եթե մենք կիրառենք այնպիսի մոտեցում, որ կողմերի ազատությունը արբիտրաժում կարող է կրել բացարձակ բնույթ, ապա կբախվենք ՀՀ օրենսդրության գործողությունից խուսափելու ակնառու դեպքերի, որը չպետք է ընդունել: Եվ մանավանդ որ ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը

չի նախատեսում որևէ նորմ, համաձայն որի՝ կարելի է միայն արբիտրաժի գոյության ուժով չկիրառել ՀՀ օրենսդրությունը: Թերևս, բացառապես երկու հայաստանյան կողմերի մասնակցությամբ հարաբերությունների նկատմամբ օտարերկրյա իրավունքի կիրառելիության միակ դեպքը կարող է լինել այն, որ հիմք կընդունվի ՀՀ օրենսդրության բոլոր իմպերատիվ նորմերը, իսկ այն մասերում, որտեղ սահմանված են դիսպոզիտիվ նորմեր, այդ թվում՝ «կողմերի համաձայնությամբ այլ բան սահմանված լինելու հանգամանքը», կիրառել օտարերկրյա իրավունքի համապատասխան նորմերը: Սակայն այդ դեպքում երևան կգան այնպիսի անհամապատասխանություններ, կոլիզիաներ, իսկ նվազագույնը՝ օրենսդրական անհամապատասխանությունների խրթին լուծումներ, որ այդպիսի կիրառելիությունից պետք է հենց սկզբից հրաժարվել: Ըստ էության սույն խնդիրը մեր օրենսդրության շրջանակներում առաջ է եկել հենց «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի մշակման ժամանակ, որը իր բնույթով կառուցվել է ՈՒՆՍԻՏՐԱԼ-ի միջազգային առևտրային արբիտրաժի մասին տիպային օրենքի թարգմանության վրա: Սակայն հաշվի չի առնվել, որ տիպային օրենքը, այդ թվում նաև դրա հոդված 28-ը (վեճի էության նկատմամբ կիրառվող նորմերը), որը նույնությամբ կրկնվում է մեր օրենքի 28-րդ հոդվածում, վերաբերում է միայն ու միայն միջազգային առևտրային արբիտրաժին: Իզուր չէ, որ շատ երկրների պրակտիկան հանգում է նրան, որ առանձին օրենքներ են մշակում ներպետական արբիտրաժի և միջազգային արբիտրաժի վերաբերյալ: Այսպես, ՌԴ-ում այս ոլորտը նախ կարգավորված է «Արբիտրաժային դատարանների մասին» օրենքով (Закон “О третейских судах”), որը վերաբերում է ՌԴ-ում իրականացվող ներպետական արբիտրաժին, և «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» օրենքով (Закон “О международном коммерческом арбитраже”), որը կարգավորում է միջազգային առևտրային արբիտրաժի հետ կապված հարաբերությունները՝ անկախ նրանից արբիտրաժը տեղի է ունենում ՌԴ-ում, թե արտերկրում:

Այս իրադրության հետ կապված, թերևս, լուծում կգտնվի, եթե արբիտրաժի հետ կապված համապատասխան հարաբերությունների կարգավորումը տարանջատվի երկու հիմնական ուղղությունների՝ ներպետական և միջազգային: Այլընտրանքային տարբերակ կլինի նաև այն, որ ներկայիս գործող «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում

հստակորեն սահմանվի այն դրույթները, որոնք վերաբերում են ներպետական արբիտրաժին, և նրանք, որ վերաբերում են միջազգային առևտրային արբիտրաժին: Ընդ որում, հստակ պետք է սահմանել «միջազգային առևտրային արբիտրաժ» եզրույթի իրավաբանական նշանակությունը՝ հիմք ընդունելով ՈՒՆՍԻՏՐԱԼ-ի միջազգային առևտրային արբիտրաժի մասին տիպային օրենքը: Սակայն նշված փոփոխությունների հիմքում, անշուշտ, պետք է դրված լինի ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 12-րդ բաժնի համակարգային փոփոխությունները, որոնք ինքնին կսահմանեն արբիտրաժային գործընթացի, մասնավորապես, արբիտրաժում կիրառելի իրավունքի ընտրության առանձնահատկությունները:

Դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ վերաքննիչ քաղաքացիական դատարանի լիազորության կիրառման իրավաչափության պայմանները

Հայկ Սարգսյան, ասպիրանտ
Վահագն Գրիգորյան, ասպիրանտ,
փաստաբան

«Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Վերաքննիչ դատարանին նման լիազորության տրամադրման նպատակն է դատական անվերջ շրջապտույտների կանխումը և դատական քննության՝ ողջամիտ ժամկետներում իրականացումը:¹

Անդրադառնալով այս լիազորության բնույթին՝ նշենք, որ թեև «Սահմանադրական դատարանը իր 22.09.2009թ. թիվ ՍԴՈ-832 որոշմամբ վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտի բեկանումը և փոփոխումը սահմանադրական իրավունքի տեսակետից համարել է նրա հայեցողական լիազորությունը, ինչը ենթադրում է, որ վերաքննիչ դատարանի այս լիազորությունը ևս հայեցողական բնույթ ունի, սակայն մեր համոզմամբ այս լիազորությունը օրենսդրական կարգավորումների արդյունքում հայեցողական բնույթ չունի, քանի որ՝

¹ Նման դիրքորոշում է հայտնել «Սահմանադրական դատարանը՝ իր 22.09.2009թ. թիվ ՍԴՈ-832 որոշմամբ: Թեև «Սահմանադրական դատարանի՝ վերը նշված դիրքորոշումը վերաբերել է «Վճռաբեկ դատարանի համանման լիազորությանը, սակայն դրա վերաբերյալ արտահայտված տեսակետն ըստ էության կիրառելի է նաև վերաքննիչ դատարանի դեպքում:

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը օգտագործում է «մասնակիորեն բեկանում և փոփոխում է», այլ ոչ թե՛ «կարող է մասնակիորեն բեկանել և փոփոխել» արտահայտությունը,

- տվյալ լիազորության չկիրառումը՝ դրա կիրառման իրավաչափության պայմանների առկայության դեպքում նույնպիսի օրենքի խախտում է, որքան այդ լիազորության կիրառումը՝ դրա կիրառման իրավաչափության պայմանների բացակայության դեպքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետն իր մեջ արդեն պարունակում է այս **լիազորության իրավաչափ կիրառման պայմանները**: Դրանք են՝

1. առաջին ատյանի դատարանի կայացրած վճռով հաստատած փաստերը պետք է առանձին վերցրած բավարար լինեն վճիռը բեկանելու և փոփոխելու համար:

2. Վճռի բեկանումը և փոփոխումը պետք է բխի արդարադատության արդյունավետության շահերից: «Արդարադատության արդյունավետության շահ» հասկացությունը բավարար չափով բացահայտված չէ, սակայն այն որոշակիորեն կարելի է կապել գործի քննության ողջամիտ ժամկետի գաղափարի և դատավարական խնայողության սկզբունքի հետ:

3. Լիազորության կիրառման արդյունքում առաջին ատյանի դատարանի վճիռը պետք է փոփոխվի ոչ թե ամբողջությամբ, այլ՝ մասնակիորեն: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը խոսում է դատական ակտը մասնակի բեկանելու և փոփոխելու (այլ ոչ թե լրիվ բեկանելու և փոփոխելու կամ ընդհանրապես բեկանելու և փոփոխելու) հնարավորության մասին:

Այսպիսով, վերը նշված ընդհանուր բնույթի դատողություններից արդեն կարող ենք կատարել որոշ մասնավոր եզրահանգումներ: *Դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունը կարող է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կիրառվել ստորև վերլուծված բոլորհետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում:*

Այսպես, որպես **առաջին տարր** պետք է նշել այն հանգամանքը, երբ առաջին ատյանի **դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը կայանում է ճիշտ հաստատված փաստերի նկատմամբ նյութական նորմերի սխալ կիրառման մեջ**: Եթե փորձենք թվարկել առաջին ատյանի դատարանի կողմից առավել հաճախակի թույլ տրվող սխալները, որոնք ընկած են քաղաքացիական գործի սխալ լուծման հիմքում, ապա կտեսնենք, որ դրանք հետևյալն են՝

- ապացուցման առարկայի սխալ որոշում, որի հիմքում որպես կանոն ընկած է նյութական նորմի սխալ կիրառումը կամ մեկնաբանությունը,
- ապացուցման պարտականության սխալ բաշխում, որի հիմքում որպես կանոն ընկած է դատավարական (որոշ դեպքերում նաև՝ նյութական) նորմի սխալ մեկնաբանությունը կամ կիրառումը,
- թույլատրելի և վերաբերելի ապացույցների զանգվածի սխալ որոշում, որի հիմքում կարող է ընկած լինել թե՛ նյութական, թե՛ դատավարական նորմերի սխալ կիրառությունը կամ մեկնաբանությունը
- ապացույցների սխալ գնահատում, որի հիմքում ընկած է դատավարական նորմի սխալ կիրառումը կամ մեկնաբանությունը,
- հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ սխալ իրավանորմի կիրառում կամ իրավանորմերի սխալ մեկնաբանությամբ կիրառում (կիրառելի իրավանորմերի սխալ որոշում):

Մեր կարծիքով, դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորության կիրառումն իրավաչափ կարող է դիտվել միայն այն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել բացառապես ճիշտ հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ ոչ ճիշտ իրավանորմի կիրառման կամ իրավանորմի ոչ ճիշտ մեկնաբանությամբ կիրառման հետ կապված սխալ:

Սա ենթադրում է, որ դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորության կիրառումն իրավաչափ կարող է դիտվել այն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանը ճիշտ է որոշել ապացուցման առարկան, ճիշտ է բաշխել ապացուցման պարտականությունը, ճիշտ է որոշել թույլատրելի և վերաբերելի ապացույցների ծավալը և ճիշտ է գնահատել դրանք:

Միայն վերը նշված հարցերի ճիշտ լուծման դեպքում կարելի է խոսել ճիշտ հաստատված փաստերի շրջանակի մասին: Միևնույն ժամանակ, չի կարելի խոսել ճիշտ հաստատված փաստերի շրջանակի մասին, եթե դատարանը թույլ է տվել վերը նշված սխալներից թեկուզ որևէ մեկը, քանի որ դրանք գրեթե անխուսափելիորեն հանգեցնելու են հաստատված փաստերի շրջանակի սխալ որոշման (սխալ փաստերի հաստատման):

Եթե ամփոփենք վերը ասվածը՝ կարող ենք սահմանել, որ դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունը կարելի է կիրառել միայն և բացառապես իրավական բնույթի սխալի առկայության դեպքում, այն էլ խիստ որոշակի տիպի սխալի:

Վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտի բեկանումը և փոփոխումը թույլատրելի է բացառապես առաջին ատյանի դատարանի կողմից ճիշտ հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ սխալ նյութական նորմի կիրառման կամ նյութական նորմի սխալ մեկնաբանության դեպքում:²

Սա խիստ սահմանափակում է տվյալ լիազորության կիրառման հնարավորությունը, քանի որ դրա համար անհրաժեշտ է, որ՝

- դատարանը նախնական դատական նիստում ճիշտ որոշի կիրառելի իրավունքը և դրա հիման վրա ճիշտ որոշի ապացուցման առարկան³ (առանց ճիշտ որոշված ապացուցման առարկայի, չենք կարող խոսել նաև ճիշտ հաստատված փաստերի մասին),
- վճռի կայացման փուլում արդեն թույլ տա կիրառելի իրավունքի որոշման կամ օրենքի մեկնաբանման հետ կապված սխալ:

² Նույնը

³ Թեև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ապացուցման առարկան որոշվում է գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, սակայն մեր կարծիքով ապացուցման առարկան ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է ոչ միայն լսել կողմերի պահանջները և առարկությունները, այլ նաև՝ ճիշտ որոշել կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմը, քանի որ գործի լուծման համար արժեք ունեցող փաստերի շրջանակն ի վերջո բխեցվում է կիրառման ենթակա նյութական նորմի դիսպոզիցիայից:

Չենք կարող չհամաձայնվել այն մտքի հետ, որ վերը նշված իրավիճակը կարող է գործնականում հանդիպել եզակի դեպքերում:⁴

Բացի դրանից, վերաքննիչ դատարանի՝ դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունը վերաբերում է այն դեպքերին, երբ դատարանի վճռի պատճառաբանական և եզրափակիչ մասերը միմյանց հետ փոխադարձ տրամաբանական կապի մեջ չեն գտնվում, այլ կերպ ասած՝ վճռի եզրափակիչ մասը հակասում է նույն վճռի պատճառաբանական մասին:⁵

Անգամ վերը նշված իրավիճակներում վճռի բեկանումը և փոփոխումը վերաքննիչ դատարանի կողմից **թույլատրելի է ոչ թե բոլոր, այլ՝ միայն այն դեպքերում, երբ դա պահանջում է արդարադատության արդյունավետության շահը:**⁶

Թեև «արդարադատության արդյունավետության շահ» հասկացությունը բավականին լայն կարելի է մեկնաբանել, սակայն այդ հասկացությունը օրենսդրության մեջ բացահայտված չէ: Սա թույլ է տալիս վերաքննիչ դատարանին յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշել այդ շահի առկայությունը կամ բացակայությունը՝ ելնելով գործի հանգամանքներից և չունենալով կոնկրետ չափորոշիչներ:

⁴ Որպես կանոն դատարանը, կիրառման ենթակա իրավանորմերը որոշելուց հետո, իր վճռով հաստատում է փաստերի հենց այն շրջանակը, որոնք արժևորվում են տվյալ իրավանորմով, որոնց առկայությունն անհրաժեշտ է այդ իրավանորմերի կիրառման համար: Այսինքն, իրավանորմի սխալ ընտրությունը գործնականում հանգեցնում է սխալ հաստատված փաստերի շրջանակի ընտրության:

Ընդ որում, հնարավոր են դեպքեր, որ գործում առկա ապացույցներով օբյեկտիվորեն հաստատման ենթակա լինի նաև փաստերի այն շրջանակը, որն անհրաժեշտ է ճիշտ իրավանորմը կիրառելու համար, սակայն դատարանը, սխալ որոշելով կիրառման ենթակա իրավանորմը, որպես կանոն նշանակություն չի տալիս ճիշտ իրավանորմի կիրառման համար անհրաժեշտ փաստերին, և վճռով չի համարում դրանք հաստատված:

⁵ Տես Հովհաննիսյան Վ., «Վերաքննիչ դատարանի առարկայական լիազորությունների հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում» // «Դատական իշխանություն», հոկտեմբեր 2012, 10 (159), էջ 41:

⁶ Համեմատության համար նշենք, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերը սահմանում են, որ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որպես ընդհանուր կանոն բեկանում և փոփոխում է ՀՀ վարչական դատարանի, իսկ էական խախտումների և արդարադատության արդյունավետության շահի առկայության դեպքում բեկանում է ՀՀ վարչական դատարանի վճիռը և գործն ուղարկում է նոր քննության:

Մեր կարծիքով, այդ չափորոշիչները պետք է լինեն հետևյալը՝

- պետք է դիտարկվի գործի քննության ողջամիտ ժամկետները և դատավարական խնայողության սկզբունքը պահպանելու անհրաժեշտությունը (ընդ որում, գործի քննության ողջամիտ ժամկետները պետք է դիտարկվեն ՀՀ-ում քաղաքացիական գործերի քննության միջինացված ժամկետի հետ համեմատության մեջ, իսկ դատավարական խնայողության սկզբունքը պահպանելու անհրաժեշտությունը որպես արդարադատության արդյունավետության շահի առկա-յության հիմնավորում, կարելի է վկայակոչել միայն այնպիսի գործերով, որոնց քննությունը յուրաքանչյուր ատյանում անհամաչափ ծախսեր է առաջացնում դատարանի կամ գործին մասնակցող անձանց համար),

- պետք է դիտարկվեն գործի քննությունը ձգձգելու հետևանքով գործին մասնակցող անձանց համար տեսականորեն առաջանալիք ծանր հետևանքները⁷ (վճիռը բեկանելու և փոփոխելու տեսանկյունից արդարադատության արդյունավետության շահը առկա կլինի այնտեղ, որտեղ գործի քննության երկարաձգումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել գործին մասնակցող անձանց կամ նրանցից որևէ մեկի համար):

Անգամ վերը նշված երկու պայմանների առկայության դեպքում (արդարադատության արդյունավետության շահի առկայություն և լիազորության կիրառման համար առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստերի բավարարություն) **դատարանի վճիռը կարող է բեկանվել և առանց գործի նոր քննության փոփոխվել ոչ թե լրիվ այլ մասնակի:**

⁷ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ առաջին ատյանի դատարանի վճիռները բացառիկ դեպքերում կարող են հրապարակման պահից հայտարարվել օրինական ուժի մեջ մտած, եթե դա չանելը անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետևանքներ կողմի համար: Մեր կարծիքով, նույն այս տրամաբանությամբ, ծանր հետևանքների առաջացման հնարավորությունը կարող է հանդիսանալ դատարանի վճիռը վերաքննիչ դատարանի կողմից բեկանելու և փոփոխելու հիմք (արդարադատության շահի առկայության հիմնավորում):

Սա ակնհայտորեն նշանակում է, որ վերաքննիչ դատարանը երբևէ չի կարող փոփոխել առաջին աստիճանի դատարանի վճռի եզրափակիչ մասով սահմանված՝ կողմերի իրավունքների և պարտականությունների ողջ ծավալը, այլ կարող է փոխել դրա մի մասը:

Մեր կարծիքով, «մասնակի բեկանել և փոփոխել» արտահայտությունը վերաքննիչ դատարանին թույլ է տալիս վճռով կողմերի համար սահմանված իրավունքների և պարտականությունների ծավալը փոփոխել՝

- որոշակի իրավունքի և դրան համապատասխանող մյուս կողմի պարտականության ծավալը (քանակական բաղադրիչը) փոփոխելու միջոցով⁸,
- վճռով կողմերի համար սահմանված իրավունքների և պարտականությունների քանակը պակասեցնելու կամ ավելացնելու միջոցով: ⁹

Վերը նշված դատողությունների հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ **վճիռը բեկանելու և փոփոխելու մասին վերաքննիչ դատարանի որոշման եզրափակիչ մասը չի կարող լինել վճռի եզրափակիչ մասի 100 տոկոսանոց հակապատկերը. այն իր մեջ ամեն դեպքում պետք է պարունակի վճռի եզրափակիչ մասով սահմանված իրավունքների և պարտականությունների ծավալի որոշակի տարրեր:**

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը իր այս լիազորությունը կիրառում է առանց համապատասխան հիմքերի առկայության, առանց անհրաժեշտության և առանց ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված սահմանափակումները պահպանելու: Այսպես՝

ա) դատական պրակտիկայում առկա են դեպքերը, երբ դատարանի վճիռը (վճռի եզրափակիչ մասը) վերաքննության արդյունքում բեկանվում և փոփոխվում է ամբողջու-

⁸ Օրինակ՝ եթե վճռվել է պատասխանողից հայցվորի օգտին բռնագանձել 600.000 ՀՀ դրամ, ապա բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում այդ գումարը կարող է ավելանալ կամ պակասել, սակայն գումարի բռնագանձման հայցը չի կարող մերժվել ամբողջությամբ:

⁹ Օրինակ, եթե վճռվել է, որ պատասխանողը պարտավոր է հայցվորի օգտին կատարել երկու գործողություն, ապա բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում այդ գործողությունների թիվը կարող է ավելանալ կամ պակասել, սակայն հայցն ամբողջությամբ մերժվել չի կարող:

թյամբ (մերժված հայցը բավարարվում է կամ հակառակը): Ընդ որում, այս իրավիճակը լրիվ ընդունելի է համարվում նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից:

բ) Դատական պրակտիկայի ուսումնասիրությունից բխում է, որ խիստ ճնշող մեծամասնություն կազմող դեպքերում վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով առաջին ատյանի դատարանի վճիռը, չի հիմնավորում արդարադատության արդյունավետության շահի առկայությունը:¹⁰ Վերաքննիչ դատարանի կողմից սովորաբար վկայակոչվող և ընդհանուր բնույթ ունեցող դատողությունները մեր կարծիքով չեն կարող դիտվել որպես արդարադատության արդյունավետության շահի առկայության հիմնավորում:

Բերենք օրինակներ՝

- «Վերաքննիչ դատարանը եզրակացրեց, որ գործում առկա ապացույցները և դրանցով հաստատվող փաստերը տալիս են հնարավորություն՝ վճիռը բեկանելուց հետո այն փոփոխելու և նոր դատական ակտ կայացնելու, և դա բխում է գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանման ու արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ տվյալ դեպքում հայցի հիմնազուրկ բնույթն ակնհայտ ու անվերականգնելի է, և գործի նոր քննության պարագայում իրավիճակը փոխվել չի կարող»:

- «Այսպիսով, վերը նշված փաստարկների, ինչպես նաև գործով հաստատված հանգամանքների ուսումնասիրման արդյունքում Վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ վերաքննիչ բողոքը պարունակում է բավարար հիմքեր և հիմնավորումներ՝ Դատարանի ... վճիռը բեկանելու համար, իսկ գործով հաստատված փաստական հանգամանքները թույլ են տալիս արդարադատության արդյունավետության շահերից ելնելով կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված դրույթը և դատական ակտը փոփոխել՝ հայցը բավարարել»:

¹⁰ Վերաքննիչ դատարանի կողմից կայացված և մեզ հանդիպած որևէ որոշման մեջ արդարադատության արդյունավետության շահի առկայության վերաբերյալ պատշաճ հիմնավորում առկա չէ: Սակայն քանի որ վերաքննիչ դատարանի կողմից կայացված և առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանող և փոփոխող բոլոր որոշումներին ծանոթանալը գործնականում անհնար է, ուստի տվյալ դեպքում մենք կօգտագործենք «խիստ ճնշող մեծամասնություն կազմող դեպքերում» արտահայտությունը՝ չբացատրելով, սակայն խիստ կասկածի տակ դնելով հակառակի առկայությունը:

Ակնհայտ է, որ նմանատիպ դատողություններ կարելի է կատարել ցանկացած քաղաքացիական գործով: Այս և այլ նմանատիպ այլ անհիմն դատողությունները երբևէ չեն կարող համարվել արդարադատության արդյունավետության շահի առկայության հիմնավորումներ, և այս դատողությունների հիման վրա դատարանի վճռի բեկանումը և փոփոխումը միանշանակ աօպրինի և անհիմն է:

Կարող ենք փաստել, որ **արդարադատության արդյունավետության շահի առկայության չափորոշիչները դատական պրակտիկայում դեռևս մշակված չեն**, ինչն էլ հանգեցնում է վերաքննիչ դատարանի դատական ակտերում այդ շահի առկայության վերաբերյալ պատշաճ հիմնավորումների բացակայությանը:¹¹

գ) Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով առաջին ատյանի դատարանի վճիռը, լրիվ կամ գոնե **մասնակիորեն հիմնվում է իր իսկ կողմից հաստատված փաստերի վրա, որոնց առաջին ատյանի դատարանը նույնիսկ չի էլ անդրադարձել:**

Որպես վերաքննիչ դատարանի՝ միաժամանակ վերը նշված երեք խախտումներով ընդունված որոշումների օրինակներ՝ կարող ենք վկայակոչել թիվ ՏԴ2/0080/02/11 քաղաքացիական գործով 13.07.2012թ. ընդունված որոշումը և թիվ ԵԱՆԴ/1530/02/10 քաղաքացիական գործով 05.05.2011թ. ընդունված որոշումը, սակայն գործնականում նման խախտումներով ընդունված որոշումները բազմաթիվ են, և կարելի է փաստել որ պրակտիկան միանշանակ զարգացել է նշված չափորոշիչները հաշվի չառնելու ուղղությամբ:

Որպես եզրահանգում՝ նշենք, որ վերաքննիչ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտի բեկանումը և փոփոխումը պետք է լինի բացառություն, իսկ ընդհանուր կանոնը պետք է լինի դատական ակտը բեկանելը և հետ ուղարկելը:

¹¹ ՀՀ Սահմանադրական դատարանը իր 22.09.2009թ. թիվ ՍԴՈ-832 որոշմամբ հայտնել է այն դիրքորոշումը, որ իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ արդարադատության արդյունավետության շահի առկայությունը հիմնավորելու պահանջին մի շարք դեպքերում ձևական մոտեցում է ցուցաբերվում: Մինչդեռ դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորության կիրառման իրավաչափությունը կարող է ապահովվել միայն արդարադատության արդյունավետության շահի առկայությունը հիմնավորելու դեպքում:

Որոշ երկրներում գործում է հակառակ կանոնը,¹² սակայն չպետք է մոռանալ, որ նման երկրներում որպես կանոն գործում է լրիվ վերաքննության մոդելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառման խնդիրները կարելի է նվազեցնել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում մի շարք խիստ և հստակ (ոչ ընդհանուր բնույթի) արգելող կանոններ, ինչպես նաև հենց 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին վերաբերող շտկումներ մտցնելու միջոցով: Մասնավորապես՝

- սահմանել, որ վերաքննիչ դատարանը չի կարող կիրառել դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունը, եթե բողոքի քննության արդյունքում եկել է այն եզրահանգման, որ առաջին ատյանի դատարանը սխալ է որոշել ապացուցման առարկան կամ սխալ է բաշխել ապացուցման պարտականությունը,

- սահմանել, որ վերաքննիչ դատարանը չի կարող կիրառել դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունը, եթե կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կամ 4-րդ մասով նախատեսված լիազորություններից որևէ մեկը (որևէ կերպ փոփոխել է առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստերի շրջանակը),

- սահմանել, որ դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորության կիրառման դեպքում, վերաքննիչ դատարանի որոշումը, ի լրումն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածով սահմանված պահանջներին, պետք է պարունակի հիմնավորումներ արդարադատության արդյունավետության շահի առկայության վերաբերյալ,

- 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը» արտահայտությունը փոխարինել

¹² Օրինակ, Մոլդովայի հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի «c» և «d» կետերը սահմանում են, որ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի վճիռը լրիվ կամ մասնակի բեկանելը (վերացնելը) և նոր որոշում ընդունելն ընդհանուր կանոն է, իսկ առաջին ատյանի դատարանի վճիռն ամբողջությամբ բեկանելը և գործը նոր քննության ուղարկելը՝ խիստ բացառիկ և որոշակի դեպքերում կիրառելի լիազորություն:

«մասնակիորեն բեկանում է ստորադաս դատարանի ակտը՝ մասնակի փոփոխելով դրա եզրափակիչ մասը» ձևակերպմամբ:¹³

¹³ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի վճիռը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի ներկա ձևակերպումը թույլ է տալիս պնդել, որ «մասնակիորեն բեկանել և փոփոխել» նշանակում է բեկանել և փոփոխել վճռի մասերից մեկը, օրինակ՝ եզրափակիչ մասը ամբողջությամբ, ինչը ընդունելի չի կարելի համարել: «Մասնակիորեն բեկանել և փոփոխել» արտահայտությամբ օրենսդիրը նկատի է ունեցել, որ այս լիազորությունը կիրառելով՝ վերաքննիչ դատարանը կարող է փոփոխել վճռի եզրափակիչ մասի մի մասը: Համեմատության համար նշենք, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.13 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, որտեղ խոսվում է դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ վարչական վերաքննիչ դատարանի լիազորության մասին, օգտագործում է «ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել և փոփոխել» արտահայտությունը, ինչը նշանակում է, որ, ի տարբերություն ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն ունի վճռի եզրափակիչ մասն ամբողջությամբ բեկանելու և փոփոխելու լիազորություն: